


Հանձնարար

Հարգելի պատրիարք

9(47.925)

S-37

17.1907



9(47.925)

5-37

ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ

5 OCT 2011

ՀԱՄԱՌՈՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Hayk Hayk Terjuman

ՍԿԶԻՑ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Ապրիլ

457

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Փողովրդի ընթերցանության և ծխական դպրոցների համար

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵԼԵԲՏՐԱԶԱՐԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7

1907

(60)

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԲ

Երկու նպատակ թելադրեցին ինձ կազմել այս համառօտ Հայոց պատմութիւնը: Նախ՝ ժողովուրդը իւր ազգի մասին շատ քիչ տեղեկութիւն ունենալով՝ ցանկացայ նորա ձեռքը մի գիրք տալ, որ ծանօթացնէ նորան իւր ազգի անցեալի հետ, վերաբրտադրէ նորա յիշողութեան մէջ իւր նախնիքների փառաւոր գործերը ու ապա նոր սերունդին, դպրոցական ուսանողին յարմարութիւն տալ ուսանել Հայաստան ժողովրդի պատմութիւնը և յիշել, թէ ինչ ազգի սերունդ են նոքա:

Պատմութիւնը սովորեցնում են որպէս մի պարզ հայելի ազգի անցեալի, որպէս զի ուսանողները և ժողովուրդը այդ ծանօթութեամբ բարոյական և գործնական օգուտներ քաղեն: Երբ ուսանողը որոշ զարգացում է ձեռք բերում, նրան ցոյց են տալիս պատմութեան ելեէջները և ուսուցանում պատմութիւնը քննօրէն: Հայոց պատմութիւնը նոր լուսաբանութիւններ ջատ ունի, բայց ես օգտուել եմ միայն այնպիսի լուսաբանութիւններից, որոնք նիւթին անծանօթ անձանց համար կասկածների աշխարհ չեն բանայ և այս իսկ պատճառով ես մէկ կողմն եմ թողնում սեպագիր արձանագրութիւնների տուած նորութիւնները, որովհետեւ պատմական ուսումնասիրութիւնը դեռ իւր վերջին խօսքը չէ ասել նոցա նկատմամբ:



199-2006

Ես խոյս եմ տուել հետևելու դպրոցների կանոնադրութեան նախագծին, որ իմ կարծիքով, շտապ և թերի մի ծրագիր է: Ուսուցիչներն, ըստ իս, առանձին ուշադրութիւն պիտի դարձնեն Հայաստանի հին և նոր աշխարհագրութեան և մասամբ հնախօսութեան վրայ, հարկաւոր դէպքում բացատրեն կրօնի ու հաւատալիքների ծագումը, նախապատմական մարդը, գէնքեր, զօրք, կառավարութիւն: Թուականներից իւրացնել տան գլխաւորները՝ են: Գրքիս քննադատները քննելիս յուսամ թէ անաչառ դատաւոր կլինեն, մի կողմ թողնելով մեր մէջ ծայրայեղութեան գազաթնակէտին հասած կուսակցական հաշիւները: Իսկ ամեն մի անկեղծ խորհուրդ սիրով պիտի ընդունուի մեր կողմից յաջորդ տպագրութեան ժամանակ:

ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ ՀԱՅԿ

1-ն յունիսի 1907

Թիֆլիս.

Պարտք եմ համարում շնորհակալութիւն յայտնել «Եղբ. Միրզոյեանների նախարդիւնաբերական ընկերութեան», որ այս գրքի տպագրութեան համար նպաստ շնորհեց՝ ինձ 100ր. և այդպիսով հնարաւորութիւն տուաւ գրքին էփան գին նշանակելու:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԾՐՋԱՆՆԵՐԸ

Ա. ՀԱՅԿԱԶՈՒՆԻՔ

1. Տանուտէրական նահապետութիւն հայկ-Արամ

2. Զինուորական նահապետութիւն՝ Արամ—Պարոյր:

3. Թաղաւորութիւն՝ Պարոյր—Վահէ:

4. Անիշխանութիւն:

Բ. ԱՐՇԱԿՈՒՆԻՔ.

1. Ազատ թաղաւորութիւն՝ Վաղարշակ—Աբղար:

2. Հարկատու թաղաւորութիւն՝ Աբղար—Արտաշէս Գ:

Գ. ՄԱՐԶՊԱՆՆԵՐ ԵՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ

Դ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ—գրեթէ լիովին հարկատու: Ե. ՌՈՒԲԻՆԵԱՆՔ ԵՒ ԼՈՒՍԻՆԵԱՆՔ.

1. Իշխանապետութիւն՝ Ռուբէն—Լևոն Բ.

2. Թաղաւորութիւն՝ Լևոն—Կոստանդին Գ.

3. Լատինահայ թաղաւորներ:

Զ. ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆԻՔ



✠ ՀԱՅԿ. 2300 թ. Գր. ա.

Նոյ նահապետի որդիքը շատ բազմացան և վախճանում էին, որ նորից ջրհեղեղ կարող է լինել և

ոչնչացնել իրանց, ուստի և հաւաքուեցան Բաբելոնի գաղաւթում ու սկսեցին մի բարձր աշտարակ շինել, որի ծայրը պիտի հասներ մինչև երկինք, որպէսզի եթէ նորից ջրհեղեղ գար, կարող լինէին պատասխա-
րուել նորա մէջ և աղատուել: Աստուած խափանեց մարդկանց այդ շարութիւնը և նրանց լեզուները խառնակեց, որով մէկը միւսին չէր կարողանում հաս-
կանալ: Նրանց մէջ խռովութիւն ընկաւ և սկսեցին մէկը միւսի վրայ բռնանալ, բայց բոլորից քաջ զրա-
նուեց Բէլ անունով մի հսկայ. նա պահանջեց, որ ամենքը իրեն հպատակեն:

Յարէթի որդու Թոռ Հայկը, որ գեղեցկաստեղի, ուժեղ բազումներով մի քաջ մարդ էր, չուզեց հպա-
տակլի Բէլին և իր 300 մարդոց հետ զնաց դէպի հիւսիս ու ալթմեան Վանայ լճի մօտ բնակութիւն հաստատեց: Այնտեղ կային մարդիկ, որոնք ջրհեղե-
ղից յետոյ էին եկել, զորանք հպատակուեցան Հայկին: Հայկը մի զիւղ շինեց Հայկաշէն անունով, իսկ գա-
ւառն անուանեց Հարք:

Երբ Բէլը լսեց որ Հայկը հեռացել է, դեսպան-
ներ ուղարկեց նորա մօտ ասելով. զնացիր ու ցուրտ երկրում բնակուեցար, թող քո սառն հպարտութիւ-
նը, եկ հնազանդիր ինձ և բնակուիր իմ երկրում: Հայկը խիստ պատասխան տուեց դեսպաններին: Բարկացաւ Բէլը և վճռեց պատերազմով նուաճել ըմբոստ Հայկին, բազմութիւ զօրք ժողովեց և զնաց Հայկի դէմ: Հայկը չվախեցաւ, ժողովեց իր սակաւա-

Թիւ մարդոց, դուրս եկաւ կռուելու և իր զինուոր-
ներին ոգևորեց նառով: Պատերազմի ժամանակ
շատ հսկաներ սպանուեցան, Բէլի մարդիկ չէին
կարողանում դիմանալ հայերի կատաղութեանը, իսկ
Բէլը վախենալով ուղեց ետ փախչել որպէս զիսպա-
սէ իր ետ մնացած զօրքին, սակայն Հայկը չթողեց



ՀԱՅԿԻ ՊԱՏԵՐԱԶՄ

նրան փախչելու, յարձակուեցաւ և իր ահագին նետա-
խրեց նորա կրծքի մէջ: Պատերազմից յետոյ Հայկը
Բէլի զիակը մի բարձր աեղ թաղել տուեց, որպէս
զի իր սերունդըր աեանի նախնիքների քաջութիւնը:

Այս յաղթութիւնից յետոյ Հայկը անդորր կեր-

պով կառավարեց հայերին, պատերազմի աեղ նա
Հայք անունով մի քաղաք շինեց, գաւառը Հայոց
Զոր կոչուեց, իսկ Բէլի ընկած տեղը Գերեզմանք:
Նրա անունով մենք Հայ կոչուեցանք, իսկ երկիրը
Հայաստան, Հայկն էլ Հայոց աղբի նախահայր: X

X ՀԱՅԿԻ ՅԱԶՈՐԳՆԵՐԸ

Հայկի մահից յետոյ նորա Արմենակ որդին եղաւ
նահապետ: Սա իր Խոռ և Մանաւաղ եղբայրներին
թողնելով Հարքում՝ մի խումբ մարդոց հետ հիւսիս-
արեւելք դնաց ու մի լեռան մօտ զանաւարտ քաղա-
քում բնակուեց: Այդ լեռուր իր անունից Արազած
կոչուեց, իսկ գաւառը Արազածոտն:

Արմենակի յաջորդ Արամայիս նահապետը Ար-
մաւիւր անունով մի քաղաք շինեց:

Արամայիսից յետոյ իշխել են շատ նահապետներ,
որոնք բնակուել են զանազան կողմերում, ցրուել
բազմացել և քաղաքներ ու գիւղեր շինել: Հայերը նա-
հապետների օրով պարապում էին երկրագործու-
թեամբ ու խաշնարածութեամբ և որովհետեւ նրանց
հարկաւոր էին արօտատեղիներ, շարունակ մէկ աեղից
միւսն էին չլուծ և երբ արգաւանդ ու բարեբեր
երկիր էին հասնում, կանգ էին առնում ու բնակու-
թիւն հաստատում:

Արամայիսն իր շատակեր ու բազմածին Շարա
որդուն մի արգաւանդ երկիր ուղարկեց, որ յետոյ

Շիրակ կոչուեց: Շարայի շատակերութիւնը այնքան ժողովրդականութիւն էր ստացել, որ ասում էին. «Եթէ որկորդ Շարային է, մեր ամբարները Շիրակինը չեն»:

Արամայիսի Հարք գաւառում բնակող եղբայրներից առաջացան Մանաւազեան, Խորխոռունի և Բըզնունի նախարարութիւններ:

Արամայիսին յաջորդեց իր անդրանիկ Ամասիա որդին, որը գէպի հարաւ գնաց, մի բարձր լեռան մօտ եղած դաշտում բնակուեց ու իրար մօտ երկու քաղաք շինեց և իր Փառօխ և Յոլակ որդոց անունով Փառախոտ և Յոլակերտ անուանեց, իսկ լեռը նրա անունով Մասիս կոչուեց:

Ամասիայի Գեղամ որդին բնակութիւն հաստատեց մի ծովակի մօտ և իր անունով գաւառը Գեղարքունիք, իսկ ծովակը Գեղամայ ծով (Սեանայ լիճ) անուանեց: Սորա Սիսակ որդուց առաջացաւ Սիսական կամ Սիւնեաց նախարարութիւն: Գեղամը մի քաղաք շինեց Գեղամի անունով, որ յետոյ Գառնի կոչուեց:

Գեղամի յաջորդ Հարմայի օրով հայերը շատ էին բազմացել և ցրւելով այս ու այն կողմը արդէն բաւական մեծ տարածութեան տէր էին դարձել, որով և միացած կարող էին մրցել հարեան ազգերի հետ, միայն դորանց հարկաւոր էր մի միացնող, որովհետեւ նրանք ստանձին իշխանութիւններ էին կազմում: Այս անգամ հայերը զգացին որ խաշնարածութեան ու երկրագործութեան հետ հարկաւոր է նաև զէնքի զործածութիւնը, որով կարողանային կռուել իրենց սահմանները մտնող թշնամու հետ: Այդ բանը

իրագործեց Հարմայի յաջորդ Արամը և այնուհետև Հայաստանը կառավարուեց զինուորական նահապետներով:

Պատերազմի ժամանակ հայերը զործ էին ածում այն զէնքերը, որ ունէին թշնամիները, այն է վահան պաշտպանուելու համար, գեղարդ, նիզակ, ազնի և տէղ, սակը, ճիկոս, վաղր և պարսաւիք:



X Ա. Ր. Ա. Մ. 1300 թ. Գր. ա.

Արամը բաշ և խելացի մարդ էր: Նա տեսնում էր իր երկրի թշուառութիւնը, որովհետև շրջակայ ազգերը նեղում էին հայերին, ուստի և մտածեց դուրս բշել Հայաստանից բոլոր թշնամիներին: Սորա

համար նա միացրեց բաժան-բաժան եղած հալ հա-
հապեաններին, 50000-ի չափ զօրք ժողովեց, կարգա-
ւորեց, զնւերի բաժանեց և սկսեց վարժել նրանց
զէնքի, իսկ քիչ յետոյ նրանց ղլուխն անցած զիմեց Մա-
րաց Նիւքար-Մաղէս իշխանի վրայ, որ երկու տարի
հայաստանի մէկ մասից հարկ էր վերցնում, յարձակուեց,
զերի բռնեց Նիւքարին ու Արմաւիրի աշտարակի
ծայրին մեխեց նակատից, իսկ Մարաց երկրի այն
մասը, որին տիրել էր պատերազմի ժամանակ՝ Սիւն-
եաց ցեղին յանձնեց:

Այս չաջողութիւնից յետոյ Արամը ասորոց Բարշամ
իշխանի վրայ յարձակուեց, որովհետեւ նա հայասա-
նի հարաւային մասը ոտի տակ էր տուել: Սորան
էլ յաղթեց և Բարշամը սպանուեց պատերազմում:

Այժմ մնում էր Արեւմտեան թշնամին՝ Պալապիս
Քաղեա իշխանը և Արամը նրան Միջերկրական ծովի
կղզիներից մէկը փախցրեց, նրա երկրին էլ տիրեց:
Այս նոր երկիրը Փոքր Հայք կոչուեց: Արամը ա-
րեւմուտքից երեւացող թշնամիներից ապահով մնալու
համար Մշակ անունով մէկին կուսակալ նշանակեց,
նրան զօրք տուեց և հրամայեց որ բնակիչները հա-
յերէն խօսեն: Մշակը մի քաղաք հիմնեց Մշակ ա-
նունով, սակայն տեղացիները չկարողանալով արտա-
սանել՝ Մաժաք էին ասում (յետոյ Կեսարիա):

Ասորեստանի Նինոս թագաւորը զայրացած էր
Արամի վերայ և ուզում էր իր նախահօր Բէլի մահուան
վրէժը լուծել, սակայն լսելով Արամի քաջութիւնների

մասին, բարդեկամացաւ նրա հետ և մարդարտադարձ
պսակ ուղարկեց բնծայ:

Արամը մօտ 50 տարի իշխեց և երկիրը մաքրեց
թշնամիներից, որի համար շատ հռչակուեց: Օտար-
ները մեզ նանաչեցին Արամի օրով և նրա անունով
երկիրը Արմենիա կոչեցին, իսկ հայերիս արմէն:



ԱՐԱՅ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՆՈՐԱ ՅԱԶՈՐԴԵՆԵՐԸ

Արամին յաջորդեց իր որդի գեղեցկաւէմ Արայ:

Ասորեստանի Նինոս թագաւորը մեռնելով իշխանութիւնը նրա կնոջ Շամիրամին անցաւ: Շամիրամը լսելով Արայի գեղեցկութիւնը, ուզեց ամուսնանալ նրա հետ և առաջարկեց Ասորեստանի թագը: Արան ամուսնացած էր Նուարդ անունով հայ իշխանուհու հետ և չուզեց զաւանճանել ուստի մերժեց Շամիրամի առաջարկը: Շամիրամը մտքովը դրաւ բռնութեամբ ամուսնանալ և մեծ զօրքով հայաստան մտաւ: Արան իր պատիւը պաշտպանելու համար զուրս եկաւ պատերազմելու: Շամիրամը պատուիրել էր զօրքին չսպանել Արային և գերել, բայց պատերազմում հայերը չաղթուեցան, իսկ Արան սպանուեց: Շամիրամը ուզում էր կենդանացնել Արային և նրա զիակը մի բարձր տեղ դրեց, որպէսզի աստուածները լիզեն և կենդանացնեն, բայց զիակը նետել սկսաւ, հրամայեց հայերից գաղտնի թաղել:

Արայի անունով հայաստանի ամենամեծ նահանգը Արարատ կոչուեց:

Շամիրամը հաւանելով հայաստանի օգն ու շուրք, մի գեղեցիկ քաղաք շինեց Բղնունեաց ծովի ափին Շամիրամակերտ անունով, որտեղ նա անց էր կացնում ամառները:

Արայի մահով հայերը շատ վշտացան և ասորեստանցոց բռնութիւնից ազատուելու համար պատերազմի պատրաստուեցան, բայց խորամանկ թագուհին Արայի Կարգոս որդուն հայաստանի իշխան նշանակեց և հայերին էլ խաբեց, թէ աստուածները

կենդանացրին Արային ու իւր մօտ է պահում:

Շամիրամը իւր Նինուսս որդու գէժ պատերազմելով՝ Կարգոսին օգնութեան կանչեց և Կարգոսը սպանուեցաւ կռուի ժամանակ: X



ԿԱՐԴՈՍ ԵՒ ՇԱՄԻՐԱՄ

Կարգոսի Անուշաւան որդին, որ Արմաւիրի մօտ

եղած Սօսեաց անտառին էին նուիրել ծնած ժամանակը և Սօս էր կոչուում, Նինուասի մօտ գերի էր, ու իր քաղցր բնաւորութեամբ շահեց Նինուասի սիրտը և



ՊԱՐՈՅՐ ԹԱԳԱԿԻՐ 620 Թ. Ք. ա.

Հայաստանի իշխան դարձաւ: Անուշաւանը անորդի մեռաւ, իսկ իշխանութեան ղեկն անցաւ միւս Հայկազունիների ձեռքը՝ իշխան եղաւ Պարէտ որից յետոյ

մինչև Սկայորդի 27 իշխաններ են եղել: Սորանցից նշանաւոր է Զարմայր իշխանը, որ ասորեստանցոց Տևտամոս Թագաւորին օգնութեան գնաց Հելլէնների դէմ ու Տրոյա քաղաքի մօտ քաջութեամբ կռուելով մեռաւ: Սկայորդի նահապետի օրով Ասորեստանի Սենեքերիմ Թագաւորի որդիք Ադրամելիք և Սանասար իրենց հօրը սպանեցին և Հայաստան փախան: Սկայորդին պատուով ընդունեց նրանց և բնակութեան տեղ տուեց: Սոցանից առաջացան Արծրունի և Գնունի նախարարութիւնները:

ՊԱՐՈՅՐ ԹԱԳԱԿԻՐ 620 Թ. Ք. ա.

Արալի մահից յետոյ Հայաստանն իր անկախութիւնը կորցնելով Ասորեստանին հպատակուեց: Մարաց Կիաքսար Ա. Թագաւորը պատերազմ հրատարակելով Ասորեստանցոց դէմ Հայոց Պարոյր նահապետին օգնութեան կանչեց: Պարոյրը հպատակութեան լուծը Թօթափելու համար մարաց հետ միացած զինեց Ասորեստանի Սարգանաբաղ Թագաւորի դէմ: Ասորեստանցիք յաղթուեցան, մայրաքաղաք Նուենէն կործանեցին, իսկ Սարգանաբաղը թշնամու ձեռքը չընկնելու համար իր կանանց հետ այրուեց:

Կիաքսարը այս յաջողութեան համար Պարոյրին Թաղով պսակեց և նա առաջին հայ Թագաւոր եղաւ, 620 թ.:

Պարոյրի յաջորդ-որդի Հրաչեան բարեկացոց Թագաւորի հետ երդուադէմն առաւ, Շամբաթ ա-

589-2006²

նունով հրէայ իշխանին զերի բերեց Հայաստան: Շամ-
խաթից Բաղրատունիք առաջացան:

Հրաչեայի յաջորդների մասին մինչև Տիգրան Ա.
ռչինչ չգիտենք, իսկ Տիգրանի հայր Երուանդ Թա-
ղաւորը քիչ ժամանակ Թաղաւորելու համար Սա-
կաւակեաց է կոչւում:

ՏԻԳՐԱՆ Ա.

Մ Տիգրանը քաջ ու խելացի Թաղաւոր եղաւ և
նրա օրով երկիրը ծաղկեց: Իր երկրի սահմանները
ընդարձակեց և փոքր Ասիոյ մէկ մասին տիրեց:

Բայց նրա զխաւոր հոգսը երկրի անտեսական
բարեկաւումն էր, որի համար և հրամայեց մշակել
ազատ գաշտերը և երկրում անմշակ տեղ չը
մնաց, արհեստներն ու երկրագործութիւնը յառա-
ջադիմեցին, զետերի մէջ նաւազնացութիւն սկսուեց:
Հայերը փոխանակութեան առւտուր սկսեցին Քա-
նանացոյց երկրի հետ, որտեղից որդան կարծիր ու
դունաւոր մորթ—կաշի էին բերում, իսկ Հայաստանից
էլ արտահանում էին երկաթ, պղպատ և նժոյգ-
ներ: Հայաստան էին դալիս նաև փիւնիկեցի վաճա-
ռականները կարաւաններով:

Նաւային առւտուրը կատարւում էր զետերի
միջոցով, ուսեհու ճիւղերով շրջապատուած նաւերը
մորթիներով պատած ջրի ընթացքով ապրանք էին
տանում: Սովորաբար նաւերի մէջ վաճառականները
տանում էին և մի քանի էջ և երբ հասնում էին վա-
ճառաշահ քաղաքները, ծախում էին ապրանքը, նաւը,

իսկ մորթերն ու տեղական ապրանքը զետի ափե-
րով ետ բերում:

Տիգրանի օրով զարգացան և ոստայնանկու-
թիւնը, դարբնութիւնը և զինագործութիւնը:



ՏԻԳՐԱՆ Ա. 570 թ. Ք. ա.

Հայ երգիչները շարունակ զովում էին Տիգրա-
նին իրենց երգերում: Տիգրանը բարեկամացաւ Պար-

սից Կիւրոս թագաւորի հետ և այդ բանը մեծ անհանգստութիւն պատճառեց Մարաց Աժդահակ թագաւորին, որի համար և Աժդահակը մտածում էր մի կերպ սպանել Տիգրանին: Այս կասկածների ժամանակ Աժդահակը երազ տեսաւ և պատմեց իր խորհրդականներին. «գնացել էի մի անձանօթ երկիր, պատմեց նա, որ Հայաստան պիտի լինի. այնտեղ մի լեռան վրայ մի կին երեք մարդ ծնաւ, որոնցից մէկը առիւծի վրայ արեւմուտք արշաւեց, միւսը ծիւղ վրայ հիւսիս, իսկ երրորդն անագին վիշապի վրայ մեր տէրութեան վրայ յարձակուեց: Այդ ժամանակ ես կռուքերին զոհ էի մատուցանում, իսկ նա ուղեց կռուքերս կործանել և ես սկսեցի կռուել, բայց սպանուեցի և կարծում եմ որ Տիգրանը պիտի յարձակուի մեզ վրայ»:

Խորհրդականները մեկնեցին, որ յարձակուողը Տիգրանը պիտի լինի և Աժդահակը խորամանկութեամբ ամուսնացաւ Տիգրանի Տիգրանուհի քրոջ հետ, որին Տիգրանը մեծ պատուով Աժդահակին զրկեց: Աժդահակը նոյնպէս մեծ հանդիսով ընդունեց և հրամայեց որ ամենքը հնազանդին նրան, իսկ քիչ ժամանակից յետոյ սկսեց զրդուել Տիգրանուհուն ասելով որ Տիգրանի կին Զարուհին ուղղւած է նրա ձեռքիցը Մարաց աիկնութիւնը խլել և թէ Տիգրանն էլ վճուել է իրեն սպանել, որից աղատուելու համար պիտի մի կերպ սպանել Տիգրանին:

Տիգրանուհին երեսանց հուսանութիւն տալով Աժդահակին, զաղանի յայտնեց Տիգրանին այդ մասին

և ինքն էլ շուտով փախաւ եղբօր մօտ: Տիգրանը յարձակուեց Աժդահակի վրայ, սպանեց նրան և հարուստ աւարով զարծաւ Հայաստան իր հետ բերելով թագուհի Անդշին տասն հազար զերիներով, որոնց Մասսի արևելեան կողմը բնակեցրեց: Այս ցեղից առաջացան Մուրացան նախարարները (Վիշապազունք):

Տիգրանը իր քրոջը Տիգրանակերտը տուեց բնակուելու համար և գաւառի եկամուտն էլ նրան յատկացրեց:

Սրանից յետոյ Տիգրանը օգնեց պարսից Կիւրոս թագաւորին բաբելոնացի դէմ մղած պատերազմում և մի քանի տարուց յետոյ մեռաւ: ✕

✕ ՎԱՆԱԳՆ ՎԻՇԱՊԱՔԱՂ 520 թ. Բ. ա. և ՎԱՆԷ:

Տիգրանի յաջորդ երրորդ որդի Վահագն իր քաջութիւնների համար աստուածների շարքը դասուեց: Ժողովուրդը պատմում էր որ նա վիշապների հետ կռիւ էր մղել, ծնուել էր բոցերից, բոցէ միրուք ունէր, իսկ աչքերը արեգակին էին նման: Գողթան երգիչներն էլ երգում էին. «Երկնէր երկին և երկիր, Երկնէր և ծիրանի ծով. Երկն'ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն: Ընդ եղեգան փող ծուխ ելանէր, ընդ եղեգան փող բոց ելանէր և 'ի բոցոյն պատանէկիկ վազէր. նա հուր հէր ունէր, (ապա թէ) բոց ունէր մորուս և աչկունքն էին արեգակունք»:

Վահագնից Վահեունեաց նախարարութիւնը

առաջացաւ: Հայկազանց օրով հայերը ձինչև Արայ
դեղեցիկը աստուածապաշտ էին, իսկ Արայի օրով
հեթանոսական կրօնի դադափարը մուսը դորձեց և



սկսեցին զանազան իրեր պաշտել. ա) բնութեան
պաշտածունք՝ արևապաշտութիւն, բ) Զրադաշտա-
կանութիւն և գ) յունական բազմաստուածութիւն:

Վահագնի օրով հայերը բոլորովին հեթանոսացած էին
և որպէս աստուածներ յայտնի էին Արամազդ՝ հայր
աստուածների, Սնահիտ՝ մայր ամենայն զգաստու-
թեանց և Հայաստանի խնամակալուհի, Միհր՝ լոյսի
աստուած, Աստղիկ՝ գեղեցկութեան, Տիր՝ Արամազ-
դի զրազիր և ժողովրդին զիտութիւն շնորհող, Նանէ
դիցուհին՝ իմաստութեան և Վահագն՝ քաջու-
թեան: Հայոց աստուածների բնակարանը գտնու-
մ էր Մասի բարձունքներում:

Վահագնի յաջորդներից Վանը նորոգեց Շամի-
րամակերար և քաղաքն իր անունով Վան կոչուեց,
իսկ Վանի յաջորդ Վահէ 4000 հեաեակ և 7000
հեծելազօր զօրքով Պարսից Դարէհ թագաւորին օգ-
նութեան գնաց Աղէքսանդր Մակեդոնացու դէմ:
Դարէհը յաղթուեց, իսկ Վահէն փորձեց զիմադրել,
սակայն 330 թ. պատերազմում սպանուեց և նրա-
նով էլ վերջացաւ Հայկազանց հարստութիւնը: X

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ 330.—150 թ. Գ. ա.

Հայկազանց հարստութեան անկումից յետոյ
Հայաստանի լեռնային զաւառներում հայկական փոք-
րիկ իշխանութիւններ կազմուեցան, որոնք երկար
գիծադրեցին թշնամիներին, բայց Աղէքսանդր Մա-
կեդոնացին տիրեց զաշտային Հայաստանին և Միհ-
րան անունով իշխանին կուսակալ նշանակեց, որից
յետոյ նէոպաղոմէոս անունով մի իշխան կուսակալ
եղաւ, որ հայերին շատ էր նեղում: Սիւնեաց Ար-

դուարդ նախարարը օտարի լուծը [Թօթափել ուղե-
լով դօրք ժողովեց և դուրս քշելով նէոպտղոմէոսին
իր ձեռքն առաւ իշխանութեան դէկր:

Արդուարդի յաջորդ Արտաւազի օրով Սելե-
կացիք տիրեցին Հայաստանին և Մեծ Հայքը Արտա-
շէս անունով իշխանին յանձնեցին, իսկ Փոքր Հայքը
Զարէն իշխանին:

Այդ ժամանակներում Կարքեղոնացի Աննիրայ
իշխանը յաղթուելով հռոմայեցիներին փախաւ Հայաս-
տան Արտաշէսի մօտ, որը նրան պատուով ընդունեց
և նրա խորհրդով Երասխի ափին Արտաշատ քաղաքը
հիմնեց:

Սրանից չէտոյ Արտաշէսը Սելեկացոց լծից
աղատուելով 12 տարի ինքնազուլիս թաղաւորեց,
բայց յաղթուեց և նորից հպատակեցաւ Սելեկացոց:

Արտաշէսի յաջորդ Արտաւազը, ինչպէս և
Զարէնի յաջորդ Միհրորուզանը շատ թոյլ գտնուեցան
և նրանց օրով Պարթեները եկան տիրեցին Հայաս-
տանին:

ԱՐՇԱԿՈՒՆԻԲ

ՎԱՂԱՐՇԱԿ ՕՐԷՆՍԴԻՐ 149 թ. Գ. ա.

Այսպից ծովի և Կուրի ափերից հաբաւ մի
լեռնային ու աւազուտ փոքրիկ երկիր կար, որտեղ
Թափառական Պարթեւ ազգն էր բնակուած: Նրանք
քաջ, պատերազմասէր ազգ էին և կեանքի մեծ մասը
ծիրու վրայ էին անցկացնում: Ժամանակի ընթացքում
դօրանալով Թաղաւորութիւն հիմնեցին և Թաղաւոր-
ներից Արշակ մեծը կարողացաւ աշխարհակալու-
թեամբ նուանել Մարաստանը, Հիւրկարան, Եղիմայիսը,
Ասորեստանը, Միջագետքը և Եփրատի ափերից մինչև
Հնդկաստան զսնուած երկրները:

Հայերը որպէս սահմանակից կրօնով ու լեզուով
շատ էլ չէին տարբերուի մ նրանցից և առանց արիւն
թափելու հպատակեցան Արշակ Մեծին: Արշակը
Սելեկեան իշխանութեան առաջն առնելու համար
իր եղբայր Վաղարշակին հայոց թաղով պատկեց և
Հայաստանի թաղաւոր կարգեց: Այսպիսով սկսուեց
Արշակունեաց Հարստութիւնը:

Վաղարշակը իրեն թաղաւորանիստ դարձրեց
Մծրին քաղաքը և նրա առաջին դործն եղաւ իմա-
նալ հայերի ու հայ նախարարների ծաղուծը, սակայն
հայոց մէջ ոչինչ չգտնելով, Մար Աբաս Կառնա
զիաուն ասորի մարդուն մի նամակով իր եղբոր Ար-
շակին ուղարկեց և խնդրեց որ նրան թոյլ տայ

Նինուէի զրադարանի զրբերը քննելու։ Այնտեղ Մար
Աբասը գտաւ հաշկազանց պատմութիւնը և արտա-
զրեց բերեց Վաղարշակին։ Վաղարշակն ուրախացած,
գիրքն իր գանձարանում պահել տուեց, իսկ պատ-
մութեան մի մասը արձանների վրայ փորել տուաւ։



Մինչ Վաղարշակը հայ երկրի ու ժողովրդի ան-
ցեալով էր զբաղուած, Կապադովկիայի Մորփիւղիկէս

իշխանը, որ պարթևների թշնամի էր, մեծ զօրքով
հալաստան արշաւեց։ Վաղարշակը շուտով զօրք ժո-
ղովեց և յաղթեց։ Պատերազմի ժամանակ Մորփիւ-
ղիկէսն աշխատում էր մօտենալ Վաղարշակին, սա-
կայն հայ իշխանները սպանեցին նրան և զօրքն էլ
հալածեցին։ Այս պատերազմից յետոյ Վաղարշակը
ընդարձակեց Հալաստանի սահմանները, շինութիւնների
ծեռք զարկեց, նանապարհներ բացեց, նահնուտ աւե-
ղերը ցամաքեցնելով հրամայեց մշակել, ջրմուղներ
շինեց, թանձր անտառները մաքրեց աւազակներից,
իսկ Արամաւիր քաղաքում արեգակի, լուսնու և իր
նախնիքների արձաններ կանգնեց։ ✕

Սրա հետ միասին Վաղարշակը հայ նախարար-
ներին պաշտօններ բախշեց. Բաղարատ իշխանին թա-
գաղիբ՝ թագաւորի զլխին թագ գնող կարգեց,
Խորխոռունիներին՝ անձնապահ—թիկնապահ, Վա-
րաժնունեաց՝ օրսի վերկացու, Արծրունեաց՝ թա-
գաւորի առջևից արծուանշան տանող, Գնթունեաց՝
հանդերձապահ, Մուրացան ցեղին թագաւորի երկ-
րորդի պատիւը շնորհեց, Վահնունեաց քրմութեան
պաշտօնը յանձնեց։ Նրկու պաշտօնեայ էլ նշանակեց,
որոնք զատաւարութեան միջոցին իր աշ ու ծախ
կողմը պիտի գտնուէին և մէկը պիտի յիշեցնէր երբ
թագաւորը անիրաւացի էր վարւում, իսկ միւսը
մեղմ վարուելիս՝ պատիժները։

✕ Նրա հաստատած կարգերից կարեւորը ժողովր-
դական դատարանների բացումն էր և այն, որ անդ-

բանիկ որդին իր մօտ բնակուի, իսկ միւսները հաշտենից դաւառում:

Վաղարշակը մեռաւ Մծբինում 127 թ. Գ. ա. և յաջորդեց Արշակ որդին (127—113 թ.).

Արշակը հօր ընթացքին հետեւեց և Պոնտացոց հետ պատերազմելով յաղթեց և ի նշան յաղթութեան Սև ծովի ափին մի արձան կանգնեց, որ երկար ժամանակ պոնտացիք պաշտեցին. բայց Արտաշէսի հետ ունեցած պատերազմի ժամանակ ծովը նետեցին: ✕

ԱՐՏԱՇԷՍ Ա. ԱՇԽԱՐՀԱՅԱՆ 114—90 թ. Գ. ա.

Արշակի յաջորդ Արտաշէս որդին քաջ և պատերազմասէր լինելով Պարթևների թաղաւորից առաջնութեան պատիւը խլեց և իր անունով դրամ տրպել սկսեց չնայած Արշակ մեծն այդ իրեն ու իր յաջորդներին էր վերապահել:

Արտաշէսն իր աշխարհակալական ծրագիրներն իրագործելու համար իր Արտաշատ աղջիկը Պոնտացոց Միհրդատ թագաւորին կնութեան տուեց և նրա հետ հայաստանի հիւսիսային և արևելեան աղբերից կազմած մեծ զօրքով նուաճեց փոքր Ասիան, անցաւ Եւրոպա, տիրեց Թրակիային ու Յունաստանին բայց սաստիկ սովից նեղուած ստիպուեց ետ դառնալ: Ճանապարհին զօրքի մէջ խռովութիւն ընկաւ և փոքր Ասիայում դաւանանօրէն սպանուեց: Մեռնե-

լիս լինելով իր անցաւոր փառքը նա ասել է. «աւանդ փառացս անցաւորի:»



Արտաշէսի զօրքի շատութեան համար պատմում են, որ խմելուց դետերը ցամաքում էին, իսկ զինուորների նետած քարերից բլուրներ էին գոյանում:

ՏԻԳՐԱՆ Բ. ՄԵԾ 89 — 36 Թ. Ք. ա.

Արտաշէսին յաջորդեց Տիգրան Բ. զինուորական արուեստին վարժ պատերազմասէր օրդին: Տիգրանը հռոմայեցոց յարձակումների առաջն առնելու համար Կապադովկիան ու Փոքր Հայքը Միհրդատին յանձնեց, իսկ ինքը Պարթևաց Արշական Թագաւորի զէնքնաց: Արշականը ուղղում էր ետ խլել առաջնութեան պատիւը, բայց պատերազմում մեռաւ:

Տիգրանի առաջին յաղթութիւնը հարևան աղդերին սարսափի մատնեց և Ասորիք իրենց հպատակութիւնը յայտնեցին, իսկ Տիգրանը դրաւեց ամբողջ Կապադովկիան, Կիլիկիան, Միջագետքը, մտաւ Պարստին և բաղձաթիւ հրէա զերիններով վերադարձաւ:

Տիգրանի յաջողութիւնները հռոմայեցիներին ապշեցրին և Սիլլա զօրավարը մեծ զօրքով հայաստան եկաւ՝ յաղթեց Միհրդատին, խլեց նուանած երկիրները և հաշտուեց, բայց Միհրդատը նորից զօրք ժողովեց և երկու անգամ հռոմայեցոց ետ մղելով ու յաղթուելով Լուկուլլոս զօրավարից բոլորովին շարդուած Տիգրանի մօտ փախաւ: Լուկուլլոսը պահանջեց Տիգրանից Միհրդատին իրեն յանձնել, բայց նա չնայած շատ էր բարկացած Միհրդատի վրայ՝ մերժեց Լուկուլլոսի պահանջը: հռոմայեցիք բարկացած Տիգրանակերտ քաղաքը պաշարեցին, ուր Թագաւորի զանձերն էին պահուած: Տիգրանը զօրքն առած հռոմայեցոց զէնքնաց,

զնաց, իսկ հայ զօրքից 6000 հեծելազօր նեղքելով Թշնամու բանակը՝ զանձերի մի մասը ազատեցին:



ՏԻԳՐԱՆ Բ.

հռոմայեցոց զօրքի սակաւութիւնը Տիգրանին ապշեցրեց և նա ասաց. «Եթէ զեսպաններ են խիստ շատ են, եթէ պատերազմողներ՝ քիչ»: Իսկ Լուկուլլոսը

յանկարծ յարծակուեց հայոց վրայ, բանակի մէջ շր-
փոթ գցեց և յոյն բնակիչների մասնութեամբ 69 թ.
Տիգրանակերան առաւ: Հռոմայեցիք ձմեռն անցրին
Կորդուաց նահանգում, իսկ դարնան պատերազմից
խցոս առնին, որովհետեւ սովից ու ջրաից նեղուած
էին և անցնելով Միջագետք՝ Մծբինը պաշարեցին:
Մի քանի ամսից քաղաքը անձնատուր եղաւ:

Տիգրանը փոխանակ Մծբինին օգնելու, պատրաս-
տութիւն տեսաւ և նուաճած բոլոր դաւառները
եւ խլեց: Այս անգամ Տիգրանի դէմ ուղարկուեց Պոմ-
պէոս զօրավարը, որ սահմաններում ընդհարուեց
Միհրդատի հետ և Միհրդատը յաղթուելով Կողքի-
փախաւ:

Այդ անխաղձութեան ժամանակ Տիգրանի փոքր
Տիգրան որդին ապստամբելով միացաւ Պոմպէոսի
հետ և Տիգրանը ներքին ու արտաքին թշնամիներից
նեղուած հաշտուեց Պոմպէոսի հետ և ետ առնեց
հռոմայեցիներից խլած երկիրները: Մինչ այս Միհր-
դատն էլ իր ապաստամբ որդուց նեղն ընկած անձ-
նասպան եղաւ և Տիգրանը միայնակ մնաց:

Տիգրանի դաշինքից մի տարի անց Պարթևների
դէմ պատերազմելու համար արևելք եկաւ Կրասոս
զօրավարը, բայց բանից դուրս եկաւ որ Հայաստանի
վրայ էլ աչք ունէր: Տիգրանը միացաւ Պարսից
Արշէս թագաւորի հետ և հայ—պարսիկ զօրք շար-
դեց հռոմայեցիներին, Կրասոսն էլ սպանուեց, իսկ նրա
ղլուխը Սուրէն զօրավարի հրամանով Տիգրանի աղ-

ջկալ ու Արշէսի Բակուր որդու հարսանիքին իբրեւ
նուէր ուղարկուեց:

Հռոմի ձերակոյտը Տիգրանի դէմ Կասիոս զօր-
ւարին ուղարկեց: Այս անգամ ձերացած Տիգրանը
Բարդափրան Ռշտունի նախարարին ուղարկեց հռո-
մայեցոց դէմ հայ պարսիկ զօրքով: Բարդափրանը
յաղթանակով մինչև Պալեստին հասաւ, Գնէլ Գնթու-
նի իշխանին էլ Երուսաղէմ ղրկեց, ուր նա նենդու-
թեամբ բռնեց Հիւրկանոս քահանայապետին, իսկ ին-
քը մեծ աւարով ու գերիներով դարձաւ Հայաստան:
Այս պատերազմից երկու տարի յետոյ մեռաւ Տիգրա-
նը, որ 53 տարի թագաւորեց:

Տիգրանին յաջորդեց թուլամորթ, բայց գեղա-
րուեստասէր ու զբաղէտ Արտաւազդ որդին, որի
օրով հայերը ծանօթացան արեւմտեան ազգերի զուար-
եութիւնների հետ և մինչև անգամ ներկայացուցներ
էին արեւոմ:

Սկզբում Արտաւազդը հռոմայեցոց Անտոնինոս
զօրավարի հետ պարթևների դէմ զինուեց, բայց յան-
կարժ իր զօրքով հեռացաւ հռոմայեցոց բանակից և դար-
ձաւ Հայաստան: Անտոնինոսը այս բանի համար գէպի նա
դարձրեց իր գէնքը և բռնելով՝ ոսկի շղթաներով
Ալէքսանդրիայի Կղէոպիստրա թագուհուն ուղարկեց,
իսկ թագուհին 31 թ. զլխատեց նրան:

Արտաւազդի մահից յետոյ Հայաստանը երկուսի

բաժանուած ոտնակոխ եղաւ պարթևներից ու հռոմայեցիներից և առաջացան Հիւսիսային ու Հարաւային թագաւորութիւններ:



ԱԲԳԱՐ 3 Թ. Ք. ա. մահը 34 Թ. Ք. յ.

Արտաւաղդից յետոյ Հայոց զօրքն ու նախարարները Տիգրանի եղբօր որդի Արշամին Մծբինուծ թագաւոր հրատարակեցին: Արշամը զգալով իր ար-

կարութիւնը լաւ համարեց հաշտուել հռոմայեցոց հետ և 30 տարի թագաւորելով ոչնչով չանմահացրեց իրեն, բայց նրա յաջորդ Աբղարը, չնայած հօրից շատ չէր տարբերուծ, բայց յայտնի եղաւ որ պէս առաջին քրիստոնէայ թագաւոր: Գահ ելնելուց երկու տարի յետոյ ամբողջ Հայաստանը հռոմայեցոց հարկատու դարծաւ և Օգոստոս Կայսեր հրամանով հռոմայեցի հարկահտնները Հայաստան եկան աշխարհադիր անելու: Հարկահտններն իրենց հետ բերել էին Կայսեր պատկերը, որ դրին մեհեանի մէջ: Հրէաստանի Հերովդէս թագաւորը, որ Արշամի ճնշողներից մէկն էր, պահանջեց իր պատկերն էլ դնել Կայսեր պատկերի կողքին, սակայն Աբղարը մերժեց, որի պատճառով պատերազմ ծագեց և Հերովդէսը յաղթուեց:

Այդ ժամանակ Օգոստոս Կայսրը մեռնելով յաջորդեց Տիբերիոս, և Աբղարը դեսպաններ ուղարկեց Հռոմ, որոնց այնտեղ անպատուեցին: Աբղարը սկսեց պատրաստուել ապստամբուելու համար և Եդեսիայում ամրացաւ: Մեռաւ և պարսից Արտաշէր թագաւորը և նրա որդոց մէջ զահի համար խռովութիւն ընկաւ: Աբղարը որպէս պարթևների ազդական զնաց Պարսկաստան հաշտեցրեց Արտաշէրի որդոց և ուրուկութեամբ հիւանդացած Հայաստան եկաւ: Աբղարի այս ճանապարհորդութիւնը հռոմայեցոց կտակածի տակ զցեց և Աբղարը դեսպանների միջոցով հռոմայեցոց դործակալին պարզեց եղելու-

Թիւնը: Այս դեպքանները վերադարձին լսելով Քրիստոսի հրաշագործութիւնների մասին՝ զնային Երուսաղէմ, անձամբ տեսան և երբ եկան պատմեցին ամեն ինչ թաղաւորին:

Արդար լսելով այս, անմիջապէս նաժարով իր մօտ հրաւիրեց Յիսուսին, որպէս զի բժշկէ իրեն և իր մօտ էլ բնակուի: Յիսուսը պատասխանեց, որ զալ չի կարող, բայց իր համբարձումից յետոյ աշակերտներից մէկին կուղարկէ բժշկելու: Այս լսելով դեսպանների մէջ եղած նկարիչը ուղեց նկարել Յիսուսին, բայց Յիսուս առաւ կտաւը և տուեց նրանց իր կենդանադիրք՝ անձեռագործ դաստառակը:

Քրիստոսի համբարձումից յետոյ հայաստան եկաւ Թադէոս առաքեալը, բժշկեց Արգարին և Թագուհու, իշխանների, պալատականների ու ժողովրդի հետ մկրտեց նորան ու սկսեց քարոզել: Թադէոսը իր տեղ թաղաւորի խոյրարար Ադդէին եպիսկոպոս ձեռնադրելով՝ զնայ հիւսիսային հայաստան:

Արդար քրիստոնէութեան ջերմ պաշտպան հանդիսացաւ, հրամայեց ամեն տեղ ազատ պաշտել, իսկ իր հարեան թաղաւորներին էլ նաժաններով խնդրեց չըհալածել քրիստոնէաներին և 34 թ. վախճանուեց:

ԱՆԱՆՈՒՆ ԵՒ ՍԱՆԱՏՐՈՒԿ.

Արգարի մահից յետոյ հայաստանը երկու մասի բաժանուեց. Եդեսիայում թաղաւորեց իր որդի Ա-

նանունը, իսկ հայաստանում քեռորդի Սանատրուկը: Երկուսն էլ ուրացան հաւատը և նախարարների հետ քրիստոնէաների դէմ սաստիկ հալածանք հանեցին: Անանունը նահատակեց Ադդէ եպիսկոպոսին, որովհետեւ նա չուղեց հեթանոս թաղաւորի համար խոյր շինել: Ինքն էլ շուտով պատժուեց. պալատի նորոգութեան ժամանակ քարէ սիւներից մէկը ընկնելով տեղն ու տեղը սպանեց չարագործ թաղաւորին:

Սանատրուկը վաղուց մտադրել էր Անանունին զրկել դահից և երբ լսեց նրա մահը, կոտորեց Արգարի արու զաւակներին, յախշտակեց նրա դահր, իսկ Արգարի կնոջ հեղինէ թաղուհու, որից շատ բարիքներ էր տեսել, Միշադետքի թաղուհի անուանեց, բայց հեղինէն չկամեցաւ հեթանոսների մէջ բնակուել և զնայ Երուսաղէմ, որտեղ իր կեանքը աղքատասիրութեամբ ու բարեւարութիւններ անելով անցրեց:

Սանատրուկը տիրելով Արգարի երկրին, քրիստոնէաներին նեղել սկսեց, շատերին չարչարանքներով սպանեց և իր ազնիկ Սանդուխտ կուսին ու Թադէոս առաքեալին էլ նահատակեց:

Սանատրուկն իր հարստութիւնը Մծբին քաղաքի նորոգութեան վրայ ծախսեց, որովհետեւ երկրաշարժից կործանուել էր և ինքն էլ 65 թ. որսի ժամանակ պատահաբար սպանուեց:

ԵՐՈՒԱՆԴ Բ. 65—85 թ.

Սանատրուկի որդոց անչափահասութեան պատ-

նառով նախարարներն ու զօրքը ձօր կողմից Արշակունի Երուանդի իշխանին ընտրեցին Թագաւոր: Ե-



ԵՐՈՒԱՆԴԻ Բ. 65—85 թ.

րուանդը իր քաղցր վարմունքով դեռ Սանատրուկի օրով իր կողմն էր քաշել նախարարներին, բայց իր գահի ապահովութեան համար Սանատրուկի որդոց

սրի անցրեց: Սմբատ Բագրատունի Թագադիր սպեար չկամենալով Թագաւոր պսակել ոչ Ժառանգին կոտորածից ազաւեց Արտաշէս մանուկին և Պարսկաստան փախցրեց, որտեղ նրանք սիրալիր ընդունելու թիւն գտան և Արտաշէսը մեծանում էր Պարսից արքունիքում արքայապալել:

Երուանդը մտատանջութեան մէջ ընկաւ և դէսպանների բեղանով ապսպրեց Պարսից Թագաւորին որ Արտաշէսը Սանատրուկի որդին չէ, իսկ Սմբատի կայուածները յափշտակեց և նրա երկու աղջիկներին Անի ամրոցում բանտարկեց:

Այս բոլորն էլ չօգնեց Երուանդին և յուսահատ Թագաւորը Միջագետքը սուլաւ հռոմայեցոց, որպէս զի հարկաւոր դէպքում օգնեն իրեն, իսկ ինքը զնաց Արմաւիր՝ բուն Հայաստանում բնակուելու: Այդտեղ նա երկու ամուր քաղաք շինեց՝ Երուանդաշատ և Երուանդակերտ և Ծննդոց անունով էլ որսի անսասուն կէլ տուաւ:

Մինչ այս Արտաշէսը չափահաս դառնալով, Սմբատի հետ պարսիկ օգնական զօրքով Հայաստան մրտաւ հայրենի գահը նստելու: Նախարարներից շատերը նրա կողմն անցան, իսկ Մուրացան Արգամ Թագաւորի երկրորդը իր զօրքով քանի մի նախարարների ու վրաց զօրքի հետ Երուանդի կողմը բռնեց: Այս բանը Սմբատին շատ անհանգստացրեց և նա ծածուկ յայտնեց Արգամին, որ եթէ հեռանայ Երուանդից դարձեալ կմնայ երկրորդութեան պատուով:

Երկու բանակ Ախուրեան զետի ձօտ իրար հանդիպեցին և Արդամը իր զօրքով ետ քաշուեց: Տեղի ունեցաւ մի չտեսնուած նակատամարտ, երկու կողմերն էլ կռոււմ էին քաջութեամբ, բայց Երուանդի զօրքը, չկարողացաւ Սմբատի քաջութեանը դիմադրել: Թէպէտ տաւրացի քաջերն աշխատում էին սպանել Արտաշէսին, սակայն Գիսակ իշխանը միշտ ձեռքով ապաստեց նրան, իսկ ինքը զէմքի կէսը կորցնելով մեռաւ:

Երուանդը յաղթուած փախստի դիմեց, իսկ Սմբատը հալածեց նրան մինչև Երուանդաշատի դռները: Առաւօտեան հասաւ և Արտաշէսը, որին Երուանդը մար էր կանչում: Սմբատի զօրքը մար ամատ (մարն եկաւ) գոռալով չարձակուեց քաղաքի վրայ: Շուտով քաղաքն անձնատուր եղաւ և մի դինուոր վաղրով սպանեց Երուանդին:

Արտաշէսը Երուանդին արքայափայել պատուով թաղեց և զերեզմանի վրայ արձան կանդնեց:

ԱՐՏԱՇԷՍ Բ. 85 — 126 թ.

Սմբատ Բագրատունին այս յաջողութիւնից չետոյ մտաւ Երուանդի զանձարանը և զանելով Սահաարուկի թաղը՝ Արտաշէսին թագաւոր պսակեց:

Արտաշէսը բարերարներին վարձահատուց եղաւ, պարսից և մարաց օգնական զօրքերին վարձատրելով հալընիք նամբեց, Արդամին երկրորդութեան պատուի մէջ հաստատեց, չակնթաղարդ պսակ, ականջնե-

րին օղեր և մի ոտին կարմիր կօշիկ կրելու ու ոսկէ դիւպ պատառաքաղով ճաշելու իրաւունք շնորհեց. Սմբատին գլխաւոր սպարապետ և երկրի ու արքուն-



ՍԱՔԱՆԵՆԻ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ.

նիքի վերակացու նշանակեց, Գիսակի ժառանգներին Դիմաքսեան անունով նախարարութեան պատիւ տուեց, նախարարներին վարձատրեց, իսկ Պարսից Դարէն թագաւորին Սմբատի մեռելով մեծագին բնձաներ ուղարկեց:

Այնուհետև Արտաշէսը երկրի բարեկարգութեանը ձեռք զարկեց, նորոգեց Արտաշատը և իրեն մայրաքաղաք դարձրեց, բայց իր ծրագիրները չիրագործած Ալանաց թագաւորը Կովկասեան լեռնականների գլուխն անցած հայաստանի վրայ արշաւեց: Հայոց զօրքը քաջութեամբ ետ մղեց նրանց և Արտաշէսը գերելով Ալանաց արքայորդուն՝ Կուր դեափ աջ ափին բանակեց: Ալանները խնդրեցին ազատել արքայորդուն և խոստացան երբէք հայաստանին չըմօտենալ, սակայն Արտաշէսը մերժեց: Այն ժամանակ ալանաց արքայապետսր Սաթենիկը գեափ ափից կանչեց Արտաշէսին և խնդրեց ազատել իր եղբօրը ասելով, որ լաւ է թագաւորացին ստրկացնել և երկու քաջ ազգերի մէջ թշնամութիւն գցել: Արտաշէսը շատ հաւանեց ալանաց օրիորդին և ամուսնացաւ: Գողթան երգիչները երգում էին թէ «քաջ Արտաշէսը հեծաւ իր գեղեցիկ սև ձին, սրածէ արծուի պէս անցաւ գեափ միջով, ոսկէօղ շիկափով պարանր զցեց, բռնեց օրիորդին և արագութեամբ իր բանակը բերաւ: Հարսանիքի համար էլ երգում էին որ ոսկի ու մարգարիտ էին շաղ տալիս նրանց զլխին:

Վերջապէս Արտաշէսը երկրի բարեկարգումն ւսկանց. հրամայեց օրոշել սահմանները, սահմանաքարերով բաժանել գաւառներն իրարից, կամուրջներ շինեց, ջրերում նաւագնացութիւն սկսել տուաւ, ժողովրդի տնտեսականը բարելաւելու համար ձկնոր-

սութեան, երկրագործութեան և արհեստներին մեծ զարկ տուեց, իսկ անձակ-անբնակ գաւառները զաղթականներին տուեց, որոնց բերել էին Ալանաց ու Կասպից երկիրներից: Արտաշէսն առաջին անգամ հայոց մէջ մացրեց տոմարական հաշիւը:

Արտաշէսը որպիսի կողմից շատ անբաղկ էր Արտաւազդ որդին չարասիրտ ու նախանձոտ լինելով ուղեց երկրորդութեան պաաիւր խլել Արգամից և ծերունի Արգամին սպանեց: Մինչև անգամ Սմբատին էլ ուղեց սպանել, սակայն խոհեմ Սմբատը թողեց սպարապետի պաշտօնը և Տմորիք քաջուեց: Եղբայրները նախանձեցին Արտաւազդին, բայց խելօք Արտաշէսը նրանց էլ դոհացրեց ու պաշտօններ տուեց՝ Վրոյրին հազաւապետի ու արքունապետի, Մաժանին քրմապետի, զօրքն էլ չորսի բաժանելով արևելեան դունդը յանձնեց Արտաւազդին, արևմտեանը Տիրանին, հարաւայինը Սմբատին, հիւսիսայինը Զարեհին:

Սորանից յետոյ Արտաշէսը դադարեցրեց հռոմայեցոց հարկ տալը, բայց Տրապանոս կայսրը մեծ բանակով եկաւ, յաղթեց հայերին ու միւս ապստամբ ազգերին և թագաւորը ստիպուեց հաշտուելու ու հարկ տալու: Այս պատերազմից յետոյ Արտաշէսը հռոմայեցոց յանձնարարութեամբ պարթևաց աշխարհը դնաց, բայց Մարանդ գաւառի Բակուրափերտ աւանում հիւանդացաւ և Աբեղոյ նախարարին ուղարկեց Երիզայի աստուածներից կեանք խնդրելու,

բայց մինչև Աբեղոյի վերադարձը մեռաւ:

Արտաշէսի թագուծը շատ փառաւոր էր: Դա-
դաղը ոսկի, անկողինը բեհեզէ, զգեստը ոսկեգործ,
գլխին թագ, ոսկեպատ զէնքերով, չորս կողմից զը-
նուծ էին հարսդատները, արքունի պաշտօնէութիւ-



ՆԱԿԱՆՆԹ ԿՈՂՉՈՏՈՅ

նր ու նախարարները իրենց զնգերով, առջևից փող-
հարներ, ետևից լավիան հանաք և բազմաթիւ ժո-
ղովուրդ: Թագմանը իր մերձաւորներից և ծառանե-
րից շատերն անձնասպան եղան:

Արտաշէսը թագաւորեց 41 տարի և իր դահլիճ
թողեց չարարարոյ Արտաւազդին:

✕ ԱՐՏԱՇԷՍԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ



✕ ԱՐՏԱՒԱԶԴ. 131 թ.—Արտաւազդը իր հօր
թողմանն էլ նախանձեց և զողթան երգիչների ա-
սելով հօրը ասել էր. «Դու գնացիր և ողջ երկիրը

հետք տարար, ևս աւերակներին ոնց թաղաւորեմ»: Արտաշէսը գերեզմանից անիծել էր՝ «Եթէ դու ապա Մասիսը որսի գնաս, քեզ կբռնեն քաջքերը, կբռնեն Սղատ Մասսի բարձունքները, սչնտեղ մնաս և թո՛ղ լոյսը չտեսնես»:

Անէծքը կատարուեց և մի օր Մասսի բարձունքները որսի գնալով, ցնորուեց ու երիվարի հետ վիհը ընկնելով կորաւ: Ժողովուրդը պատմում էր, որ նա մի աչրի մէջ շղթայուած է և իր երկու շները կրծում են շղթաները որ աղատուի ու վերջ տալ աշխարհին, բայց դարբինների սալի ու մուրնի ծայերից շղթաները աւելի կին ամրանում: ✕

ՏԻՐԱՆ Ա. 131—151 թ.—Արտաւազդի եղբայր ու յաջորդ Տիրանը հռոմայեցոց կայսեր զրկած թագով ու ծիրանիով թագաւոր պսակուեց և կայսեր ու Տիրանի պատկերներով դրած էլ տպուեց: Սա զբօսասէր մարդ էր և 21 տարի թագաւորելուց չեաց մի օր նանապարհին ծիւնի բռնուելով մեռաւ:

ՏԻԳՐԱՆ Գ.—Արտաւազդի փոքր եղբայր Տիգրանը Պարթևաց հետ միացաւ և յաղթեց հռոմայեցոց, մինչև անգամ Փոքր Ասիա մտաւ, բայց մի թագուհի բռնեց նրան և բանտարկեց, որտեղից ազատուեց փեսայանալով հռոմայեցոց կայսեր:

✕ ՎԱՂԱՐՇ 193—213 թ.—Յաջորդելով իր հօրը՝ Վաղարշաւան անունով քաղաք հիմնեց, իսկ Վարդգէսի աւանը նորոգելով Վաղարշապատ անուանեց: Վաղարշը բարեկամացաւ հռոմայեցոց հետ որ-

պէս զի երկիրը խաղաղուի, սակայն խաղարներն ու բասլաց ազգը ձորալ պահակից անցնելով չալաստան մտան: Երկու անգամ հաջերը ընդհարուեցան նրանց հետ և յաղթեցին, սակայն վերջին կռոււմ Վաղարշը սպանուեց:

Վաղարշի հրամանով Նաւասարդ ամսի առաջին օրը մեծ շքով էր տօնուում և կռատների Բազաւան քաղաքում մեծ հանդէսներ էին կատարուում:

✕ ԽՈՍՐՈՎ ՄԵԾ. 213—260 թ.

Վաղարշին յաջորդեց Խոսրով որդին, որ իր հօր վրէժն առնելու համար անցաւ Կովկասեան լեռներով, յաղթեց լեռնականներին և իրը նշան յաղթութեան արծան կանգնեց, իսկ նուանած ազգերից հարիւրին մէկը պատանդ վերցնելով՝ դարձաւ չալաստան:

Այս պատերազմից յետոյ իր զէնքը հռոմայեցիներին դարձրեց, որոնք մտել էին չալաստան, և փառաւոր յաղթութիւն տարաւ:

Խոսրովի մղած պատերազմների ժամանակ Պարսկաստանում խռովութիւն ընկաւ. 226 թ. Արտաշէր Սասան իշխանը միանալով պարսից նախարարների հետ Արտաւան թագաւորից ապստամբուեց և սպանելով նրան ինքը թագաւորեց: Թէպէտ Խոսրովը զնաց օգնելու իր ազգակից Արտաւանին, սակայն լսելով նրա մահը դարձաւ ու հարեան ազգե-

րի օգնական զօրքերով յարձակուեց Արտաշէրի վրայ ու մինչև հնդկաստան փախցրեց նրան:

Արտաշէրը ապագայ բարդութեան առաջն առնելու համար իր մօտ կանչեց պարսիկ նախարարներին և մեծ վարձ խոստացաւ նրան, ով կսպանէր Խոսրովին: Այդ բանը յանձն առաւ Պարթև Անակ նախարարը և փախստական ձեանալով Խոսրովի մօտ եկաւ և մեծ պատուով ընդունուեց:

Խոսրովը պատրաստուած էր Արտաշէրից վրէժը լուծելու, երբ մի օր որսի ժամանակ Անակը սպանեց Խոսրովին և ձիով փախաւ: Նախարարները ընկան ետեւից և կամրջի մօտ բռնելով խեղդեցին Երասխ գետի մէջ, իսկ մեռնող Խոսրովը հրամայեց սրի անցնել Անակի ընտանիքը:

Գրքի Ժառանգ

ՏՐԴԱՏ 286—342

Խոսրովի մահից յետոյ հայ նախարարները դիմադրեցին պարսիկների հալածանքին, բայց Արտաշէրը յաղթեց և հրամայեց կոտորել Խոսրովի ընտանիքը, որից ազատուեց Տրդատ որդին և Արտաւազդ Մանգալունի նախարարը նրան հռոմ փախցրեց, իսկ Օտա Ամատունին ազատելով Խոսրովի իշուխտ դստեր արքունի զանձերի հետ Անի ամրոց տարաւ: Այս անգամ հայաստանի արեւմտեան մասին հռոմայեցիք տէր դարձան, իսկ արեւելեան հայաստանը մնաց պարսիկներին:

Տրդատը դաստիարակուած էր հռոմուծ և որպէս քաջ մարդ շուտով անուն հանեց: Նրա քաջութիւններից մի քանիսը հասել են մեզ. պատմուած են, որ մի անգամ մէկ ձեռքով վայրենի ցուլի եղջիւրները պոկեց, մի օր էլ ձիարշաւին հակառակորդը նրան վայր զցեց կառքից. բարկացած Տրդատը ընկաւ ետեւից և մի ձեռքով կառքը կանգնեցրեց: հռոմայեցոց ու Պարսից պատերազմի ժամանակ երբ հռոմայեցիք յաղթուեցան և ցրուեցան Տրդատի ձին վիրաւորուած լինելով՝ չկարողացաւ փախչել, ուստի վերցրեց զէնքերն ու ձիու թամբը և անցաւ Եփրատի միջով: Դոթաց հռչէ թաղաւորը հռոմայեցոց կալուածները մտնելով՝ Դիոկղետիանոս կայսեր մենամարտի կանչեց: Կայսեր փոխանակ Տրդատը դնաց և հռչէին բռնելով բերեց կայսեր մօտ: Կայսրը իբրեւ վարձ թաղաւորական ծի-


րանի հազցրեց և զօրք տուեց նրան որ դնայ իր հօր տեղը թագաւորէ:

Շուտով Տրդատը Կեսարիա հասաւ, որտեղ նրան դիմաւորեցին հայ նախարարներից շատերը, իսկ երբ հայաստան մտաւ նրան դիմաւորեց Օտա Ամատունին Խոսրովիդուխտի և դանձերի հետ:

Տրդատը հռոմեւմ հեթանոսական ոգով էր դաստիարակուել և իր յաջողութիւններից յետոյ շնորհակալութեան զօր մատուցց Անահիտ դիցուհուն: Այդ ժամանակ նրա մօտ էր ծառայում և Անակի որդի Գրիգորը, որ ծնաւ 257 թ. և երբ Անակի ընտանիքը սրի քաշեցին, իր ստնտու Սովիան աղաւեց և դադանի Կեսարիա փախցրեց, որտեղ նա քրիստոնեական ոգով կրթուեց: Երբ Գրիգորը խելահաս էր, իմացաւ որ իր հայրը սպանել է Տրդատի հօրը և հօր մեղքը քաւելու համար Տրդատի մօտ մտաւ ծառայելու: Տրդատը հրամայեց Գրիգորին որ Անահիտ արձանը պսակներով զարդարէ, սակայն Գրիգորը որպէս քրիստոնեայ՝ հրաժարուեց: Զայրացած Տրդատը հրամայեց չարչարել մինչև իր հաւատն ուրանայ, բայց երբ իմացաւ որ նա իր հօրը սպանողի որդին է, հրամայեց նախ տասներկու չարչարանքներով տանջել, իսկ յետոյ զցել Արտաշատի Խոր Վիրապը:

Խոր-Վիրապում Գրիգորը 14 տարի քնաց կերակրուելով մի բարեպաշտ կնոջ ամեն օր զցած հացի կտորներով:

Տրդատը սրանով էր չբաւականացաւ և քրիստոնէութեան դէմ սաստիկ հալածանք հանեց: Հալածանքի օրերում հռոմից հայաստան փախան մի քանի



կոյսեր, որոնց հալածել էր Դիոկղեսիանոս կայսրը: Կայսրը դոցա մասին զրեց Տրդատին և նրանց զրտան Վաղարշապատի հնժաններում: Տրդատը տեսնելով զեղեցկուհի Հռիփսիմէ կուսին՝ ցանկացաւ ա-

մուսնանալ, բայց նա փախաւ և Տրդատի զինուոր-
ները Վաղարշապատի մօտ 37 կոյս նահատակեցին։
Այս չարագործութիւններն անպատիժ չմնացին։
Տրդատը մի օր մեծ հանդիսով որսի գնալով խելա-
զարուեց և սկսեց անտառներում թափառել։ Դի-
ւահարուեցան նաև նախարարներից շատերը։

Մ. Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Մինչ թագաւորը տանջւում էր Խոսրովի դու-
խար քանիցս երազում տեսաւ որ Վիրապում եղած
Ս. Գրիգորը միայն կարող է բժշկել, սակայն ոչ ոք
չէր հաւատում, որ նա կարող էր կենդանի մնալ,
բայց և այնպէս Օտան զնաց և գտնելով նրան, հա-
նել տուաւ Վիրապից։

Ս. Գրիգորը սկսեց քարոզել, բժշկեց Տրդատին
և 301 թ. նրան իր բնտանիքով, պալատականների
ու ժողովրդի հետ մկրտեց։ Սորանից յետոյ Ս. Գրի-
գորը ամփոփեց ա- կոյսերի մարմինները և նահատա-
կութեան տեղերում չռիփսիմէի, Գայիանէի ու Շո-
ղակաթի անունով վկայարաններ շինեց, որոնք այժմ
էլ կանգուն են։

Ս. Գրիգորը մի տեսիլ տեսաւ՝ Միածին Փրկչի
իջաւ երկնքից և ոսկէ մուրճով խփեց գետնին։ Մուր-
ճով խփած տեղը 303 թ. մի մեծ եկեղեցի շինեց
և տեսլի համաձայն Էջ-Միածին անուանեց, որ
դարձաւ Մայր եկեղեցի և Կայան չափոց Կաթուղի-
կոսների։

Նախարարների հետ զօրք վերցրեց և Մուշեղամարդ
դաշտի վրայ հանդիպեց լեռնականներին։ Պատերազ-
մի ժամանակ Բասյաց Գեղուհոն թագաւորը ուղղում
էր ըստ իրենց սովորութեան չուանով բռնել Տրդա-
տին, բայց նա ծիով վրայ ընկաւ՝ երկու կէս արեց
Գեղուհոնին։

Սլուկ իշխանին պատժեց Մամգունը, որ Զինաս-
տանից էր եկել և սպանելով նրան նախարարի պատու-
ին արժանացաւ։ Այս նախարարութիւնը կոչուեց
Մամիկոնեան։

Տրդատը չարծակուեց պարսից վրայ և մինչև
նոր Եկեղեցւոյն քաղաքը հասաւ և պարսիկները ստի-
պուած եղան հաշտուելու։

Տրդատը ծերանալով ու միևնոյն ժամանակ զր-
դուելով նախարարների վատ արարքներից Մանեայ
այրը քաշուեցաւ ճգնելու։ Նախարարները շատ խն-
դեցին վերադառնալ, սակայն նա մերժեց ու թու-
նաւորուելով նախարարներից 342 թ. մեռաւ ու թա-
ղուեց Թորդան գիւղում։

Տրդատից յետոյ անկարգութիւններն այն աս-
տիճանի հասան, որ Զորորդ-Նայոց Արքեղայոս իշ-
խանը սպանեց Ս. Արիստակէս հայրապետին, որին
յաջորդեց Ս. Վրթանէսը, որ նախարարների հետ
Տրդատի Խոսրով որդուն թագաւոր հրատարակեց
(343—352)։ Խոսրով Փոքրը իր կեանքը որսորդու-
թեան մէջ անցրեց և Խոսրովակերտ ու Դուին քա-
ղաքները հիմնեց։ Այս քաղաքները շինելիս հիւսիսա-

լին լեռնականները նորից հայաստան արշաւեցին, բայց Վահան Ամատունին Օշականի առապառների մօտ յարձակուեց, շատերին կոտորեց, իսկ մնացածներին հալածեց:

Խոսրովի օրով պարսիկները նորից փորձեցին հայաստանի երբեմն իրենց ձեռքն եղած գաւառները խլելու, սակայն չյաջողուեց և Խոսրովը մեռնելով յաջորդեց մովի ու չար Տիրան Բ., որ Յուլիանոս կայսեր պատկերը եկեղեցում դրաւ: Ս. Յուսիկ հայրապետը տեսնելով այդ անկարգութիւնը՝ ջարդ ու փշուր արեց պատկերը, իսկ Տիրանը ձեծելով սպանել տուաւ Ս. Յուսիկին:

Տիրանը չկատարեց պարսից թագաւորին տուած իր խօսքը՝ պարսից ու յունաց մէջ չեղօք լինելու և պատերազմի ժամանակ յունաց կողմն անցաւ, որի համար Շապուհ թագաւորը բռնեց ու կուրացրեց: ✕

 ԱՐՇԱԿ Բ. 364—382 թ.

Շապուհը հայոց սիրտը շահելու համար Տիրանի Արշակ որդուն հայաստանի թագաւոր դրաւ, բայց յոյները իրենց վաղեմի սովորութեամբ հարկ պահանջեցին: Արշակն անարգեց դեսպաններին և յունաց կայսրը Թէոդոս զօրավարին մեծ զօրքով հայաստան ուղարկեց: Վախեցած Արշակը ժամանակի ներսէս Մեծ հայրապետին միջնորդ ուղարկեց. Թէոդոսը զիջաւ և հաշտուեց, իսկ Արշակը ի պատիւ

այդ հաշտութեան ամուսնացաւ կայսեր աղբական Ոլիմպիադայի հետ:

Այնուհետեւ Արշակը սկսեց անկարգ կեանք վարել. իր եղբորորդի Գնէլին զրկեց կալուածներից, որի համար կուրացած հայրը յանդիմանեց նրան, բայց Արշակը նախ իր հօրը Տիրանին խեղդել տուաւ, յետոյ սպանեց Գնէլին ու նրա Փարանձեմ կնոջ հետ ամուսնացաւ, Ոլիմպիադային էլ մի անպիտան քահանայի ձեռքով թունաւորեց: Չարիքներից մեծը այն էր, որ նա շինեց Արշակաւան անունով մի քաղաք և որպէս զի քաղաքը շուտով յցուէր բնակիչներով՝ յայտարարեց, որ ամեն մի չարագործ կալաւորի պատժից եթէ աջնակ բնակուի: Շուտով երկիրը ամեն տեսակ չարագործութեան բռն դարձաւ և նախարարները դժգոհ և այն բանից, որ թագաւորն անմեղ տեղ Սիւնեաց ու Կամսարականների ցեղը համարեա ամբողջովին ջնջել էր տուել, պահանջեցին վերջ տալ անկարգութիւններին ու Արշակաւանին: Արշակը չհամաձայնուեց ու նախարարները յարձակուեցան, սրի անցրին Արշակաւանը և միմիայն երեխաներն աղտատուեցան շնորհիւ Ներսէս Մեծի:

Այս բանի կողմնակից գտնուեց նաև պարսից Շապուհ թագաւորը և Ալանոզան զօրավարը զօրքով եկաւ հայաստան: Շուտով Ալանոզանը նեղ տեղը դրեց Արշակին և կալանաւորելով Պարսկաստան տարաւ: Շապուհը պահանջեց Փարանձեմին ու նախարարների կանանց, բայց նախարարները պատերազմով պա-

տառխանեցին և յողթելով մեծ մասամբ ընտանիքն առած Յունաց հայաստան փախան:



Ա. Ր Շ Ա. Կ Բ.

Զայրացած Շապուհը թագաւորից լուծեց իր փրէժը և շղթայակապ Անուշ բերդը ուղարկեց, հաւատուրաց Մերութան Արծրունի և Վահան Մամիկոնեան նախարարներին էլ մեծ բանակով հայաստան զրկեց: Սորանք Արտազերից բերդում բռնեցին Փարանձեմ թագուհուն և շատ ուրիշների հետ Ասորեստանում ցցի վրայ սպանեցին: Արշակը լսելով այս անցքերը 382 թ. Անուշ բերդում անձնասպան եղաւ:

Ա. Ր Շ Ա. Կ Ի ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

✕ Արշակի մահից յետոյ հայաստանը Մերութանի ասպատակութիւնների ասպարէզ դարձաւ: Ներսէս Մեծ հայրապետը դիմեց յունաց Թէոդոս կայսեր, որ Պապին թագաւորեցնէ: Պապը Արշակի որդին էր և պատանդ կաշսեր մօտ: Կայսրը զիջաւ հայրապետին և 382 թ. Տրայանոս զօրավարի հետ յունական զօրքով հայաստան ուղարկեց: Յունաց զօրքը Զիրաւ դաշտում հանդիպեց Մերութանի պարսից զօրքին և Նպատ լեռան մօտ պարսից զօրքը յողթուեց, իսկ Մերութանը փախստի դիմեց, սակալն Սմբատ Բագրատունի սպարապետը հասաւ և բռնեց:

Սմբատն ուղում էր բանակը տանել Նրան, բայց մտածելով որ Ներսէս հայրապետը կխղճայ և կազատէ, մօտիկ դանուող վրանաբնակներից վերցրեց տաքացած շամփուրը, ոլորեց պսակի ձեւով և դնելով նրա զլխին ասաց. «Պսակում եմ քեզ, Մերութան, որովհետեւ ցանկանում էիր հայոց թագաւոր դառնալ և ես թագադիր ասպետ լինելով պիտի որ հայրենական պաշտօնս կատարեմ»:

Այսպէս մեռաւ Մերութանը, որ մինչև իր մահը հայրենիքին դաւանանեց և երբեք չզղջաց:

Պապը վարակուել էր յունական մոլութեամբ և Ներսէս Մեծը շարունակ յանդիմանում էր նրան, որի համար Պապը զաղտնի թունաւորել տուաւ հայրապետին և Թիլն աւանում թաղեց: Պապը դէ-

պի յոյներն էլ ապերախտ գտնուեց, որի համար Տե-
րէնտիանոսը բռնեց նրան տարաւ Կ. Պօլիս, ուր
388 թ. նրան զխատեցին:

Պապի յաջորդ Վարազդատար Հայաստանի յոյն
իշխանների գործողութիւնների դէմ բողոքելու հա-
մար դնաց Կ. Պօլիս, բայց կայսրը փոխանակ ընդու-
նելու աքսորել տուաւ, իսկ նրա փոխարէն Պապի
Արշակ դ. և Վաղարշակ բ. Արեւելեան ու Արեւմտե-
ան Հայաստանի թագաւորներ կարգեց: Կայսրը սո-
րանով ուղղում էր ազգը երկսի բաժանել, որպէսզի
ներքին խռովութիւնները հնար չտան ապստամբելու:
Շուտով մեռաւ Վաղարշակը և պարսից մասնում
թագաւորեց Խոսրով դ.: Քիչ յետոյ մեռաւ և Ար-
շակ դ. և Խոսրովը 400 թ. ամբողջ Հայաստանի
թագաւոր եղաւ:

Խոսրով դ. որպէս աղատասէր մարդ ոչ պար-
սից և ոչ էլ յունաց հսկուեց, Ս. Սահակին էլ, որ
Ներսէս Մեծի թոռն էր, կաթողիկոս նշանակեց:
Շապուհը զայրացած իր Արտաշիւր որդուն Խոսրովի
դէմ զրկեց և նա Խոսրովին բռնեց ու շղթայած
Անտշ բերդը ուղարկեց:

Վ. Ա. Մ. Շ. Ա. Պ. Ո. Ն. 400—421. թ.

Խոսրով դ.-ից յետոյ թագաւորեց իր եղբայր
Վաւաճապուհը, որ բարի ու խաղաղասէր մարդ էր:
Վաւաճապուհը լաւ գիտէր անցեալ սխալների տխուր

հետեւանքները և այդ միակ պատճառով թէ՛ յունաց
և թէ՛ պարսից հետ համերաշխ քնաց. մինչև անգամ
այն երկու ազգերի մէջ ծագած մի վէճի համար Մի-
ջադեաք դնաց որպէս միջնորդ դատաւոր և գործը
հաշտութեամբ վերջացրեց:

Վաւաճապուհը ուսումնասէր էր՝ գիր սիրող
մարդ էր և սորա օրով Մեսրոպ Մաշտոց վարդա-
պետը գտաւ ու կարգաւորեց հայոց ալբուբենը:
Մեսրոպ Մաշտոցը Տարօնի Հացեկոց գիւղիցն էր
ծնուած 361 թ., լաւ վարժ էր յունարէն, ասորերէն,
պարսկերէն լեզուներին: Նախ նա ծառայում էր որ-
պէս ղինուորական, իսկ յետոյ արքունի քարտուղար
նշանակուեց: 400 թ. նա կուսակրօն դարձաւ: Մե-
սրոպը աւանելով որ հայերը սեփական գիր ու դրպ-
րութիւն չունին և եկեղեցիներում յունարէն, ասորե-
րէն են կարդում աղօթքները և թարգմանում ժողո-
վրդին՝ Ս. Սահակ հայրապետի ու թագաւորի հա-
ճութեամբ Վաղարշապատում ժողով դրւմարեց, որ-
պէս զի մի կերպ հայերէն տառեր հնարէ: Ժողովում
թագաւորը յայտնեց թէ ինչպէս ինքը լսել է Մի-
ջադեաքում Դանիել անունով մի եպիսկոպոսի մօտ
հայերէն տառեր կան: Այս լուրը ստուգելու ու ե-
ղածն ուսումնասիրելու համար Վահրիճ անունով մէ-
կին զրկեցին նրա մօտ: Վահրիճի բերածը պակասա-
ւոր էր և Մեսրոպը ինքը դնաց սովորելու, բայց
ռչինչ չգտաւ բացի Վահրիճի բերանից, ուստի ճա-
նապարհորդեց այն կողմերը որպէսզի նշանաւոր մա-

տենադարաններում որոնէ: Մեսրոպի ջանքերն ի զուրանցան և նա ապաւինեց Աստուծոյ ու 406 թ. զրտաւ պակասը:

Տեսնելով այս թագաւորն ու կաթողիկոսը, անմիջապէս զպրոցներ բացին, սկսան սովորեցնել և ամբողջ Հայաստանը նոր կեանք ու կենդանութիւն ստացաւ: Մեսրոպի առաջին աշակերտները ուսումը կատարելագործելու համար Աթէնք, Ադէքսանդրիա և ուրիշ քաղաքներ ղրկուեցան: Աշակերտներից նըշանաւոր եղան Մովսէս Խորենացի պատմաբանը, Մեսրոպին կենսադրող Կորիւնը, Եղծ աղանդոց հեղինակ Եղնիկ Կողբացին, Վարդանանց պատմիչ Եղիշէն, Վահանի պատմութիւնը գրող Ղազար Փարպեցին, Դաւիթ անյաղթ փիլիսոփան, Ղևոնդ երէցը, Յովսէփ Եկեղեցացին, Յովսէփ Պաղնացին և այլք, որոնք օգնեցին Մեսրոպին և հայ զպրութեան զարկ տուին:

Մեսրոպը իր աշակերտների օգնութեամբ թարգմանեց Աստուածաշունչ ս. գիրքը, եկեղեցական գրքերը, հայ եկեղեցու համար ծիսարան էլ պատրաստեց: Աղգային այս յառաջդիմութիւնը շատ մեծ էր և այն ժամանակը կոչուեց «Ոսկեդար Հայոց գրականութեան»:

Վռամշապուհի 21 տարի խաղաղ թագաւորելուց յետոյ մեռաւ և ազգը Ֆնաց անմխիթար:

Վռամշապուհի մահից յետոյ Ս. Սահակի միջնորդութեամբ Խսորով գ. ազատուեց Անյուշ բերդից և մի

տարի թագաւորելով մեռաւ: Պարսից թագաւորը իր Շապուհ որդուն թագաւոր դրաւ, բայց նա այնքան նախատինք կրեց հայերից որ 4 տարի թագաւորելուց յետոյ հայրենիք զնաց, որպէսզի իր հօր տեղը թագաւորէ, իսկ հայերը Ներսէս Ճիճրակացի նախարարապետ զօրավարի առաջնորդութեամբ դուրս քշեցին Պարսիկներին Հայաստանից:



ԱՐՏԱՇԷՍ Գ. 422—433 թ.

Այդ միւսնոյն ժամանակներում Պարսկաստանում թագաւորեց Վռամը, որ Հայաստանը ողողեց պարսից ասպատակ զօրքով: Ս. Սահակը ներքին ու արտաքին խռովութիւններից զոռւած իր ուշադրութիւնը յունական Հայաստանի վրայ դարձրեց ու Մեսրոպ Մաշտոցին իր թոռ Վարդան Մամիկոնեանին ղրկեց կ. Պոլիս կայսրին խնդրելու որ յունական Հայաստանում հայ լեզուն ուսուցանելուն խոչնդոտներ չլինեն: Կայսրը առանձին հրովարտակ տուեց նրանց և Վարդանին էլ սպարապետութեան պատիւ:

Երբ Ս. Սահակը յունական Հայաստան զնաց պարսիկները շատ վնասուեցին, որովհետեւ երկրի անտէր ֆնալուց հարկեր պակսեցան և Վռամը վճռեց հաշտուել հայ նախարարների հետ: Նախարարները հրաւիրեցին Ս. Սահակին խորհրդակցելու: Հայրապետը սիրար ցաւած եկաւ Այրարատ և Սմբատ Բագրատունուն ու Վարդան Մամիկոնեանին ուղար-

կեց Վռամի մօտ: Վռամը մեծ պատուով ընդունեց նրանց և Վռամշապուհի Արտաշէս որդուն հայոց թագաւոր կարգեց:

Արտաշէս դ. իւր զեղիս ու մօլի վարքով շուտով զգուեցուց նախարարներին, որոնք վճռեցին դահրնկեց անել նրան և հաւաքուելով Ս. Սահակի մօտ, պահանջեցին որ միանայ իրենց հետ ու զնան բողոքեն պարսից թագաւորին և պարսիկ իշխող կարգել տան: Վշտացաւ հայրենասէր հայրապետը՝ «քա՛ւ լիցի, ասում էր նա, իմ հիւանդ ոչխարը դալկերին տալ և չբժշկել նրան. ինչպէ՞ս կարելի է, որ ես իմ հիւանդ ոչխարը փոխեմ առողջ զազանի հետ, որի հէնց առողջութիւնն է մեզ պատուհաս»:

Նախարարները չկամեցան լսել, կարծեցին թէ նա ուզում է իրենց խաբել, որպէսզի թագաւորը ժամանակ գտնէ և իրենցից վրէժը լուծէ, ուստի իրենց հետն առած Սուրմակ անունով մի քահանայ զնացին Պարսկաստան և թագաւորի առաջ ամբաստանեցին Ս. Սահակին և Արտաշէսին թէ միացել են յունաց հետ և պիտի ապստամբին: Վռամը հաւատաց, կանչեց Արտաշէսին ու կաթողիկոսին, զրբկեց իշխանութիւնից, Սուրմակին կաթողիկոս և Վհմիրշապուհ պարսկին մարդպան նշանակեց 433 թ. ու հայաստան ղրկեց:

Այսպիսով վերջացաւ Արշակունեաց հարստութիւնը:

ՄԱՐԶՊԱՆՆԵՐ ԵՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ.

ՎԱՐԴԱՆԱՆՅ ԿԱՏԵՐԱԶՄ 451 թ.

Արշակունեաց անկումից յետոյ հայաստանը Պարսկաստանի նահանգ դարձաւ և մարդպաններով կառավարուեց: Ս. Սահակին յաջորդող կաթողիկոսների անպիտանութիւնից նախարարները զգուեցան և զղջացին, զնացին Ս. Սահակի մօտ ու աղաչեցին նորից կաթողիկոսանալ, սակայն հայրապետը մերժեց, պատմեց նրանց հայաստանի գլխին դալիքների մասին տեսած տեսիլը և քաշուեց Բագրեւանդ, ուր 439 թ. վախճանուեց: Վեց ամսից յետոյ վախճանուեց և Ս. Մեսրոպը:

Զղջացող նախարարները Յովսէփ Պաղնացուն ընտրեցին կաթողիկոս: Յովսէփը հայրենասէր հոգեւորական էր և անմիջապէս ժողով գումարեց Շահապիւնում, ուր եկեղեցական հարցեր քննելուց յետոյ երկրի բարեկարգութեան հոգ տարան:

Յազկերտ Բ. թագաւորելով Պարսկաստանում վճռեց իր բոլոր հպատակներին կրակապաշտութիւն ընդունել տալ և յունաց դէմ մղած պատերազմից յետոյ, իր զէնքը հօնաց դէմ դարձրեց: Հայոց օգնական զօրքը ու նախարարներից շատերը պարսից խորամանկութեան զոհ դնացին. այս միջոցներով Յազկերտն ուզում էր հայերին թողնել առանց առաջ-

նորդող ձեռքերի, որպէս զի կարողանար հեշտութեամբ նուաճել:

Հայ նախարարները հոնաց երկրում տարած յաղթութեան իբրև վարձատրութիւն հալածուեցան՝ Յաղկերտը ստիպեց նրանց արևին երկրպագել, բայց նախարարները յանձն չառին և թագաւորի հրաժանով ոձանք բանտարկուեցան, իսկ ոձանք փախչելիս նահատակուեցան:

Այնուհետև հայոստան եկաւ Դենշապուհ պարսիկը, որ շատ նեղեց հայերին, սկսեց անասելի հարկեր հաւաքել թէ՛ ժողովրդից և թէ՛ վանքերից: Միւսնոյն ժամանակ Միհրներսէս պարսիկը հաւատի մի թուղթ գրեց հայերին, որով ոտիպում էր կամ պարսից զենի դառնալ և կամ պատասխանել: Կաթողիկոսը հայ մեծամեծների խորհրդով խիստ լեզուով պատասխանեց, կէտ առ կէտ հերքեց նամակը ցոյց տալով պարսից աղանդի անպիտանութիւնը:

Յաղկերտը զայրացած հրամայեց իր մօտ կանչել նախարարներին: Թէպէտ նախարարները զիտէին Յաղկերտի դիտաւորութիւնը, բայց ստիպուեցան դրնալ: Թագաւորը շատ փառ ընդունեց և խստիւ հրաժայեց իր հետ արևին երկրպագել: Նախարարները հրաժարուեցան այդ բանից և թագաւորը հրամայեց բանտարկել բոլորին և սկսաւ պատրաստուել հայաստանը ոչնչացնելու համար արշաւանքի:

Մի պարսիկ զաղտնի յայտնեց նախարարներին Յաղկերտի նպատակը, որի համար նրանք առերես

ուրացան, որպէսզի արգելանքից ազատուեն: Ուրախացած Յաղկերտը վարձատրեց նրանց և մոգպետի, 700 մոգերի ու զօրքի հետ հայաստան ուղարկեց բոլոր հայերին հաւատաւորիս անելու: Երբ պարսից բանակը հասաւ հայոց Անգղ դիւղը՝ բանակեց և մի կիրակի օր մոգպետն ուղեց եկեղեցին քանդել, բայց պատարագիչ Ղևոնդ երէցը ժողովրդի հետ չարձակուեցան և լաւ ձեծեցին մոգպետին ու մոգերին: Մոգպետն այս ձեծի համար բողոքեց Վասակ Սիւնի իշխանին, որ իսկապէս ուրացել էր հաւատը: Վասակը սկսեց նեղել հայերին, որպէսզի կարողանար արգելքների առաջն առնել, բայց նախարարները միացած չարձակուեցան Վասակի զօրքի վրայ, պատժեցին նրանց, իսկ Վասակին ձերբակալեցին: Նախարարները հաւատալով նրա երդմանը թէ այլ ևս չի դաւանանիլ՝ ազատ թողին նրան և չարձակուեցան պարսիկների վրայ որոնց բերել էր Միհրներսէս զօրավարը, մեծ մասը կոտորեցին ու փախցրին, իսկ որովհետև պարսից զօրքը Աղուանք էր մտել՝ Մեծրն Վարդանը զօրքը երեքի բաժանեց՝ մէկ մասը Ներշապուհ Արծրունու առաջնորդութեամբ Աւրպատական դրկեց, մէկ մասը Վասակին տուեց երկրի պաշտպանութեան համար, իսկ երրորդ զօրաբանակն իր հետն առած աղուաններին օգնութեան գնաց և յաղթանակով հայոստան դարձաւ, որտեղ Վասակը նորնոր չարիքներ էր նիւթել:

Յաղկերտն այս բոլոր անյաջողութիւնների վր-

ըէծը լուծելու համար ամբողջ ծմեռ պատրաստուեց
և զարնանը Մուշկան Նիւսապաւուրտ զօրավարին
անհամար զօրքով հայաստան ուղարկեց: Հայերը հոգի
առան, փառուեցան հայրենիքի սիրով և սկսեցին
հաւաքուել, որպէս զի արիւնով վերականգնեն իրենց
պատիւը: Հայ կամաւորների թիւը 66 հազարի հա-
սաւ և սորանց գլուխն անցաւ Քաջն Վարդան Մա-
միկոնեանը, առաջ զնաց զօրքով մատաւ Արտազ ու
Տղմուտ դեպի արիւն Աւարայր դաշտում բանակեց:
Հակառակ կողմից մօտեցան պարսիկները:

Պատերազմի նախօրեակին ամենքը զուարթ էին
և խրախուսուած էին իրար. բոլորեքեան խոստովա-
նուեցին և հազօրդուեցան և մի գաղափարի նուի-
րուած սպասուած էին իրենց կեանքը զոհելու հայրե-
նիքի ու եկեղեցու համար: Վարդանը հառով խրա-
խուսեց. «Կլախենանք նրանց սրերից, առօրէ կը նա,
որով մեր մարմինը կապանեն, բայց հոգին՝ ոչ. կամ
յաղթենք և կամ քաջերին յատուկ մահով մեռնենք»...
Քաջապետուած էր նաև Ղևոնդ երէցը, որ հայրենիքի
նախանձախնդիր ու Երկնաւոր Վարդապետի անձնու-
րաց աշակերտ էր:

451 թ. յունիս 2-ի առաւօտեան սկսաւ պա-
տերազմը: Հայերը Վարդանի առաջնորդութեամբ ա-
ներկիւղ յարձակուեցան պարսիկներին վրայ, այնպէս
որ թշնամին շփոթուեց: Քաջ Վարդանը մատաւ պար-
սից շարքերը, բայց շուտով չորս կողմից շրջապատե-
ցին նրան և նա՝ քաջին յատուկ մահով ընկաւ: Երե-

կոյեան դէմ պատերազմը դադարեց և հայերը ճեղ-
քելով պարսից բանակը քաշուեցան իրենց ամուր
բերդերը:

Այս պատերազմում ընկան 1036 հայ, 3544
պարսիկ և 9 իշխան: Հայ նախարարներից ընկան
Քաջն Վարդան, Կորովի Խորէն, Արի Արտակ, Զարմանալի



ՎԱՐԴԱՆԱՆՅ ՊԱՏԵՐԱԶՄ

Տաճատ, Եմաստուն Հմայեակ, Հրաշակերտ Ներսէն, Մանուկ Վա-
հան, Արդար Արսէն, Յառաջադէմն Գարեգին:

Հայոց եկեղեցին յարգեց իր անձնուէր պաշա-
պանների լիշատակը և բարեկենդանի վերջին հինգ-
շաբթի օրը նուիրուած է նրանց լիշատակին:

Պատերազմի անյաջողութիւնից մեղմացաւ Յազ-

կերար և Ասորործից պարսկին մարդպան կարգեց ու հրամայեց, որ հայերի հետ մեղծ վարուի: Ասորործիցը, ճիշտ է, հայերին կրօնի ազատութիւն տուեց, սակայն Սահակ Եպիսկոպոսին, Յովսէփ կաթողիկոսին, Ղևոնդ երէցին և միւս հոգեւորականներին շղթայած Պարսկաստան զրկեց, ուր 454 թ. Նիւշապուհ քաղաքի մօտ նահատակուեցան: Վասակն էլ զնաց Յաղկերաի մօտ իր զորքերի վարժը ստանալու, բայց նրա վրայ շատերը չարախօսեցին և նա բանտում որդնոտուեց ու այնպէս մեռաւ:

✠ ՎԱՅԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ 481—510 թ.

Յաղկերար իր չարիքները լրացրեց հայ նախարարների բանտարկութեամբ, սակայն նրա յաջորդ Պերոզը հանեց նրանց բանտից և Ասորիշնասպ պարսիկ իշխանի հետ Հայաստան զրկեց: Նախարարները նախկին անհամերաշխութիւնից խրատուած այս անգամ սկսեցին միանալ, իսկ Վարդանին փոխարինեց նրա հմայեակ Էդբօր որդի Վահան Մամիկոնեանը քաջ իշխանը, որ պարսից բարեկամ ծեռացաւ, միամբրտացրեց Պերոզին, սակայն միանալով վրաց հետ հալածեց Հայաստանից պարսիկներին ու հաւատուրացներին: Սորանից յետոյ հայ իշխանները Դուինում ժողով արին և Սահակ Բագրատունուն մարդպան նշանակեցին, իսկ Վահանին սպարապետ:

Պերոզը մի քանի անգամ զօրք զրկեց Վահանի դէմ, բայց միշտ հայերը յաղթեցին և միայն մի անգամ

յաղթուեցան վրաց խարդախութեան պատհառով և այդ կուռւմ սպանուեց Սահակ Բագրատունին: Պարսից համար վհատեցուցիչ էր Շաէ գիւղի կռիւը, որտեղ Վահանը 40 հոգով 2—3000 պարսիկներին յաղթեց և չորս հոգի կորցնելով ճեղքեց բանակը և անվնաս դուրս եկաւ գիւղից: ✠



✠ ՎԱՅԱՆԻ ՄՈՒՏՔԸ ՊԱՐՍԻՅ ԲԱՆԱԿԸ

Միւսնոյն ժամանակ պարսիկները պարտուեցան չեփթաղների դէմ միւս ապաւերազմում և Պերոզը սպանուեց, իսկ նրա յաջորդ Վաղարշը վնուեց հաշտուել Վահանի հետ և Նիխոր իշխանին ղեկավար զրկեց նրա մօտ: Վահանը երեք պայման առաջար-

կեց. ա) Կրօնի կատարեալ աղատութիւն, բ.) տն-
պիտան մարդոց պաշտօն ու պատիւ չ'տալ և գ.)
ղրպարտութիւններին հաւատ չ'ընծայել, այլ քննել և
յետոյ վճիռներ տալ:

Նիխորը ընդունեց նրա առաջարկը և հրաւիրեց
տեսնուելու: Վահանը մեծ հանդիսով արքայապայել
մտաւ պարսից բանակը, այնպէս որ մինչև անդամ
այդ մուտքը վախեցրեց պարսիկներին: Վահանը հա-
շտութիւն կ'ընելով Դուին դարձաւ Անդեկան պար-
սիկ մարդպանի հետ: Անդեկանը շատ շինաց մարդ-
պանի պաշտօնում և բարեխօսեց թագաւորի առաջ
Վահանի համար ու նրան մարդպան կարգել տու-
աւ:

Մինչ Վահանը աշխատում էր խաղաղացնել
հայրենիքը, Պարսկաստանում թագաւորեց Կաւաւոր,
որ ցանկանում էր հայերին կրակապաշտ դարձնել և
493 թ. մողերին զօրքի հետ հայաստան ուղարկեց:
Այս անգամ էլ Վահանը ջարդեց պարսիկներին:

Վահանի տեղ մարդպան եղաւ նրա Վարդ եղ-
բայրն որ 4 տարուց յետոյ պաշտօնանկ եղաւ և նրա տեղ
մի պարսիկ նշանակուեց: Այդ ժամանակներում Հոնները
Հայաստան արշաւեցին: Սրանց դէմ դուրս եկաւ Գնու-
նեաց Մփեթ քաջ իշխանը և փառաւոր յաղթութիւն
տարաւ: Կաւաւոր այդ քաջութեան համար Մփեթին
մարդպան նշանակեց և նա 30 տարի խաղաղութեամբ
կառավարեց:

Մփեթից յետոյ Դենշապուհ պարսիկը մարդպան
եղաւ, բայց հայոց Մովսէս կաթողիկոսը (որ 551 թ.

Հայոց թուական հաստատեց) պարսից Խոսրով Թագա-
ւորին խնդրեց ու նրան անօրէն վարքի համար պաշտ-
օնանկ անել տուաւ: Սորան յաջորդող մարդպանները
թշնամաբար վերաբերուեցին գէպի հայերը մինչև
Սմբատ Բագմայաղթը:

X ՍՄԲԱՏ ԲԱԶՄԱՅԱՂԹ. ԳԱԻԻԹ.

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ:

Պարսից Խոսրով Թագաւորը Սմբատ Բագմա-
տունի իշխանին 592 թ. իր աիրասէր ծառայու-
թեան համար Հայոց մարդպան նշանակեց: Սմբատը
սկսեց խնամել հայերին, որոնք անկերջ պատերազմ-
ներից քայքայուել էին: Շուտով Խոսրովի ու Հեփ-
թաղների միջև պատերազմ ծագեց և Սմբատը որ-
պէս պարսից զօրքի սպարապետ մեծ յաղթութիւն-
ներ արաւ, սպանեց Հեփթաղների թագաւորին և
ինքն էլ 8 տարի իշխելուց յետոյ մեռաւ Տիգրանում:

Սմբատին յաջորդեց Դաւիթ Սահառունի հայ
իշխանը, որի օրով Խոսրովը մեծ զօրքով յունաց
վրայ արշաւեց և Մուշեղ Մամիկոնեան իշխանին
էլ հրամայեց հետեւել իր օրինակին, սակայն Մուշեղը
մերժեց և ամրացաւ Տարօնում: Խոսրովը Յունաստա-
նից Կարին գնալով իր քեռորդի Միհրանին 30000
զօրքով Մուշեղի դէմ ղրկեց: Մուշեղն էլ Գայլ Վա-
հան իշխանին ղրկեց նրա դէմ, որը խորամանկու-
թեամբ լաւ ջարդ տուեց պարսիկներին, իսկ Միհրա-
նին սպանեց 604 թ.: Գայլ Վահանը ձերացած հա-
սակում նորից յաղթեց պարսիկներին և դուրս վրոն-

դէն նրանց Տարօնի սահմաններէից, բայց շուտով ինքն էլ մեռաւ:

Դաւիթը 23 տարի իշխելուց յետոյ ընտանիքով Յունաստան զնաց, որտեղ Կիւրապարտոս նշանակուեց, իսկ նրա տեղ մարզպան եղաւ Վարադախը, որ 8 տարի իշխելուց յետոյ Կ. Պօլիս փախաւ:

Այսպիսով մարզպանութիւնն էլ վերջացաւ և Հայաստանը կառավարուեց յունաց կայսեր նշանակած կիւրապարտոս կամ պատրիկ կոչուած իշխաններով: Վերջերս երկիրը մնացել էր անխնամ և միայն Թէոդորոս Ռշտունի քաջ իշխանն իր զօրքով աշխատում էր խաղաղացնել երկիրը, երբ Հայաստանին նոր թշնամի աւելացաւ:

ԱՐԱՐԱՅԻՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Է. զարուծ Արաբիայում Մահմէդ անուշով մէկը նոր կրօն քարոզեց և արաբացիք հաւատալով սկսեցին քաղաքական միջոցներով տարածել մահմէդականութիւնը: Շուտով Պարսկաստանը Արաբիայի նահանգ դարձաւ: 640 թ. արաբացիք Արդրահմանի առաջնորդութեամբ Հայաստան մտան: Նրանց ճանապարհի առաջին դաւառը Տարօնն էր և Տիրան Մամիկոնեան իշխանը միայնակ դիմադրեց, սակայն անօգնական մնալով յաղթուեց, մանաւանդ որ կռուի ժամանակ Սահուռ Անձեւացի իշխանը արաբացիներին կողմն անցաւ: Տիրանը սպանուեց և արաբացիք առաջ զնացին, պաշարելով առան Դուին քաղաքը,

պրեցին, չարդեցին ու 35000 զերի վանելով վերադարձան Արաբիա:

Շատ չանցած Արաբացիք նորից Հայաստան մտան և համարեա՝ առանց խոչնդոտի Հայաստանի մէջ մասին տէր դարձան, ուստի և հայերը զոլուած նախարարների անմիաբանութիւնից, զեսպանների միջոցով տմիրապետին հնազանդութեան խոստում տուին: Այս իրողութիւնը յայնքին դայրացրեց և հպատակութեան խոստումը պահանջեցին հայերից: Հայերը նրանց էլ խոստում տուին և համադասպ Մամիկոնեանը պատրիկ նշանակուեց, որի յաջորդի օրով հայերը բոլորովին Արաբացոց հնազանդեցան և ստիպուած եղան հարկ էլ տալու:

Հայոց աշխարհը յայնքերի ու արաբների ձեռքին կռուի խնձոր դարձաւ, ոլորուեց արիւնով և կռիւներից մէկում սպանուեց Աշոտ Բաղրատունի Բիւրատեան իշխանը և 694 թ. Արդլլա արաբը ոստիկան կոչումով Հայաստան եկաւ, բայց հայերը նրան շուտով երկրից արտաքսեցին: Այս զէպքը դայրացրեց արաբացոց և Մահմատ ոստիկանն անհամար զօրքով Հայաստան արշաւեց: Ժամանակի Սահակ կաթողիկոսը ճանապարհուեց որ նրա բարկութիւնը իջեցնէ, սակայն հիւանդանալով աղերսալի թուղթ գրեց ու վախճանուեց: Աւանդութիւնը պատմում է, որ երբ Մահմատը մօտեցաւ նրա գաղաղին, կաթողիկոսը ձեռքը շարժեց և նամակը տուեց նրան, որով մեղմացաւ նա:

Մոմատից յետոյ 13 օստիկան և քանի մի հայ պատրիկներ նշանակուեցան, որոնցից ոմանք քաղցր վարուեցան հայերի հետ, իսկ ոմանք երկիրը քարուքանդ արին։ Կոշմ օստիկանը հայ նախարարներին ու մեծամեծներին Նախիջևանի եկեղեցու մէջ պրեկտուաւ, իսկ Բուղան ամբողջ երկիրը ասպատակի մատնեց՝ աւերեց ու այրեց և նախարարներին ու իշխաններին բռնելով ստիպեց հաւատն ուրանալ. չուրացողները նահատակուեցան։ Բացի այս Բուղան զերի իշխաններին Սմբատ սպարապետի հետ ամիրապետի մօտ տարաւ։ Սրանցից մի քանիսը հաւատն ուրանալով ազատուեցան, իսկ Սմբատը չուրացաւ և բանառում մեռաւ, որի համար խոստովանող կոչուեց։



հրշապարկ

Ո. շուշանյալից նահապետի

Գրեց նահապետի

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ

ԱՇՈՏ Ա. 859—889.

Սմբատ Խոստովանողի մահից յետոյ սպարապետ եղաւ նրա Աշոտ որդին, որ իր քաղցր բնաւորութեամբ շահեց ժողովրդի սիրտը և որպէս խելացի կառավարիչ ամիրապետից իշխանաց իշխան աիադոսի արժանացաւ։ Աշոտը հարկեր ժողովեց և ուղարկեց ամիրապետին, իսկ նա զիջանելով Աշոտի խնդրին Հայաստան ուղարկեց բանտարկուած նախարարներին։

Մինչ այս Զահապ պարսիկ իշխանը մեծ զօրքով հայոց վրայ դիմեց։ Նրան դիմաւորեց հայոց սպարապետ՝ Աշոտի Աբաս եղբայրը և Երասխի ափերին յաղթելով՝ փախցրեց։

Նախարարները աւանելով Աշոտի կառավարչական հմտութիւնը՝ միջնորդեցին ամիրապետի առաջ, որ նրան թաղաւոր դնէ հայոց վրայ։

Ամիրապետը համաձայնուեց, Աշոտին թագ ու թագաւորական զգեստներ ղրկեց և 885 թ. Գեորգ կաթողիկոսը նրան թագաւոր օծեց։ Յունաց կայսրը յայտնեց իր ուրախութիւնը թագ ու թագաւորաւանելը ընծաներ ուղարկեց Աշոտին։

Այնուհետեւ Աշոտը շրջակայ իշխաններին հետ հաշտուեց, վերջ տուեց Վանանդի ու Գուգարքի խռովութիւններին և Կ. Պօլիս զնաց Լէոն կայսեր

այցելելու, բայց վերադարձին 889 թ. Շիրակում
մեռաւ:

ՍՄԲԱՏ Ա. 889—914 թ.

Աշոտին իր անդրանիկ Սմբատ որդին յաջորդեց,
որ հօրը մահուան համար մեծ սուգ պահեց: Աբաս
սպարապետը դժգոհ այդ բանից մի քանի անգամ Սմ-
բատի հետ պատերազմի բռնուեց, սակայն յաղթու-
եց, իսկ Սմբատը 892 թ. Շիրակաւանում թագա-
ւոր օժուեց: Դեռ նոր էր խաղաղել երկիրը երբ Ա-
փշին ոստիկանը մեծ զօրքով հայաստան մտաւ:
Սմբատը հաշտուեց նրա հետ, բայց երբ Ափշինը նո-
րից արշաւեց՝ Սմբատը Դոդս զիւղի մօտ յարձակու-
եց, յաղթեց և երկրի սահմաններիցը դուրս քշեց:

Սրանից յետոյ Սմբատն ուղեց Աղծնիքն ու Տա-
րօնն ազատել Ահմատ ոստիկանի լծից, բայց Վաս-
պուրականի Գաղիկ իշխանը խաբէութեամբ հայոց
զօրքի մէջ շփոթ դրեց, որից օգտուելով Ափշինը նո-
րից հայաստան արշաւեց և Սմբատը իր որդուն
պատանդ տալով հաշտուեց:

Սմբատը հարկահաւաք ոստիկաններից զզուած՝
խնդրեց ամիրապետից որ իրեն թողնի այդ պարտա-
ւորութիւնը: Ափշինի յաջորդ Իւսուփ ոստիկանը
դժգոհ այս բանից Սմբատի գէմ քայլեց, բայց ներ-
քին խռովութիւնները Սմբատին կաշկանդել էին և
նա ստիպուեց հաշտուելու: Իւսուփը այլ կերպ լու-
ծեց վրէժը՝ Սմբատից ապստամբութեամբ Գաղիկ Ար-

ծրունի իշխանին Վասպուրականի թագաւոր հրա-
տարակեց:

Սմբատի դրութիւնը շատ վտանգուեց, որով-
հետև. Գաղիկն ու Իւսուփը միանալով նրա գէմ պա-
տերազմ հրատարակեցին: Յուսահատ թագաւորը
Գուգարք փախաւ, որտեղ լսեց սր իր որդիքը յաղ-
թուել են և իր հետ գտնուած մի բուռն քաջե-
րով Կապոյտ բերդում ամրացաւ: Իւսուփը պաշա-
րեց նրանց. թէպէտ բերդը անառիկ էր, սակայն սո-
վից թագաւորը ստիպուեց զիջումների դիմել ու
Իւսուփից խօսք վերցնելով որ իրեն ու իր մարդոցը
ձեռք չի տալ՝ անձնատուր եղաւ.— 913 թ.: Թէպէտ
Իւսուփը կեղծ պատիւներ տուեց նրանց, սակայն
914 թ. չարաչար մահով նահատակեց Սմբատին:

✠ ԱՇՈՏ Բ. ԵՐԿԱԹ. 915—928 թ.

Սմբատի Աշոտ որդին հօրը մահուան լուրն առ-
նելուն պէս մի քանի հարիւր կորիճներով Իւսուփի
պահապաններին դուրս քշեց հայաստանից և ժողո-
վրդի ցանկութեամբ 915 թ. հօր գահը նստեց: Ա-
շոտն անհուճասար քաջութեան համար Երկաթ կո-
չուեց:

Խաղաղութիւնը տևական չեղաւ, որովհետև
անընդհատ պատերազմները ժողովրդին անտեսապէս
քայքայել էին և սովը սկսեց իր հուռնը: Ծնողները
հացի համար հարազատ որդուն էին ծախում:

Սովին ուժէր տալիս ներքին անդորրութեան

խախտումը, որի համար Յուդայի Կոստանդին կայսրը Աշոտին Կ. Պոլիս հրաւիրեց և երկիրը խաղաղացնելու համար զօրք տուեց: Իւսուփը նոր որոգայթներ լարեց և Աշոտ Երկաթի հօրեղբոր որդի Աշոտ սպարապետին թագաւոր անուանեց, որով նրանց մէջ պատերազմներ տեղի ունեցան և Յովհաննէս պատմաբան կաթողիկոսի միջոցով հաշտուեցան: Այս էլ երկար չտևեց, միւս իշխաններն էլ Աշոտ Երկաթի ղէմ գինուեցան և նա 100 մարդով Սեան կըղդին քաշուեցաւ և Իւսուփի զրկած Բըշըր ոստիկանին յաւ շարդ տալուց չեւոյ նորից իր ձեռն առաւ կառավարութեան ղեկը, բայց 928 թ. մեռաւ:

Աշոտին յաջորդեց Աբաս եղբայրը, որ երկիրը խաղաղացնելու նպատակով Դուինի ոստիկանի հետ դաշն կապեց և Կարսը իրեն թագաւորանիստ առաւ ու Առաքելոց անունով մեծ եկեղեցի շինել տուաւ, որը դեռ չէր օծուած երբ արխագների Բէր թագաւորը մօտեցաւ Կարսին և պատգամ ղրկեց որ եկեղեցին իւրենց ծխով պիտի օծել տայ: Աբասը դուրս եկաւ պատերազմելու, յաղթեց, բռնեց նրան և Կարս բերելով ցոյց տուեց եկեղեցին ու կուրացրեց. 951 թ. մեռաւ Աբասը և յաջորդեց իր որդի Աշոտը:

ԱՇՈՏ Գ. ՈՂՈՐՄԱԾ 952—977 թ.

Աշոտ Գ. երկիրը ուղեց հիմնովին բարեկարգել և 90000 զօրք ժողովելով ինր տարի մարտնչեց թշնամիների ղէմ և 961-ին Անի քաղաքում թաղաւոր օծուեց: Այլ օրուանից Անին մայրաքաղաք դարձաւ:

Կարսի դաւառակալ Աշոտի եղբայր Մուշեղը առաջինը դաւառանեց և կողմնակիցների շնորհիւ թագաւոր օծուեց: Այսպիսով առաջացաւ Կարսի թագաւորութիւն, բայց Աշոտ Գ. լուեց և իր ղէնքը ամիրապետից ապստամբած համաուն ոստիկանի ղէմ վարժրեց, որին սպանեց և ամիրապետից մեծ շնորհների արժանացաւ:

Աշոտը հռչակուեց որպէս բարեպաշտ և աղքատասէր, անկեղծոյններ ու աղքատանոցներ բացեց և շատ անգամ անձամբ ճաշում էր աղքատների հետ, ոչի համար նրան Ողոր Ում մականուն տուին:

Երկրի խաղաղութիւնն ուղեց վրդովել Յովհաննէս Զմշիկի կայսրը, որ հայաստանի կողմերն արշաւեց, որովհետեւ Աշոտի ազգակից թշնամիները զբրդուել էին նրան, սակայն իմանալով, որ հայերը պատերազմական պատրաստութիւն ունին՝ ետ քաշուեց:

Աշոտը մեռնելով թաղուեց Անիի մօտ՝ Ղօշիփանքում, ուր այժմ էլ կայ նրա գերեզմանը:

ՍՄԲԱՏ Բ. ԵՒ ԳԱԳԻԿ Ա.

Աշոտ Ողորմածի յաջորդ Սմբատ (977—990) որդին Անին շէնցնելով զբաղուեց և Տրդատ ճարտարապետի ձեռքով շատ գեղեցիկ շէնքեր, եկեղեցիներ շինեց և քաղաքը աշտարակներով ու ամուր պարիսպներով շրջապատեց:

Անին առաջ Ախուրեան գետի ափին փոքր բերդ

էր և Աշոտ Ողորմածը ցած պարսպով պատեց, իսկ Սմբատ Բ. 980 թ. ընդարձակեց քաղաքը և չորս կողմից Մեծանիստ կոչուած պարիսպը շինեց: Կարճ ժամանակում Անին հարստացաւ. բնակիչները թիւն այնքան մեծացաւ, որ շատերը կարծում են թէ միլիոնի պիտի հասած լինէր, իսկ եկեղեցիները համար էլ նրա «հազարումէկ» եկեղեցիներով էին երդուում: Մայր եկեղեցին՝ Կաթողիկէն սկսաւ շինել Սմբատը, բայց աւարտեց Գաղիկ Ա. ի կին Կատրամիդէն: Երկրորդ Գաղիկ Ա. ի շինած Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին է, իսկ երրորդը Ապուլարիպ մարաշախտի շինած Ս. Փրկիչը: Անույ նախըջին անգամ այնքան հարուստ է եղել, որ իր համար եկեղեցի է շինել:

Քաղաքի մէջ այսօր էլ կանգուն են բարձր աշտարակը, միջնաբերդի պալատը, արքունի խորհրդատունը, պարիսպների մի մասը և դռները և բոլորն էլ զարդարուած են քանդակներով ու մոզայիքներով:

Մինչ Սմբատն զբաղուած էր շինարարութեամբ, Կարաի Մուշեղ թագաւորը խանգարեց երկրի անդրրութիւնը և Սմբատը ստիպուեց զէնքի դիմել, սակայն տեսնելով որ Տայոց կիւրոպալատը օգնութեան է եկել՝ հաշտուեց:

Սմբատն իրեն ժողովրդի աչքում նուաստացրեց մի քանի թեթևամիտ արարքներով և որ գլխաւորն է, ամուսնացաւ իր քրոջ աղջկան հետ:

Սմբատին յաջորդեց իր եղբայր Գաղիկը (990—1020), որ յայտնի եղաւ որպէս խաղաղասէր, եկեղեցասէր և աշխարհաշէն և 30 տարի խաղաղ թագաւորեց ու մեռաւ: Գաղիկ Ա. այն աստիճան վա-

խեցրեց թշնամիներին, որ ոչ ոք սիրտ չառաւ նրա հետ: Պատերազմել և նրան արքայից արքայ կոչուած սուրին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՄԲԱՏ 1020—1040

Գաղիկի յաջորդ Յովհաննէս Սմբատը թուլածորթ ու ո՛չ վարչական մարդ էր, իսկ նրա կրտսեր եղբայր Աշոտը աշխոյժ և ռազմասէր լինելով ապրտամբուեց նրա դէմ, բայց Պետրոս Գետադարձ կաթողիկոսն ու Ափխաղաց թագաւորը հաշտեցրին նրանց: Աշոտը շարունակեց որոգայթներ լարել և Ապիրատ իշխանին պատուիրեց սպանել եղբորը, սակայն Ապիրատը Սմբատին Անիում դահր նստեցնելով փախաւ:

Այս ընտանեկան կռիւների ժամանակ նոր թըշնամի էլ աւելացաւ՝ Սելջուկեան թաթարները Վասպուրական մտան, որտեղի Սենեքերիմ թագաւորը ազատուելու համար իր երկիրը յոյներին տուեց և փոխարէն ստացաւ Սեբաստիա քաղաքն իր շրջակայքով և սրանով վերջացաւ Արծրունեաց թագաւորութիւնը:

Սելջուկների իշխան Տուղրիլ բէկը Սմբատի երկիրը մտաւ և Վասուկ Պահլաւունին քաջութեամբ դիմադրեց, բայց սպանուեց: Միւսնոյն ժամանակ յաւնաց Վասիկ կայսրը Ափխաղների դէմ մղած պատերազմից լետոյ հայերի դէմ դնաց: Յովհաննէս Սմբատն անհագրացած մի թղթով Անին յոյներին

կտակեց և Վասիլը հեռացաւ: Վասիլի յաջորդ Կոստանդինը 1029 թ. ծախուան անկողնում Անիի կտակի թուղթը Կիրակոս անունով հայ քահանային յանձնեց որ հայոց թագաւորին տանէ, բայց անարժան քահանան պահեց թուղթը և յաջորդ Միքայէլ կայսեր մեծ գնով ծախեց 1034 թ.:

Սմբատը մեռնելով երկիրը թողեց բոլորովին խառնակ դրութեան մէջ:

ԳՍԳԻԿ Բ. 1040—1045 թ.

Յովհաննէս Սմբատն անժառանգ մեռաւ, իսկ միակ ժառանգ Աշոտի Գաղիկ որդին անչափահաս էր: Երկրի շփոթ դրութիւնից օգուտ քաղեց Միքայէլ կայսրը և սկսեց պահանջել Անին: Խնամակալ իշխանները վնուեցին դիմադրել, իսկ տերութեան խրնամակալ Վեստ Սարգիս Սիւնին ուղեց թագաւորել, բայց դորա դէմ ղինուեց տիրասէր Վահրամ Պահլավունին:

Միքայէլ կայսրը երեք անգամ ղորք ուղարկեց, բայց հայերը ցիր ու ցան արին նրանց, իսկ չորրորդ անգամ 100000 ղորք ղրկեց, որոնք Անին պաշարեցին: Վահրամը 30000 ղորքով դուրս եկաւ քաղաքից և սոսկալի ջարդ տուաւ ու հալածեց. յոյները 20000-ի չափ մարդ կորցնելով փախան: Այս յաղթութիւնից յետոյ միաբանած իշխանները Գագիկին Անիում թագաւոր օծել տուին:

Վեստ Սարգիսը գժգոհ այս բանից արքունի

դանձերի հետ Անիի միջնաբերդում ամրացաւ: Գագիկը նրան համոզեց որ հեռանայ, բայց երբ նա դանձերը չուղեց վերադարձնել՝ մի քանի մարդով զնաց բռնեց և բանտարկեց: Սարգիսը մի կողմից յոյ-



ՊԱՅԳՆԻՄ ԵՆ ՅՈՅՆԵՐԻՆ

ներին ղրդուելով միւս կողմից շողոքորթութեամբ աղատուեց, իսկ նրա գաղանի խորհրդով եկած յոյներն էլ պարտութիւն կրեցին:

Այս բանից յետոյ յունաց կայսրը խորամանկու-

Թեամբ Կ. Պօլիս հրաւիրեց Գաղիկ բ.-ին և նա յուսալով իշխանների ու կաթողիկոսի հաւատարիմ մընալու երզման վրայ՝ դնաց։ Այնպէս երկօրեայ պատուից յետոյ նրանից պահանջեցին Անին, բայց Գաղիկը մերժեց յանձնել և 1045 թ. Բոսփորի կղզիներից մէկը աքսորուեց։

Ուրախացած վեստ Սարգիսը իշխաններին խաբեց և Անույ 40 բանալիներն ամբողջ երկիրը յոյներին յանձնելու նամակով զրկեց կախեր։ Կայսրը ցոյց տուեց բոլորը Գաղիկին, բայց նա զարմանալով հայ նախարարների ախրանենգութեան վրայ հառաչանքով ասաց.

«Հայաստանի տէր ու Թողաւորը ես եմ և ժողովրդի հանութեամբ ընտրուած և ես չեմ կարող համաձայնել ու նրան զրկել այդ քաղաքից»։ Կայսրը սխեց համողել նրան, բայց նա սուգ մտաւ և նուրահատ Անիի փոխարէն Պիղու քաղաքում բնակութիւն հաստատեց։

Յոյները կարծեցին թէ այսպիսով Անին զրկաբաց կընդունի նրանց. բայց ո՛չ, հայեւը երկար դիմաւորեցին և յոյները մատնութեամբ ախրեցին քաղաքին։ Սելջուկեանք նորից հայաստան մտան և Տուղրիլ բէկը Արծն վանառաջահ քաղաքը այրեց, իսկ Մմբատաբերդն ու Արծկէն հիմքից կործանեց։ Հայ նախարարները Կարսից Թողաւորի հետ նրա դէմ դուրս եկան և յաղթուեցան։ Սոյն կռոււմ Թաթուլ Վանանդեցի հայ իշխանը զերի ընկաւ։ Թաթուլը

վիրաւորել էր պարսից ամիրայի ողջուն, որին Տուղրիլը շատ էր սիրում։



ԹԱԹՈՒԼ ՎԱՆԱՆԴԵՑԻ

Երբ Թաթուլին Տուղրիլի մօտ բերին, նա ասաց որ եթէ տղան սպրի, կաղաւէ նրան. Թաթուլը պատասխանեց. «Եթէ հարուածը իմն է, չի սպրիլ»։ Տղան մեռաւ և Տուղրիլը սպանելով Թաթուլին՝ նրա աչք ամիրային զրկեց ասելով. «Տղադ վատ բաղկից չէ մեռած»։ Տուղրիլը չկարողացաւ առնել Մանաղկերարը, քովհեաւ ներսից հայերը մի Ֆռանդի օգնութեամբ այրեցին սելջուկների պաշարման մեքենաները։

Տուղրիլից լետոյ եկաւ Ալփասյանը և պաշարեց Ա-
նին, բայց չկարողանալով առնել՝ հեռանում էր, երբ
հայերը ետեւի դռներից դուրս գալով փախստի դի-
մեցին: Սելջուկները նկատելով այս ներս խուժեցին
Անի և սկսեցին անտեսանելի կոտորած, իսկ հրդեհը
լափեց ամբողջ քաղաքը:


Սորանից լետոյ Ալփասյանը Կարսի Գաղիկթա-
ղաւորից պահանջեց իրեն հպատակուիլ: Գաղիկը
խորամանկութեան դիմեց և Տուղրիլի համար սգաւոր
ձեւացաւ: Ալփասյանը լսեց այս՝ հաշտուեց, իսկ Գա-
ղիկը քաշուեց Փոքր Հայքի Ծամնդաւ բերդը և սո-
րանով Կարսի թագաւորութիւնն էլ վերջացաւ:

ԳԱՔԻԿԻ ՄԱՆԸ 1079 թ.

Գաղիկ բ. Պիղուի շրջակայքում էլ թագաւոր
էր ճանաչւում և հայատեաց յոյներին պատժելով ա-
մենքին պատկառելի էր դարձել:

Կեսարիոյ յոյն հայտաւեաց մետրոպօլիտը՝ իր
շան անունը Արմէն էր դրել: Գաղիկը լսեց այս և
դնաց նրա ծօտ: Մետրոպօլիտը լաւ ընդունեց և
Գաղիկը նաշին խնդրեց կանչել շանը: Մետրոպօլիտը
շփոթում ասիպուեց կանչել «Արմէն», այն ժամա-
նակ Գաղիկը աչքով արեց իր սպասաւորներին, ո-
րոնք բռնեցին մետրոպօլիտին ու շանը, զրին մի
պարկի մէջ և շանը այնքան ծեծեցին, որ կատաղած
խածնելով սպանեց մետրոպօլիտին: Յոյներն այս
արարքի վրէժը լուծեցին. երբ մի օր Գաղիկն իր

դօրքով բաժանուած երեք հոգով Կիլիստրա բերդը
գնաց, դարան մտած յոյները բռնեցին նրան և բեր-
դի Մանգալեայ իշխանները բերդից կախեցին նրան:
Այս անցքից քիչ լետոյ մեռան Գաղիկի Յովհան-
նէս և Դաւիթ որդիքը և վերջացաւ Բաղրա-
տունեաց հարստութիւնը:



ՌՈՒԲՐ ՆԵԱՆՔ ԵՒ ԼՈՒՍԻՆԵԱՆՔ

ՌՈՒԲԷՆ Ա. ԵՒ ԿՈՍՏՍՆԴԻՆ Ա.

Բաղրատունեաց անկումից յետոյ Հայաստանն այս ու այն ազգերի շահատակութեանց ասպարէկ դարձաւ և հայերը թողին իրենց տունն ու տեղը և սկսան դաշխել: Ոմանք բոլորովին հեռացան հայրենիքից, ոմանք լեռները ու անձաւները թափնուցան, իսկ ոմանք էլ անցան Կիլիկիա՝ Տօրոսի հայերի մօտ, որոյ մի ստուարաթիւ գաղութ կազմուեց:

Գաղիկի ազգական Ռուբէն իշխանը, որ Գաղիկի հետ էր եղել երբ նրան յօները բռնեցին, զինուէց յունաց զէմ, միայեալ հայերի զլուսն անցած մի քանի քաղաքների տիրեց և մի իշխանապետութիւն կազմեց 1080 թ: Նրան օգնեցին Գոզ Վասիլ, Ապիրատ և Լամբրոնի Օշին իշխանները:

Ռուբէնն իշխեց 15 տարի և 1095 թ. մեռաւ և նրան յաջորդեց Կոստանդին որդին, որ իր երկիրը ընդարձակեց և Վանկայ բերդին տիրելով իր աթոռանիստ դարձրեց: Կոստանդին Ա.-ի օրով երևացին Երուսաղէմը մահմետականներից ազատող Եւրոպայի խաչակիր զօրքերը, որոնց նա օգնեց և խաչակիրների առաջնորդ իշխանները նրան մարկիդի ու կոմսի տիրոջներ տուին:

ԹՈՐՈՍ Ա. ԵՒ ԼԵՒՈՆ Ա.

Կոստանդին Ա.-ի յաջորդ Թորոսը (1100—1123) քաջ և իմաստուն իշխանապետ եղաւ: Նա սկսեց Կիլիկիան մաքրել յոյներէից, սակայն մահմեդականները



մտան Տօրոսի լեռների կողմից, որոնց դէմ գնաց
Գող Վասիլը և չաղթեց: Սրանից չետոյ թօրոսը Գա-
զիկին սպանող Մանտալիա իշխաններից Կիզիստրա
քաղաքը պահանջեց և որովհետև նրանք մերժեցին,

ՓՈՐՈՐԱՐ ԴԱՏՔՈՒՄ Է ՄԱՆՏԱԼԻԱ ԻՇԽԱՆՆԵՐԻՆ

զէնքի զօրութեամբ տիրեց, պահանջեց Գաղիկի զգեստներն ու զէնքերը և իշխաններին էլ սպանել տուաւ:

Թորոսին յաջորդեց իր եղբայր Լևոն Ա. (1123—1141 թ.), որ շուտով գրաւեց Տարսոն ու Մամեստիա քաղաքները: Չնայած Լևոնը շարունակ օգնում էր շրջակայ քրիստոնեայ իշխաններին, բայց և այնպէս Անտիոքի ու Մարաշի իշխանները նրան խարդախութեամբ բանտարկեցին և նա պատանդեր, Ատանա ու Մամեստիա քաղաքներն ու մեծ գումար տալով կարողացաւ ազատուել, և գալով Կիլիկիա մեծ զօրքով Անտիոքին մօտեցաւ և այնտեղի իշխանը ստիպուեց հաշտուել ու պատանդներին էլ ազատեց:

Ներթր յոյներին հասաւ. Յովհաննէս Կոմնենոս կայսրը Կիլիկիա արշաւեց, առաւ Անարզաբան ու Վահկայ բերդը, իսկ Լևոնին Ռուբէն ու Թորոս որդւոց հետ բռնեց Կ. Պօլիս տարաւ, ուր Լևոնը մեռաւ բանտում, 1141 թ., Ռուբէնին էլ կուրացրին ու սպանեցին:

ԹՈՐՈՍ Բ. 1144—1168 թ.

Թէպէտ Լևոն Ա. և Ռուբէնը ցաւալի մահով մեռան, բայց Թորոսն իր քաջութիւններով կարողացաւ Յունական զօրքի պաշտօնեայ ղառնալ և երբ կայսրը նորից Կիլիկիա արշաւեց, նա էլ բանակումն էր: Կայսրը սպանուեց և Թորոսն օգտուելով հանգամանքից, մի քահանայի միջոցով հայ իշխաններին իմաց

առւեց իր գալուստը: Անմիջապէս իշխանները պատրաստուեցին և նրա առաջնորդութեամբ տիրեցին Վահկայ բերդին: Մանուէլ կայսրը այս վերածնութեան առաջն առնելու համար Անդրոնիկոս զօրապետին մեծ զօրքով Թորոսի գէժ զրկեց, բայց հայերը յաղթեցին և Թորոսն իրար ետևից առաւ Մսիս, Ատանա, Անարզաբա, Թիլ, Մամեստիա ու այլ քաղաքները և Կիլիկիային տէր եղաւ: Յոյները հայոց գէժ զինեցին Իկոնիոյ Գըլընը Ասլան սուլթանին, բայց Թորոսը նրան էլ յաղթեց և իր եղբօր Ստեփանէի սպանման վրէժը լուծելու համար յունաց երկիրը սկսեց ասպարակել և երբ կայսրը Կիլիկիա եկաւ՝ հաշտուեցան: Թորոսը 24 տարի թագաւորելուց յետոյ մեռաւ 1168 թ. և որդու անչափահաս լինելու պատճառով Թորոսի աներ Թոմաս պալլ լատին իշխանը խնամակալ նշանակուեց:

Թորոսի Մլէհ եղբայրը, որ ձգտում էր իշխանապետութեան, Հալէպի սուլթանի օգնութեամբ 1169 թ. դուրս քշեց խնամակալին և իշխանապետ եղաւ: Մլէհը մի քանի պատերազմ մղեց յայնորի գէժ, իսկ խաչակրութիւնից Կիլիկիայում ֆնացած լատինացիներին, որոնք աշխատում էին հայերին կաթոլիկացնել՝ արտաքսեց իր երկրից: Նա իր անհաշտ բնաւորութեամբ զօրքին էլ իր գէժ զինեց և 1174 թ. սպանուեց:

Մլէհին յաջորդեց իր Ստեփանէ եղբօր որդի Ռուբէն Բ. (1174—1185), որ եկեղեցասէր մարդ լինելով, կամաւորապէս հրաժարուեց զահից և կրօնաւոր եղաւ: Ռուբէնը մեռաւ 1187 թ.:


ԼԵՒՈՆ Բ. 1185—1219 թ.

Ռուբէնն իր գահը յանձնեց իր ԼԵՈՆ եղբօրը, որ հմուտ քաղաքագէտ ու ռազմագէտ մարդ էր և Եւրոպացոյց հետ շփուած լինելով երկիրը նրանց օրինակով բարեկարգեց՝ հիւրանոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ, դպրոցներ բացեց ու ճանապարհներ բաց անել տուաւ, զարկ տուեց երկրագործութեան, նաւարկութեան և վաճառականութեան, իսկ երկրի խաղաղութիւնը ապահովեցնելու համար սահմաններում բերդեր շինեց և սահմանապահ զօրքի թիւն աւելացրեց:

Սոյն բարեփոխութեանց միջոցին Եգիպտոսի սուլթանը առաւ Երուսաղէմը և խաչակիրներին դուրս քշեց: Վերաւորուած Եւրոպացիք նորից խաչակրութիւն կազմեցին և եկան Կիլիկիա իրենց զբլուխ ունենալով դերմանացոյց Փրիգրիխ Բարբարոսսա կայսեր: ԼԵՈՆը շատ օգնեց նրանց և դերմանացոյց կայսրը՝ Փրիգրիխի յաջորդը թագ ուղարկեց, իսկ Գրիգոր Տղայ Կաթողիկոսը 1198 թ. թագաւոր օձեց ԼԵՈՆին: Յունաց կայսրը նոյպէս թագ ուղարկեց և բարեկամացաւ ԼԵՈՆի հետ:

ԼԵՈՆն իրեն մայրաքաղաք ընտրեց Սիս քաղաքը, որ գեղեցիկ շինութիւններով զարդարեց, եւրոպական կարգեր մտցրեց և խնամեացաւ Լուսինեան ցեղի հետ, որով աւելի սերտ կապուեց Եւրոպացոյց հետ:

Դէպի Եւրոպացիք տաժած յարդանքի հետ ԼԵՈՆին անհաճոյ էին նրանց կրօնական միառումները և նա այդ առաքելութեան դէմ էր գնում շարունակ, իսկ մահմեդական հարեւան ազգերը, որոնց մի քանի անգամ յաղթել էր ԼԵՈՆը, շատ էին անհանդստա-



ԼԵՒՈՆ Բ.

նում: Բացի այս ԼԵՈՆը մի քանի անգամ ստիպուած եղաւ Սնտիօքի ու շրջակայ քաղաքների քրիստոնէայ իշխանների դէմ գէնքի դիմելու և փառաւոր յաղթութիւններ տրաւ:

ԼԵՈՆի դէմ փառնոցներ էին նիւթում մի քանի իշխաններ և երբ նա իր աներ Կիպրոսի թագաւորի

մօտից Կիլիկիա էր դալիս՝ Թշնամիները դարան մրտանա։ Լեոնը իր ռազմանաւերով զինադրեց և յաղթանակով Կիլիկիա մտաւ։ Այնտեղ նա լսեց որ Լամբրոնի Հեթում իշխանն ապստամբուել է, իսկոյն բռնեց և որդոց հետ բանտարկեց, կարուածները զրուաւեց և ապա հալէպի Լայասէզգին Լազի սուլթանի վրաւ արշաւեց, որը Կիլիկիային հանգիստ չէր տալիս։ Սուլթանը պարտուեալ իւր կրեց և փախստի զինեց։ Նոյն վիճակի արժանացաւ նաև Դոնիայի սուլթանը։

Եթէ Լեոնի երկիրը ազգային միաբանութեան կեդրոն դառնար, ներկայումս Փոքր Ասիան կունենար մի քաղաքակիրթ կառավարութիւն, բայց նա մեռաւ առանց արժանաւոր ժառանգի 1219 թ. և մարմինը թաղուեց Սիս քաղաքում, իսկ սիրտը իր սիրած Ակներ վանքում։ Լեոն բ. 13 տարի իշխանապետ եղաւ, իսկ 21 տարի թագաւոր։

Լեոնի միակ ժառանգը Զապէլ աղջիկն էր, որ խնամակարնելով թագաւորեց։ Նա ամուսնացաւ Անտիոքի իշխանի Ֆիլիպոս որդու հետ, որ և թագաւորեց, սակայն տեսնելով որ նա թագաւորական դանձն ու հարստութիւնը Անտիոք է ղրկում, հայոց զօրքը բռնեց նրան և բանտարկեց, ուր նա 1225 թ. մեռաւ։ Սրանից չէտոյ երկրի խնամակալ Կոստանդին իշխանը կաթողիկոսի խորհրդով Զապէլին իր Հեթում որդու հետ պսակեց և Հեթումը թագաւորեց։

ՀԵԹՈՒՄ Ա. 1226—1270 թ.

1226 թ. Լամբրոնի իշխանը Սուլմ Հեթումին թաղով պսակեց և նա թագաւոր օծուեց։

Հեթումը աշալուրջ ու գործունեայ մարդ էր և իր ազգի վիճակն էլ բարւոքեց։ Նա շարունակ դործ ունէր թաթարների հետ և իր քաղցր բնաւորութեամբ Կիլիկիան ազատեց նրանց հարուածներից։

Թաթարները ոչոքելով ամբողջ հայաստանը՝ Բաշուի առաջնորդութեամբ Իկոնիա մտան։ Իկոնիոյ սուլթանն իր ընտանիքը Հեթումի մօտ ղրկեց, որպէս զի վտանգից զերծ մնայ, բայց Բաշուն մօտեցաւ Կիլիկիային և Հեթումին պատգամ ղրկեց հաշտուելու եթէ սուլթանի ընտանիքն իրեն յանձնէ. Հեթումը ստիպուած եղաւ պահանջը կատարել։ Իկոնիոյ սուլթանը դժգոհ այս դաւանանութիւնից, Լամբրոնի Կոստանդին իշխանին Հեթումի դէմ զինեց։ Հեթումը Տարսոնն ամրացնելուց չէտոյ մի քանի անգամ ընդհարուեց Կոստանդինի հետ, որի զօրքի մէջ էր և սուլթանը, որը սպառնուեց, իսկ Կոստանդինն էլ ստիպուեց հաշտուել։

Այս պատերազմներից չէտոյ Հեթումը թաթարներին օգնական զօրք ուղարկեց և ինքն էլ գնաց Մանդոյ խանի մօտ։ Նրա բացակայութեան ժամանակ Եգիպտոսի Մամլուկների Փնդուխտար զօրավարը Կիլիկիան ասպատակի մատնեց և Հեթումի Թորոս ու Լեոն որդիքը զուրս եկան նրա դէմ, բայց Թորո-

սը սպանուեց, իսկ Լևոնը դերի ընկաւ: Մամուլնէ-
րը ամբողջ Կիլիկիան ոտի տակ տուին, այրեցին Սի-
սը և թագաւորների գերեզմանները բանալով ոսկոր-
ները հանեցին: Հեթումը Կիլիկիա շտապեց և ուզեց



«ՀԵԹՈՒՄԸ ՈՂԲՈՒՄ Է».

դոնէ Լևոնին գերութիւնից ազատել, որի համար Մա-
մուլները պահանջեցին որ թաթարները ետ տան
Հալէպ քաղաքը. Հեթումն այս էլ չաջողեցրեց, ազա-
տեց Լևոնին և մի տարի յետոյ Մակար անուհով
կրօնաւոր դարձաւ, իսկ թագաւորութիւնը յանձնեց
Լևոնին և քիչ յետոյ մեռաւ:

ԼԵՒՈՆ Գ. 1271—1289 թ.

Հօր մահը այնքան վշտացրեց Լևոն Գ-ին, որ
նա հիւանդանալով երեք ամիս անկողնին ծառայեց
ու 1271 թ. Տարսոնում թագաւոր օծուեց: Ուրա-
խութիւնը ընդհանուր էր և Լևոնը ներեց քաղաքա-
կան յանցաւորներին, աղքատներին առատ նուէրներ
տուեց, զօրքի ռոտիկներն սուելացրեց, եկեղեցիները
նորոգեց և ուսման ծաւալմանը ձեռք զարկեց:

Թագաւորի ժողովրդասիրութիւնը դուր չեկաւ
պարոններին (իշխաններին) և զաղանի դաւադրու-
թիւն սարքեցին նրա դէմ, բայց շուտով իմացուեց:
Չնայած Սելջուկեանք երկիրը աւերի մատնեցին և
հինգ տարի հայերը տառապում էին, այնուամենայ-
նիւ իշխանները չօղնեցին Լևոնին:

Այս անհամաձայնութիւններին աւելացաւ մի
նոր աղէտ. մամուլները մի կողմից, իսկ ժամատախտը
միւս կողմից սկսեցին իրենց հունձը. Լևոնին էլ ըն-
տանեկան դժբաղդութիւն պատահեց, բայց պարոն-
ները մնացին անշարժ և Լևոնը իր ծերունի եղբօր
Սմբատին զրկեց մամուլների դէմ. Սմբատը դուրս
բշեց նրանց և Փնդուխտաբը Դամասկոս փախչելով
ազատուեց: Այս յաղթութիւնը հողի տուեց Լևոնին
և Ղոնիայի սուլթանին էլ, որ շարունակ անհանգստա-
ցնում էր Կիլիկիան՝ յաղթեց և թաթարներին էլ
օղնեց մամուլների դէմ:

Լևոնը մահից առաջ իրեն ժառանգ նշանակեց
Հեթում որդուն և 1289 թ մեռաւ:

ԼԵՒՈՆ Գ-Ի ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

ԼԵՒՈՆ Գ-Ի մահից յետոյ Կիլիկիան աւելի աղմբ-
կուեց. մի կողմից ներքին պառակտումը, միւս կող-
մից արտաքին յարձակումները Հին թողնում, որ եր-
կիրը խաղաղութիւն երբորդ ցաւը պապականութեան
շատադով քարոզիչներն էին, որ հայերին հանդիստ
Հին տալիս:

Հետեւ Բ. 1289 թ. թագաւորեց, բայց աւե-
լի եկեղեցուն նուիրուեց քան երկրին և Եգիպտոսի
սուլթան Մալէք-ալ-Աշրէֆ Սալահէտտինը անհամար
զօրքով ներս խուժեց Կիլիկիա, առաւ հռոմկայ բերդը
ու Ստեփանոս կաթողիկոսին ս. Լուսաւորչի աջի հետ
զերի տարաւ Եգիպտոս:

Այս դէպքից քիչ յետոյ Եգիպտոսում սաստիկ
ժանտախտ երեւաց. սուլթանն այս բանը ս. Աշի
զերմանը վերադրեց, ուստի հաշտուեց Հետեւի հետ
և ետ դարձրեց ս. Աշի: 1293 թ. Հետեւը կրօնա-
ւոր եղաւ և տէրութիւնը իր եղբօր Թորոս Գ-ին
յանձնեց, որը նոյնպէս կրօնաւոր եղաւ և Հետեւը
ստիպուեց նորից իր գահը վերադառնալ: Հետեւը
իր քոյրերի միջոցով խնամեացաւ յունաց և Կիպրոս-
ցոց հետ և 1296 թ. Թորոսի հետ Կ. Պօլիս գնաց:

Հետեւը իր տեղը թողեց Սմբատ եղբորը,
բայց նա եղբօր վստահութիւնն չէր գործ դրեց
և 1296 թ. թագաւոր օծուեց: Հետեւը Կիլիկիա

շատապէց, բայց պարոնները նրան մայրաքաղաքից վը-
ռնդեցին և նա ստիպուած յոյներից ու թաթարնե-
րից օգնութիւն խնդրեց, որոնք մերժեցին: Սմբատը
աւելի մեծ չարութեան ձեռնամուխ եղաւ, Թորոսին
սպանեց, իսկ Հետեւին կուրացրեց: Սրանց վրէժը
լուծեց չորրորդ եղբայր Կոստանդինը, զօրքը դրդուեց
նրա դէմ և 1298 թ. նրան դահիճեց անելով ինքը
թագաւորեց:

Այդ խլրաւումների ժամանակ Հետեւի աջերը,
ինչպէս պատմում են, բացուեցան և նա 1299 թ.
նորից թագաւորեց, իսկ երկրի խաղաղութիւնը չը
վրդովելու համար Սմբատին ու Կոստանդինին Կ. Պօ-
լիս կայսեր մօտ դրկեց՝ խնդրելով Հետեւ սալ նրանց
Կիլիկիա գալու: Հետեւը վերջապէս զգաստացաւ
և ժողովրդին իր հետ կապելու համար արտաքին
թշնամիների դէմ գնաց ու Դամասկոսի էմիրին մի
կրճում շրջապատելով սարսափելի կոտորածից
յետոյ ետ մղեց, իսկ էմիրին զերելով թաթարաց
Ղազան Խանին ուղարկեց:

1305 թ. Հետեւը բոլորովին հրաժարուեց
գահից և Թորոսի ԼԵՒՈՆ որդուն թագաւոր օծել տուաւ:

ԼԵՒՈՆ Գ. իր լատինասիրութեամբ ու կաթոլի-
կասիրութեամբ բոլորովին զոռեցրեց հայերին և նը-
րանք չարիքի առաջն առնելու համար ապստամբուե-
ցան: Թաթարաց Պիլարդու զօրավարը, որ Անար-
դարալումն էր, սպանել տուաւ ԼԵՒՈՆ ու արքայա-
հօր Հետեւ Բ. 1307 թ. և երկիրը խաղաղուեց:

Լևոնի Օշին եղբայրը նրանց մահը լսելով զօրքի զուխն անցաւ, Պիլարդուին դուրս քշեց Կիլիկիայից և հաշտուեց հաջոց սահմանակից լատին իշխանների հետ 1308 թ., լաաինուհու հետ պսակուեց և կաթողիկոսարութեամբ եկեղեցական ու ազգային անկարգութիւնների տեղիք տուեց և 1320 թ. մեռաւ:

ԼԵՒՈՆ Ե. 1320—1342.

Օշինին յաջորդեց Լևոն Ե. որդին, որ 10 տարեկան լինելով Օշին իշխանը խնամակալ նշանակեց: Լևոն Ե-ի անգութ ու անքաղաքադէտ բարքն աւելի արագացրեց Ռուբինեանց անկումը, իսկ երկրի խնամակալը մի վնասակար մարդ էր:

Եգիպտոսի և Բաղդադի Մալէք-ալ-Նազար սուլթանը Փոքր Ասիայից քրիստոնէութիւնը հալածելու նպատակով յաջող արշաւանքով Կիլիկիային մօտեցաւ: Լևոնը դիմեց Եւրոպացոց, որոնք անմիջապէս կրօնական խնդիրը մէջ գցեցին, իսկ Եգիպտացիք աւերեցին Երկիրը և Լևոնից երդմնաթուղթ վերցրին Եւրոպացոց հետ յարաբերութիւնները խզելու մասին:

Հարուածը շատ մեծ էր, 25 օր. հուր ու սուր էր թագաւորումը, աւարով ու գերիներով չղկացած թշնամին հազիւ հազ հեռացաւ Կիլիկիայից: Ժողովուրդը երկրի բաղդը անօրինոյնների անփութութիւնը տեսնելով ինքնապաշտպանութեան գնդեր կազ-

մեց, որոնք կրճերում ու ամրութիւններից թշնամու գէմ էին ելնում: Այս բոլորի հետ միացաւ և սովր և թագաւորի վարկը բոլորովին ընկաւ: Եւրոպացիք դրամական ու ալիւրի աննշան օգնութիւն հասցրին, բայց Մալէք-ալ-Նազարը լսելով այս բանը՝ 1335-ին և 1337-ին Կիլիկիայի վրայ յարձակուեց և թագաւորից խաչի ու աւետարանի վրայ երդմնաթուղթ վերցրեց: 1342 թ. մեռաւ Լևոն Ե.:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. ԵՒ ԳԻԻԻԴՈՆ

Լևոն Ե. մեռաւ. անժառանգ և Ռուբինեանց ստիճը վերջացաւ, երկիրը քնաց բաղդախնդիր լատին իշխանների ձեռքին, որոնք չեթում Բ-ի քրոջ Զապելի (ամուսնացած էր Կիպրոսի թագաւորի եղբօր հետ) որդի՝ հաջոց դուշստարը Յովաննէսին թագաւոր ընտրեցին և Կոստանդին Գ. անուամբ 1342 թ. զահր նստեցրին: Այսպիսով սկսեց Լուսինեան ստիճը:

Կոստանդին Գ. իր անխոհեմ ընթացքով մեծ խռովութիւնների պատճառ դարձաւ: Ծիշտ է արքունիքը Եւրոպական նորամուծութիւններով լցրեց, բայց ազգային սովորոյթները վերացան և ժողովուրդը խորթացաւ թագաւորից, բայց ամենից աւելի վնասեց թագաւորի կաթողիկ հողին և ժողովուրդը զօրքի հետ սպանեց նրան հազիւ մի տարի թագաւորելուց յետոյ:

Կոստանդինի անդ 1342 թ. Ստում թագաւոր

օծուեց իր Գիւղոն եղբայրը, որ իր եղբոր օրինակին հետեւեց. հայրենասէր հայերը զգուշացրին նրան, բայց նա չուղղուեց և երկու տարի թագաւորելուց յետոյ նրան էլ սպանեցին:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. 1345—1362 թ.

Գիւղոնի մահից յետոյ հայերը լաւ հասկանալով լատինահայ թագաւորների միտումները՝ մօր կողմից Ռուբինեան Կոստանդին իշխանին թագաւոր ընտրեցին: Սա առաքինի մարդ էր և խիստ հրամանարժակեց կրօնական վէճերին վերջ տալ, հայրենի կարգերը վերականգնեց, իր ուշադրութիւնը ժողովրդի տնօրեայ կեանքի վրայ կենտրոնացրեց:

Կիլիկիոյ վիճակի բարւոքումը Եգիպտոսի սուլթանին հանդիսա չէր տալիս, որովհետեւ նա վախճում էր նոր խաչակրութիւնից և հայոց թաւթաւորութեան վերջ տալու նպատակով Այսս բերդն առաւ: Կոստանդին Դ. Կիպրոսի թագաւորից և չրոպոսի ասպետներից եկած օգնական զօրքերով յաղթեց նրանց և Եւրոպա աւետարեք զեսպաններ զըրկեց օգնութիւն խնդրելու, սակայն ունայն անցան և նա ծովի կողմից Կիպրոսի նաւատորմիղի վրայ յուսացած ցամաքով յարձակուեց մամլուկների վրայ և 1357 թ. Ալէքսանդրեղա զղեակը խլեց:

Այս յաղթութիւնը մի փոքր շունչ տուեց Կիլիկիային, սակայն 1362 թ. Կոստանդինը մեռաւ անժառանգ և երկիրը քնաց անխնամ:

Կոստանդին Դ-ի մահից յետոյ թագաւոր ընտրուեց ոմն Կիպրացի Կոստանդին, որ մի ժամանակ ճորտ էր եղել և վերջը չափազանց հարստացել էր: Կոստանդին Ե. իր ապահովութեան համար Կիպրոսի Պետրոս թագաւորին հպատակման խոստում տուեց, եթէ իրեն թագաւոր ճանաչէ: Շուտով Կոստանդին Ե-ի ազահուլութիւնը իմացուեց, որովհետեւ երկիրը կեղեքելուց յետոյ արքունի գանձերն էլ սեփականեց: Այս որ իմացան հայերը 1373 թ. յանկարծ սպանեցին նրան:

ԼԵՒՈՆ Զ. 1373—1375 թ.

Կոստանդին Ե-ի կեանքի զէժ զաւադրութիւն էր ծրագրած և որպէս ժառանգի Լեւոն Զ-ին հրաւիրել էին թագաւորելու: Վերջապէս Լեւոն Զ. Եւրոպացի 25 հեծելադիւնների ուղեկցութեամբ հասաւ Սիս, որ հայ թագաւորների միակ սեփականութիւնն էր: Լեւոնը պահանջեց իրեն որպէս կաթողիկի ալֆժէսով օժել: Այս բանի համար ընդհանուր անբաւականութիւն ծագեց. ժողովուրդն աւելի լաւ էր համարում մահմեդականներին հպատակիլ քան Լեւոնին և կաթողիկոսի համաձայնութեամբ 1375 թ. հրաւիրեցին Մելիք Աշրաֆ Շաբան սուլթանին, որ յարձակուեց Սիս բերդի վրայ. թէպէտ Լեւոն Զ. զիմադրեց, բայց ծնօտը վիրաւորելով անկողին մտաւ: Շուտով բերդն առնուեցաւ և մահմեդականները Լեւոնին դերի բռնելով Գահիրէ տարան: Լեւոնը ապրում էր Եգիպտոսում և ոչ մի կերպ չկարողացաւ սպասուել: 1377 թ. մի խումբ ուխտաւորներ եկան

Գահիրէ, որոնք Եւրոպայից Երուսաղէմ էին գնում, որոնցից Յովհաննէս Դարպէլ անունով մէկ կաթողիկ հոգեւորական որպէս խոստովանահայր Ֆնաց Լեւոնի մօտ, բայց տեսնելով նրա տառապանքը՝ զնաց Եւրոպա, բարեխօսեց Արաբոնի և Կաստիլիայի Թագաւորներին առաջ և նրանց միջնորդութեամբ Լեւոնը 1382 թ. դերութիւնից ազատուած Եւրոպա անցաւ, դիմեց Աւենիոնի և Հռոմի պապերին, որ օգնեն հայոց դահր նստելու, բայց յուսակաւոր իր բարերարներին դիմեց, դարձեալ ոչինչ չեղաւ, միայն Կաստիլիայում ապրելու համար երեք քաղաք ստացաւ։ Լեւոնը չհանգստացաւ, զնաց Փարիզ, ուր շատ շքեղ կերպով ընդունեցին նրան և որովհետեւ Ֆրանսիայի Թագաւորը Անգլիացոց հետ վեհի էր բռնըլած միջնորդի պաշտօնը Լեւոնին վիճակուեց և նա հաշտեցրեց ու Փարիզում բնակութիւն հաստատեց։ 1393 թ. նոյեմբեր 22-ին Փարիզում մեռաւ Լեւոնը և Թաղուեց իր կտակի համաձայն Կլիստինեանց վանքում։

1789 թ. Ֆրանսիական լեղափոխութեան ժամանակ Լեւոնի մահարձանը տեղափոխեցին և ներկայումս գտնուում է Սէն-Դերնիի արքայական դամբարանում։

Լեւոնի մահով հայոց Թագաւորութիւնը բոլորովին վերջացաւ։

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ.

ՍԵԼԻՔՅԱՅ

ԵՒ

ՓԱՆՏՈՒՆ

Բաղրաստունեաց անկումից յետոյ 40 տարի շարունակ Հայաստանի արեւմտեան մասը Ֆնաց յունաց ձեռքին, արեւելեանը՝ պարսից, հիւսիսայինը՝ վրաց, իսկ հարաւայինը՝ արաբացոց։ Պարսկաստանում Թագաւորեց Ալիաշանի որդի Մելիքշահը, որ օգտուելով հանգամանքներից մեծ զօրքով Հայաստան արշաւեց և ամբողջ երկրի տէր դարձաւ (1086—1093 թ.)։ Նրա մահից յետոյ Հայաստանը նորից բաժանուեց և վրաց Դաւիթ Թագաւորը 1124 թ. մինչև Շիրակ հասաւ և հաղիւ ժողովուրդը շունչ քաշեց ու փախչողներն էլ տեղները վերադարձան։ Սակայն շուտով խախտուեց խաղաղութիւնը, որովհետեւ Անիի նախկին ամիրայի որդի Փալտունը խլեց Շիրակը վրացիներից և Անին էլ պաշարելով առաւ։

Երկրի այս Թշուառ կացութիւնը Վրաստանում արծազանք գտաւ և վրաց ծառայութեան մէջ եղած Զաքարէ և Իվանէ Սանահնեցի հայ իշխանները վրացի ու հայ զօրքով Շիրակ արշաւեցին ու ամբողջ հիւսիսային Հայաստանը վրացիներին Ֆնաց 1160—1220 թ.։

ԹԱԹԱՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆ-
ՆՈՒՄ

ԺԳ-րորդ դարու սկզբում Ասիայի Թա-
թարները զորանալով Զինդիզխանի ա-
ռաջնորդութեամբ Ասիայի արեւմտեան
մասը նուաճեցին և Խորազմի Զալալ-
էդդին սուլթանին իր երկրից դուրս քշեցին։ Զա-
լալէդդինն իր բարեութիւնը հայոց վրայ թափեց։
Նրա զէժ դուրս եկան Կիլիկիոյ հայ զորքերը և նա
ստիպուած Պարսկաստան փախաւ։ 1233 թ. Զար-
մաղանը Թաթար զօրքով հայաստան արշաւեց։ Նը-
րանց զօրքով անդթուլթիւններն անկարելի է նկա-
րագրել և հայերը թողին հայրենիքն ու սկսեցին
գաղթել—փախչել։ Զարմաղանից փաթար ու ան-
գութ էր Բաղուն, որ տիրեց Կարինին, քաղաքներ,
գաւառներ մոխիր դարձրեց և բնակիչներին էլ ծա-
նրը հարկերի ենթարկեց։

90 տարի շարունակ Թաթարները հայի արիւ-
նով ողողեցին հայոց աշխարհը, երկիրը բաժան բա-
ժան եղաւ. հարաւային գաւառները քիւրդ բէկերին
ձնաց, արեւելեանը՝ պարսիկներին, արեւմտեանը՝
թիւրքմէններին, իսկ վերջը օսմաններին։

Փոթորիկը դեռ չէր դադարել, երբ
ԼԵՆԿԹԻՄՈՒՐ
1387 թ. գաւորը տիրեց Թաթարստանին և
1387 թ. Պարսկաստանի վրայով հա-
յաստան արշաւեց, մտաւ Սիւնիք և աւերի մատնեց,
բնակիչներին սրի անցկացրեց, առաւ Վանը, Փոքր
Ասիա մտաւ և ամեն տեսակ անգթութիւններից

չէտոյ Սամարղանդ դարձաւ, որտեղ և մեռաւ։

Ս Ո Վ
Լէնկթիմուրի մահը հայոց նախկին
պապար լրացրին։ Շարունակական կռիւներից երկի-
րը անմշակ քնալով անասելի սով բնկաւ, որին հետե-
ւեց համաճարակ հիւանդութիւնը և հայն նորից փա-
խստի դիմեց, իսկ թիւրքմէնների Ղարաիւսուփ զօրափա-
րի որդին և Լանկթիմուրի Շահրուխ որդին 1410
—1430 հայաստանը պատերազմների տապարէղ
դարձրին։

Այդ ժամանակ Փոքր Ասիայում շատ
ՍԷՅԵՄԵՏ Բ. էին զօրացել Օսմանեան ցեղերը, որոնք
ՍՈՒԼԹԱՆ մինչև Պրուսա հասան։ 1453 թ. մա-
լխին Մէհմէտ Բ. սուլթանը Կ. Պո-
լիսն առաւ։ Այս սուլթանը հպատակների հետ շատ
լաւ վարուեց ու երկրի առետուրը ծաղկեցնելու
պատրուակով հայերին Կ. Պոլիս հրաւիրեց, բնակու-
թան տեղեր տուեց և իր խոստման համաձայն Պրու-
սացի Յովակիմ եպիսկոպոսին 1461 թ. հայոց պատ-
րիարք նշանակեց առանձին արաօնութիւններով։
Այստեղից սկիզբ առաւ Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը։

ՄԼՆՈՅՆ ժամանակներում աննախան-
ՍՍԻ ԿԱԹՈՒ-
մէլի էր և հայոց կաթողիկոսութեան
ՂԻԿՈՍՈՒԹԻՆ վիճակը։ Ռուբինեանց օրով կաթողիկոսի
կայան Սիս քաղաքն էր, 1440 թ. Գրի-
գոր Թ. կաթողիկոսացաւ և հէնց առաջին օրից երկպա-
ռակութիւնների տեղիք տուեց, որի համար և հայերը
1441 թ. էջմիածնու մ Կիրակոս Վիրապեցուն կաթողի-
կոս ընտրեցին և այսպիսով միաժամանակ երկու կաթողի-

կոսութիւն ունեցանք, որ այսօր էլ շարունակուած են։
 ՕՍՄԱՆԵԱՆՔ ՄԷՀԷՃԷՄ Բ. իր երկրի սահմանները
 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ շուտով ընդարձակեց և 1473 թ. Դեր-
 ջանի մօտ յաղթելով թիւրքմէնների Ուզուն Հասան
 իշխանին Հայաստանի մի մասին տիրեց։ 40 տար-
 ւայ զինադադարից յետոյ Օսմանցիք նորից պէնքի դի-
 մեցին Իսմայիլ Շահի դէմ և 1514 թ. Սելիմ Ա.
 սուլթանը Հայաստանի հիւսիսային գաւառներն էլ
 խլեց պարսիկներից։ Բայց պարսիկները չխրատուեցան
 և Թահմազշահի օրով երկար ընդհարումներ ունե-
 ցան, մինչև որ 1533 թ. Իբրահիմ փաշան յաղթեց,
 իսկ երբ Թահմազը նորից պատերազմ հրատարակեց
 սուլթան Սուլէյման Ա. 1555 թ. անձամբ հաշտու-
 թիւն կնքեց Ամասիա քաղաքում։

ՇԱՀ ԱԲԲԱՍԻ 1587 թ. Պարսկաստանում թագաւո-
 րեց Շահ Աբբաս Մեծը, որ սպանել էր
 ԱՐՁԱԽԱՆՔԸ իր հօրը և եղբայրներին։ Սա շատ խե-
 լօք մարդ էր և առաջին օրից Եւրոպացոց հետ յա-
 րաբերութիւն սկսեց, Անգլիայից ռազմադէտներ հրա-
 ւիրեց իւր զօրքը կրթելու համար։ Շահ Աբբասը
 1603 թ. Թուրքիոյն առաւ և Օսմանեանք Սինան
 փաշային մեծ զօրքով նրա դէմ ուղարկեցին, որով-
 հետևե նա մտել էր նաև Այրարատ։ Դեռ ևս Օսման-
 ցի զօրքը չհասած Շահ Աբբասը հրամայեց Այրարա-
 տի բոլոր հայերին Արարատեան դաշար ժողովել։
 Սկսուեց մի չտեսնուած դաղթ. երկիրը ամապացաւ,
 աւերուեց և թշուառ ժողովուրդը ոչխարի պէս

քշուելով Երասխի ափին կանգ առաւ։ Շահ Աբբասը
 վախենալով՝ որ Օսմանցիք չհասնեն, հրամայեց ան-
 ցնել դետով։ Գետում եղած նաւերը բաւ չէին, իսկ
 պարսիկները ժողովրդին վախեցնում էին պատիժներով՝
 ոմանց գլուխը կտրելով ման էին ածում ժողովրդի մէջ,
 ոմանց ցցի վրայ սպանեցին։ Յուսահատ ժողովուրդը գե-



ՇԱՀ ԱԲԲԱՍԸ ՔՇՈՒՄ Է ՀԱՅԵՐԻՆ...

տը թափուեց, որ լողալով անցնեն. բացուեց մի չտես-
 նուած տեսարան, ժողովրդի կահանք երկնքի գուլթն
 էր շարժում, շատերը խեղդուեցին, իսկ անցնողնե-
 րին 1605 թ. օգոստոսին քշեցին «արսկասաան տա-
 րան։

Շահ Աբբասին լաւ բնդունելութիւն արեց Զուղա հարուստ քաղաքը, որի բնակիչները հարուստ վանառականներ էին: Երբ հայերն անցան զեառով պարսիկները հակառակ իրենց խոստման եւս դարձան այրեցին Զուղան: Զուղայեցիք զաղթելով Սպահանի մօտ Ն. ր. Զուղան հիմնեցին:

Շահր հայերի հետ շատ լաւ վարուեց, կրօնի աղատութիւն շնորհեց և հանդիսաւոր տօներին նոյն իսկ հայոց եկեղեցի էր գնում, հայ հարուստների հետ ճաշում, թեթեւ հարկեր վերցնում և հայերին զրկող պարսիկներին խստիւ պատժում: Շահ Աբբասը երկար պատերազմներ մղեց և 1613 թ. միայն հաշտուեց Օսմանցոյ հետ, որով Հայաստանի արեւելեան մասը մնաց պարսից:

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԱՍԾԱՆՈՒՄ.

Պարսկաստան զաղթած հայերից շատերը զաղտնի հայրենիք վերադարձան, իսկ Նոր Զուղան շուտով առւարի կեդրոն դարձաւ, Հնդկաստանի հետ յարաբերութեան մէջ մտաւ և նրանց կարաւանները զրնում էին Թիֆլիս, Քէֆէ, Տրապիզոն, Զմիւռնիա, Կ. Պօլիս, իսկ ապրանքները ձենովա, Վենետիկ, Մարսէյլ, Ամստերդամ և այլ տեղեր:

Հայերը Ռուսաստան են գնացել զեռ ևս Զ. դարում, երբ ռուսները չկային: ԺԱ.—ԺԲ. դարում Կազանի մօտ զաղութներ ունէին, 1062 թ.

հայերը Կիւեի իշխանապետին օգնեցին Լէհերի հետ ռենցած պատերազմում, իսկ ԺԶ. դարում Աստրախանի վրայով Ռուսիոյ հետ առւարուր սկսեցին: 1626 թ. Պարսկաստանից Ռուսաստան գնաց հայ վանառականների պատգամաւոր Զաքար Սարհատեանցը և բաղմատեսակ ընծաների հետ Ռուսաց Ալեքսէյ Միխայլովիչ թագաւորին մի թանկագին զանրնայ տարաւ: Ռուսաց արքունիքը շատ հաւանեց հայոց արտադրութիւնները և 1667 թ. Նոր Զուղայի վանառականներին իրաւունքներ շնորհեց:

Պետրոս Մեծը թագաւորելով՝ հայերին 1708 թ. աւելի մեծ արտօնութիւններ տուեց և Տաճկահայերին էլ Պետրոս Արք. վանառականի միջոցով իրաւունքներ շնորհեց: 1710 թ. Սափար Բարսեղեանը Թերեք գետի ափին մետաքսի գործարան բացեց:

Բայց հայերն իրենց անցեալ փառքսը չէին մոռացել և Սիւնիք կամ Ղարաբաղը մի փոքրիկ տէրութեան էր նմանում բաժանուած հինգ զաւառների Զարաբերդ, Գիւլիստան, Վարանդա, Խաչէն և Տուղախ, որոնք կառավարւում էին հայ մէլիքներով և նրանք երբեմն իշխում էին ինքնապաշտ, իսկ երբեմն էլ Պարսկաստանին հարկ էին տալիս:

Մելիքները զաղտնի յարաբերութիւններով փաղուց ծրագրել էին քրիստոնէայ տէրութեան հովանաւորութեամբ հայկական տէրութիւն հաստատել և Եւրոպայի հետ յարաբերութիւն սկսեցին:

Իրանց միջնորդ հանդիսացաւ Իսրայէլ Օրի հայ
իշխանը, որ բոսոս ոմանց Պռօշ
ԻՍՐԱՅԷԼ ՕՐԻ
1698—1711
իշխանի սերունդից էր։ Սա գնա-
լով Փրանսիա զինուորական ծա-
ռայութիւն մտաւ և հայերի համար

միջնորդեց և որպէս զի մօտից ծանօթանայ 1699
թ. գնաց Ղարաբաղ Բաւարիոյ կիւրֆիւրստի նա-
մակներով և տեսնուեց մէլիք Սաֆրազի հետ։ Մե-
լիքները նրան Մինաս վարդապետի հետ որպէս պատ-
գամաւոր ետ զրկեցին նոյն տարուայ գարնանը։ Եւ-
րոպացիք նրան մեծ խոստումներ տուին և նա 1700
թ. գնաց Ռուսիա, ներկայացաւ Պետրոս Մեծին և
յետոյ գրաւոր զեկուցադրով ցոյց տուեց, որ եթէ միայն
10—20 հազար զինուոր մօտենայ Հայաստանին, հա-
յերը 100,000 զինուոր կ'հանեն և կ'սիրեն երկրին։
Մինչ մէլիքները պատրաստութիւն էին տեսնուծ,
Օրին նորից Եւրոպա անցաւ և շահի անունով նա-
մակներով Սպահան գնաց 1709 թ.։ Թէ ինչ արեց
Օրին չերեւաց, որովհետեւ 1711 թ. օգոստոսին Ա-
սորախանուծ մեռաւ։

Օրիի սկսած գործը շարունակեց
ՊԵՏՐՈՍ ՄԵԾԻ Մինաս վարդապետը, որ վերջը ռու-
սահայոց առաջնորդ էր նշանակուել։
ԱՐՁԱԽԱՆՔԸ Պետրոս Մեծը հաւաքած տեղեկու-
թիւնների հիման վրայ 1722 թ. Դերբենդ հասաւ
և Շամախի պիտի գնար, երբ յանկարծ սկսեց նա-
հանջել, իսկ հայերը յուսացած Գանձասարը կեդրոն

դարձած բանակ էին կազմուծ, երբ յուսակաւորը մնա-
ցին։ Պարսիկները, որ օսմանցոց և ռուսաց հետ
պատերազմներ ունէին՝ շուտով հաշտուեցին և իմանա-
լով հայերի միտքը երկիրը ասպատակի մատնեցին։ Հա-
րաւոր ինքնապաշտպանութեան դիմեց ու 500

կորիչների զլուխն անցաւ Վրաստա-
նից նոր եկած Դաւիթ բէկը 1722

թ.։ Նրա հետ միացան Մխիթար ու
Տէր-Աւետիք հայրենասէրները, որոնք

մի քանի հազար զինուոր ժողովեցին։



Պարսից հետ ունեցած առաջին ընդհարումը
շատ չափով էր, բայց Նախիջևանի մօտ հայերը պար-
տութիւն կրեցին և Դաւիթ բէկը հոլիւծորուծ ամ-

րացաւ: Հայերը խրախուսուած աւելի մեծ թուով խմբուեցան ազատարարների շուրջը և 1724 թ. Ստեփան Շահումեան զօրապետը 2000 զինուորով Մեղրի քաղաքի մօտ յաղթեց պարսից զօրքին, իսկ մի մասն էլ թիւրքմէններին ցիր ու ցան արին:

1727 թ. Օսմանցիք Ղափան մտնելով Դաւիթ բէկին յաղթեցին և հողիծորը պաշարեցին 6 օր շարունակ, բայց Տէր Աւետիքն իր 300 քաջերով դըրսից Դաւիթ բէկն էլ ներսից յանկարծ յարձակուեցան և փախցրին նրանց: Դաւիթ բէկը հաշտուեց պարսից հետ, մի քանի քաղաքների տիրեց ու Ազուլիս մտաւ: Տեղացիք Մէլիք Մուսինից զրգուռած դէմ էլան և նրա պատգամաւոր Մէլիք Փարսադանին էլ սպանեցին և Դաւիթը ստիպուած հեռացաւ ալանեղից ու 1728 թ. մեռաւ:

Դաւիթ բէկից յետոյ Մխիթար սպարապետն ուղեց առաջ տանել գործը և Օսմանցոց դէմ պատերազմներ մղեց, բայց հայերը խնձորեսքում սպանեցին նրան 1730 թ. և գլուխը Օսմանցոց փաշային զըրկեցին: Փաշան զայրանալով որ այդպիսի քաջ մարդ էին սպանել՝ սպանողներին մեռցրեց: Մխիթարի մահով էլ հայոց շարժումը չդադարեց, որովհետև մէլիքները շարունակուած էին իրենց սկսած գործը և 1729 թ. Մէլիք Աւանը իր եղբօր Թարխան Իւզբաշուն նամակով Պետերբուրգ ղրկեց, յայտնելով որ հայոց բանակը սպասում է, բայց ռուսաց արքունիքը մերժեց և մէլիքներին առաջարկեց զաղթել Ռուսաստան:

Այս հրաւերը շատերին խաբեց և երկրի ղեկավարները թողին հայերին անխնամ ու զաղթեցին:

1732 թ. Պարսկաստանում թաղաւաճւորեց Նոտրը շահը, որ 1735 թ. Ախալքեանի հովտում յաղթեց օսմանցոց և դաշն կապեց և այսպիսով Հայաստանը կրկին օսմանցոց ու պարսից մէջ բաժանուեց: Նոտրը շահին մօտիկ բարեկամ էր հայոց Աբրահամ կաթողիկոսը, որի համար և շահը հայերի հետ լու էր վարուած, իսկ կաթողիկոսը մինչև անգամ Մուղանի դաշտում օրհնեց նրա թուրը և կապեց շահի մէջքին:

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐ.

ԺԱ. դարում բազմաթիւ հայեր Ղրիմի վրայով Եւրոպա անցան և Գալիցիայում ու առհասարակ Լեհաստանում բնակութիւն հաստատեցին: 1280 թ. հայերն այնքան էին բազմացել, որ Գալիցիայի Լև Դանիլովիչ իշխանը հայերին հրաւիրեց օգնել հարևան ցեղերի հետ ունեցած պատերազմին, իսկ 1344 թ. Լեհաստանի Կաղիմիր Գ. թագաւորը առանձին արտօնութիւններ տուեց հայերին, 1350 թ. էլ տիրելով Լեմբերգ քաղաքին 1356 թ. տեղոյն հայերին արտօնութիւններ տուեց: Անիի վերջին 1380 թ. կործանումից յետոյ Լեհաստան թիւր 40,000-ի հաւաքաւ, որովհետև զեռ. 1374 թ. նոյեմբ. 7-ին Լիտովսկի Իւրի Կարիատովիչ իշխանն էլ վաճառակա-

նութեան համար մեծ շնորհներ էր արել հայերին: ԺԵ դարու վերջերում Կամենիցի հայերը սեփական ՎՕՅԹ (կառավարիչ) ունեցան, 6 դատաւոր և 40 մարդուց մի խորհուրդ և իրաւունք ստացան կարմիր զմուռէ կնիք զնելու, որ միայն արքունիքին էր վերապահուած: Սորա հիման վրայ հայերը սեփական դատարաններ բաց արին, ուր վճռում էին աշխարհիկ և հոգևոր գործերը, շատ անգամ էին հպատակւում նոյն իսկ լեհական մագիստրատին և վերջը զրանուեցան մարդիկ, որոնք պնդում էին որ հայերը կասկածելի հայրենասէրներ են, իսկ 1719 թ. լեհ-ռուսական մագիստրատի բուրմիստը Նիկոլայ Պաւլիչը գանդատուեց որ հայերը ճնշում են տեղացիներին, ընդհանուր օրէնքները չեն ընդունում, գաղտնի ժողովներ են անում, որ նոյն իսկ լեհական թաղին վտանգ է սպառնում, գործում են առանձնացած 'ի վնաս լեհերի և չնայած միայն Պարսկաստանի ասպրանքով առևտուր անելու իրաւունք ունեն՝ ամեն ինչ էլ ծախում են:

Հայերի դէմ հալածանքը վաղուց էր սկսուել շնորհիւ եկեղեցական հարցերի: Էջմիածնի անարժան կաթողիկոս Մելքիսեդէկը փախչելով պարսից կողմից կրած նեղութիւններից Կ. Պօլսով Լեհաստան գնաց՝ Լեմբերգ քաղաքը և 1626 թ. տեղացի հայ հարստի որդի 23 տարեկան Նիկոլ Թորոսովիչին եպիսկոպոս ձեռնադրեց: Նիկոլը չերմեռանդ կաթողիկ էր և նախ խորդախութեամբ հայ եկեղեցու պաշտպան ձեա-

ցաւ, իսկ լեւոյ եղուխոնների օգնութեամբ ու թաղաւորի հովանաւորութեամբ Լեմբերգում իրեն կաթողիկ յայտարարեց, զնաց հռոմ և արքեպիսկոպոսութեան պատուով վերադարձաւ: Հայերը չուզեցին ընդունել, սակայն նա կաթողիկ ամբօխի օգնութեամբ հայոց մայր եկեղեցի մտաւ և լատին ծեսով մաղթանք կատարեց: Նիկոլին օգնում էր նաև Մատթէոս Բեմբուս նշանաւոր եղուխոր: 1631 թ. հայերը գանդատուեցին Էջմիածնի Մովսէս կաթողիկոսին և նա Խաչատուր վարդապետին ուղարկեց Նիկոլին աթոռընկեց անելու, սակայն Նիկոլը յայտնեց որ Էջմիածնի հետ ոչ մի կապ չունի: Խաչատուրն էլ հրապարակաւ նղովեց նրան և վերադարձաւ: Կաթողիկոսը Վլադիսլաւ Դ. թագաւորին գանդատուեց, բայց Նիկոլը ոչ մի զիջում չարեց, և երբ Փիլիպոս կաթողիկոսը Կ. Պօլսոյն էր, զնաց նրա մօտ խաբեց և նոր իրաւունքներով ետ գնալով հայոց բոլոր եկեղեցիները գրաւեց 1666 թ.: Հայերը ստիպուեցան գաղտնի ժամասացութիւն անել, իսկ կարևոր դէպքում Սուլաւա քաղաքի եպիսկոպոսին էին դիմում, որովհետև նա հարազատ էր ֆնացել հայ եկեղեցուն, բայց Նիկոլը բոլոր հայ քահանաներին ստիպեց կաթողիկանալ և ժողովուրդը ֆնաց անմխիթար: 1681 թ. մեռաւ Նիկոլը, բայց 1686 թ. կրօնական աւելի մեծ ճնշում եղաւ և հայերը ստիպուած այդ տեղից էլ սկսեցին գաղթել: 1790 թ. փետրուար 3-ին «boni ordinis» կաղմուած յան-

ծնախուժքը վերջ տուեց հայոց ինքնավարութեան և հայերն էլ ընդհանուր մազիստրատին ենթարկուեցին:

Դժգոհ հայերը գաղթեցին մասամբ Մոլդավիա, ուր բաւական հայեր կային: Դեռ 1671 թ. Օսմանեան-Լեհական պատերազմի ժամանակ նրանք Արտաշունք բնակութիւն հաստատեցին, արտոնուեցան և սեփական դատարաններ բաց արին, իսկ 1700 թ. շինեցին Հայապօլիս (Կերլա) քաղաքը: Կարդուս Զ. կայսրը նրանց հրովարտելով 12 մարդուց Ծերակոյտ գումարելու իրաւունք տուեց և հայ քաղաքապետ նշանակեց և այս քաղաքը մինչև այսօր էլ նախկին արտոնութիւններ ունի, թէպէտ բնակիչների մեծ մասը ստիպուած կաթողիկոսացաւ: Քաղաքն ունի 7500 բնակիչ, հայ քաղաքապետով և պաշտօնեաներով և այստեղ էր հրատարակուած (մինչև 1907 թ.) հունգարերէն Armenia ամսագիրը: Սուշաւա քաղաքի հայերը միայն մնացին իրենց հաւատի վրայ հաստատ մինչև այսօր:

Լեհահայերից շատերը Եւրոպա գաղթեցին, ուր միւս երկրներից էլ դնացել էին բաղձաթիւ հայեր: Գլխաւոր կեդրոններն էին Վենետիկ, Ճենովա, Միլան, Պատուա, Մարսէլ, ուր ցարդ կայ Հայոց փողոց, իսկ չոլանդիոյ Ամստերդամ քաղաքը հայերի առևտրական կեդրոնն էր մինչև 1790 թ.

Եւրոպական հայ գաղութը ստուարացաւ Տանկահայոց կոտորածներից յետոյ:

Հայերը մեծ գաղթականական կեդրոններ ունին

նաև Եգիպտոսում, Ամերիկայում, Բուլղարիայում, Անգլիական մի քանի քաղաքներում, իսկ Ֆրանսիան ու Շվեյցարիան հայ վտարանդիների բուն են:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐ.

Հայերը շատ վաղ ծանօթացան հնդկաստանին և հայ թաղաւորների օրով առևտրական կարաւաններ էին դնում ու գալիս:

Ժէ դարում Նոր Զուղայի հայերը վերակենդանացրին յարաբերութիւնները և հնդկաց Կալկաթա, Բոմբայ, Մադրաս քաղաքներում գաղութներ հաստատեցին, որտեղից անցան Սինդափուր, Յէյլոն որտեղ մարգարտի որսարաններ ձեռք բերին, որով աշխարհագրութեան ձեռք զարկին: Ժէ-րդ դարու վերջերը Անգլիացիք հնդկաստան մտան, որոնք շուտով ցանկապատեցին երկիրը և սկսուեց չտեսնուած մրցում, որը և հարստացրեց հայերին և սեփական նաւահանդիստներ շինելով նաւադնացութեամբ բոլորուեցան:

Նիւթականի հեա հայերը մտաւոր բարոյակունին էլ զարկ տուին, տպարաններ բաց արին, գրքեր տպեցին, բաց արին դպրոցներ, հիւանդանոցներ, հիւրանոցներ, իսկ 1794 թուին լոյս աւետաւ հայերէն առաջին պարբերականը Մադրասում «Ազգարար» անունով Յարութիւն քահ. Շմաւոնեանի խմբագրութեամբ: Հնդկահայերը բնկերութիւններ կազմեցին, որոնցից «Արարատեան» բնկերութիւնը Կալկաթա-

յում «Մարգասիրական ձեմարան») ու տպարան բացեց: Ճնդկահայ հարուստներից Սամուէլ Մուրաթը և Ռափայէլ Ղահրամանը մեծ գումարներ կտակեցին ազգին, բայց այդ գումարները սխալմամբ Մխիթարեանց ձեռքն ընկան, որոնցով պահուում է Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը Վենետիկում: Կտակողներից մէկն էլ Մսէհ Բաբաջանեանցն էր, որի կտակածով Նոր Նախիջևանի դպրոցներն են պահուում: Ներկայումս էլ կան գումարներ անգլիական դրամատներում, որոնք մնում են անգործադրելի՝ փաստաթղթեր չլինելու պատճառով:

Ճնդկահայերը էջմիածնասէր մարդիկ էին և նրանց բոլոր կտակները էջմիածնի անունով էին լինում, բայց մեր անհոգութիւնը միջոց տուեց Մխիթարեան հայրերին զրաւելու բոլորը: Շուտով Ճնդկահայոց դերը այլ կերպարանք ստացաւ: ԺԸ. դարու վերջը Յակոբ Շամիրեան անունով գերծակը տպարան բացեց և ի թիւս այլոց տպեց և Որոգայթ փառաց անունով մի գիրք, որ ապագայ հայաստանի ծրագիրն էր: Այս գրքից մի մի օրինակ ղրկուեց ռուսաց, վրաց արքունիքներին և Յովսէփ Դ. կաթողիկոսին: Գիրքը տպուած էր որոշ նրպատակով և Շամիրեանը վրաց չերակ Ք. Թադաւորից Լօռի գաւառը ձեռք բերեց իբրեւ ազգի սեփականութիւն: Մօտ 1798 թ. մեռաւ Շամիրեանը և առժամանակ գործը կանգ առաւ, բայց շուտով մի

ընկերութիւն կազմուեց, որը վեռեց թղաչափով գնել Պարսից հայաստանը: Գործի գլուխ կանգնեց հայ հարուստ Յովսէփ Յովհաննէս Ամար-խանը, որ Ներսէս Աշտարակցու հետ զաղտնի ծրագրեց ապագայ հայաստանի նախազաղափարը: Ամար-խանը Սմարանդցի էր և անհաշիւ կարողութեան տէր և 1829 թ, հոկտ. 20-ին զրեց Ներսէսին, որ ինքը համաձայն է գնալ Ռուսաստան, եթէ Նիկողայոս Ա. կայսրը համաձայնի Երևանի ու Նախիջևանի նահանգում իր հովանաւորութեամբ հայկական իշխանութիւն հաստատել, որի համար ինքն իր հարստութիւնից տարեկան 500,000 Փրանքի եկամուտ կտայ Ռուսներին: Ներսէսն այդ մասին Լազարեանի միջոցով յայտնեց կայսեր. կայսրը 1830 թ. գեկտեմբերին համաձայնուեց որ Ամար-խանը Ռուսաստան գալբանակեցիւ, և նա Շվեդիա գնալով ուղեց վերադարձին գնալ Պետերբուրգ, բայց նանապարհին մեռաւ, մեռան և նրա ծրագիրները:

ՏԱՃԿԱՆԱՅԵՐ.

ՊԱՏՐԻԱՐԷՆԵՐ

ԵՒ

ԱՄԻՐԱՆԵՐ

Կ. Պօլսի պատրիարքութիւնը հայ պատմութեան մէջ մեծ տեղ ունի, որովհետեւ պատրիարքները թէ աշխարհական և թէ կրօնական հարցերի վեռողներն էին, բայց շուտով երեւացին ամիրաներ, որոնք սովորաբար Ակնեցի են եղել և ըստ ոմանց ծագում են Անիի նախարարների ցեղերից: Նրանք

Օսմանեան պետութեան մէջ էլ առաջ գնացին, հասան նախարարի պաշտօններին, իսկ սովորաբար արքունի դրամահատներ և սեղանաւորներ էին: Վերջը նրանք կրօնական հարցերով էլ երևացին և դորանով էլ կորցրին ժողովրդի դէպի իրենց տաճած վստահութիւնը:

Տաճկահայոց խաղաղութիւնը վրդ-
 ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ դժուրեց հաջ թաղաւորութեան վերջ
 ԴԵՐԸ տուող կաթոլիկների շնորհիւ, որոնք
 մտան գաւառները և սկսեցին իսկա-
 կան քրիստոնեաներին քրիստոնեայ դարձնել: Աւետիք
 պատրիարքը նրանց դէմ հալածանք հանեց,
 բայց շնորհիւ Փրանսիացոյ՝ նրան Դենետոս կղզի աք-
 սորեցին, որտեղից նրան եղովանները փախցրին և
 1711 թ. տանջանքներով մեռաւ. Բաստիլիայում:

Այս հարցը շուտով խճճուեց, որովհետև Օսմանեանք
 կաթոլիկ հայերի վրայ վատ աչքով էին
 նայում. արպէս Եւրոպացոյ բարեկամների, իսկ ազգը
 իրար խռովուեց և Փրանսիացոյ դեսպանների օգ-
 նութեամբ մի քանի պատրիարքներ պաշտօնանկ ե-
 ղան: 1815 թ. պատրիարք ընտրուեց Պօղոս Այ-
 րիանուպօլեցին որ 1820 թ. ժողովի կանչեց հայ
 կաթոլիկներին և առաջագրեց միանալ, որովհետև
 1820 թ. զիսատուած Տիւղեանների տանը (որոնք մե-
 ղադրուած էին արքունի գանձերի վատնման մէջ) ե-
 կեղեցական սպասներ էին դառնուել և պարզուեց որ
 նրանց տան մէջ կաթոլիկները գաղանի ժամաստ-

ցութիւն ունէին, իսկ պետութիւնը պահանջեց պատ-
 րիարքից վերջ տալ այդ բաժանմանը: Պատրիարքը
 էջմիածնից ոչ մի իրաւասութիւն չունենալով զի-
 ջումներով հաշտուեց կաթոլիկների հետ, որից դրժ-
 դոն հաջ արհեստաւորները («հայ ենք» գոռալով
 յարձակուեցին պատրիարքարանի վրայ, բայց պատ-
 րիարքը պատուհանից փախաւ և թաղնուեց: Բ.
 Դուռը ենիչերիների միջոցով կարգը վերականգնեց և
 իբրև խռովարարների՝ Սադայեան Գրիգոր ամիրային
 զիսատել տուաւ, իսկ Տէլի Պաղդասար և Յակօբ
 Կեսարացի անունով երկուսն էլ կախել տուաւ:

Շուտով սկիզբ առաւ ռուս-տաճկական պատե-
 րազմը և կաթոլիկները լուր տարածեցին որ առա-
 քելական հայերը ինչպէս որ Սրարատր ռուսաց ձեռք
 գցեցին, ուղղում են և Տաճկահայք ռուսաց ձեռք
 տալ: Պետութիւնն այս աշխարհ մատնութեան վր-
 րայ ուղադրութիւն չդարձրեց և հայոց պատրիար-
 քից հայերի համար երաշխաւորութիւն պահանջեց.
 պատրիարքը երաշխաւորեց առաքելական հայերի հա-
 մար, իսկ կաթոլիկների համար չհամաձայնուեց և
 տէրութիւնը 1828 թ. նախ Եւրոպական դեսպան-
 ներին արտաքսեց, ապա բոլոր կաթոլիկներին աքսո-
 րեց հետեւեալ հրահանգով, ա. Գաղատացիք իրենց
 հայրենիք արքորուեն. բ. Տոմէական կրօնաւորները
 Եւրոպա արքորուին. գ. Պօլսեցի հոռմէականներից
 հայոց պատրիարքին չհնազանդողները Անատոլիա
 արքորուին. դ. Մայրապետները նոյնպէս արքորուին:

Լ. Հռոմէականները չբնակուին Բերա, Ղալատա և Եւրոպացի գտնուող թաղերում: Այս հայաթանքից ազատ մնացին ուլքեր հայոց եկեղեցում հաղորդուեցան:

Ռուս-տառնիկական պատերազմից յետոյ դեսպանները վերադարձան և Բ. Դուռը 1829 թ. նրանց խնդրին զիջանելով հայ կաթողիկոսներին առանձին համայնք նանաչեց և 1830 թ. Անտոն Վ. Նուրիճանը առաջին կաթողիկ պատրիարք նշանակուեց:

Այդ խնդիրը նոր էր վերջացած երբ Պօլիսը ուղղուեց կրօնական նոր մարդորսներով՝ ամերիկացի միսիօնարներով, որոնք սկսեցին բողոքականութիւն տարածել ձրի ս. զիրք բաժանելով և 1850 թ. Ստեփան Սերովբեան անուանով մէկը նրանց ազգապետ նշանակուեց:

Այս անշատուքների հետ տառնիկ-
ԹԱՆԶԻՄԱԹ ներն էլ աշխատում էին թիւրքացնել
1839 թ. թուրքասիրտներին: Սուլթան Մէհմեդի
որով թաւուքնեան Յովակիմ

հայր, որ 4 տարի առաջ թիւրքացել էր, զղջալով նորից քրիստոնեայ դարձաւ: Շուտով նրան մատնեցին և կալանաւորեցին: Յովակիմի ծնողները զիմեցին ռուսաց և անգլիացոց դեսպաններին և անգլիացոց դեսպանն անմիջապէս Բ. Դուռը զիմեց և խրնդրեց ազատել նրան, բայց Դուռը մերժեց և առաջարկեց Յովակիմին նորից թիւրքանալ, նա չհամարձայնուեց և զխսատուեց:

Անգլիացոց դեսպանը զայրացած դեսպանաժողով դուժմարեց և յայտնեց Եւրոպայոց այդ արարքի

մասին: Պետութիւնները պահանջեցին Բ. Դուռից կրօնի՝ դաւանութեան ազատութիւն: Դուռը ստիպուած եղաւ զիջանել, միայն դորժադրութեան համար եօթնամեայ ժամանակամիջոց խնդրեց և 1839 թ. նոյ. 3-ին հրատարակուեց Հաթիթ Շէրիֆ Թանզիմի՝ աթմը, որով ա. կայսրութեան բոլոր հպատակները կեանքը, պատիւն ու ստացուածքը ապահովոււմ է. բ. Որոշոււմ են միատեսակ տուրքեր բոլոր հպատակների համար. գ. Տուրքերը ըստ կարողութեան. դ. Ծովի և ցամաքի բանակի ծախքի որոշոււմ. է. Հրապարակական դատաւարութիւն համաժայն կրօնա-քաղաքական օրէնքների. բ. Սեփականութեան իրաւունք. թ. Յանցաւորի ժառանգը չի զրկոււմ ժառանգութիւնից:

ԱՄԻՐԱՆԵՐ.

ԵՒ

ԱՐՅԵՍՏԱԿՈՐՆԵՐ

Թանդիմաթը ժողովրդի աչքը բաց արեց և իրաւունքի հարցը մէջ բնկաւ: Ազգը ամիրաների ձեռքին խաղաղիկ էր դառել, իսկ դաւառացիք տեւական աւազակութիւններին ենթակա՝ տանջոււմ էին: Սկսուեց շարժում, առիթը 1838 թ. Իսկիւտարում բացուած ճեմարանն էր, որին նպաստելու համար Յակոբ պատրիարքը յանձն առաւ իր ծախքով 2 որդեգիր պահել, իսկ ամիրաներն էլ պարտաւորուեցան 3000-ական զրուշ տալ մի մի որդեգիր պահելու համար. ամիրաներն իրենց խոստումը չկատարեցին և ճեմարանը մնաց առանց միջոցների: Յակոբ պատրիարքը ժողովելով ամիրաներին առա-

չարկեց արհեստաւորներին տուրքի ենթարկել և բնա-
րել էսնաֆների ներկայացուցիչ-հոգաբարձուներ 24
հոգուց: Ամիրաները հաւանեցին և շուտով կազմուեց
հոգաբարձութիւն, որի վարչապետ նախագահ բնա-
րուեց Հեթում Մերեքմըւլիեան արհեստաւորը: Մի-
ևնոյն ժամանակ պատրիարքարանում էլ եկեղեցական
ու աշխարհիկ ներկայացուցիչներից ղաւաւատանական
ժողով հաստատուեց, որը շուտով թաղերում բա-
ժանմունքներ բաց արաւ: 24 հոգուց մարմինը առա-
ջարկեց որ իրենց ժողովներում ամիրաները 6 ներ-
կայացուցիչ ունենան, բայց ամիրաները վիրաւորուե-
ցան, որ արհեստաւորներն ուղղւած են իրենց հետ
հաւասարուիլ և միացեալ ժողովը ցրուեց: Ամիրա-
ները զոռոգացան և չուզեցին տալ նոյն իսկ դպրոց-
ներին խոստացած 40000 զրուշը, որքան արհեստա-
ւորները պատրաստ էին տալու: Յակոբ պատրիարքը
զղուած այս տարածայնութիւնից 1840 թ. հրա-
ժարուեց և ընտրուեց ամիրաների կողմնակից Ստե-
փան Էպիսկոպոսը, որ ամիրաների հետ ուղղւած էր
փակել նեմարանը: Էսնաֆները տեսնելով այս՝ Միա-
կամ՝ անունով ընկերութիւն կազմեցին, պահանջե-
ցին նեմարանի եկամուտը առանձացնել միւս հա-
սոյթներից, որպէս զի նեմարանը յարատւէ: Ամի-
րաները ընդդիմացան, իսկ ժողովուրդը դանդաղ տը-
ւեց Բ. Դուռը խնդրելով հաստատել 24-ի ժողովը
որպէս ազգային գործերի ղեկավար: Բ. Դուռը 1841
թ. յուլիս 1-ին հաստատեց, ամիրաները ընկան Բ.

Դուռը, սկսեցին խանդարել գործը, որպէս-զի հրո-
վարտակ չտուի, բայց ժողովուրդը օգոստ. 24-ին
փակեց շուկան և աղմուկով Դուռը զնացին բողոքե-
լու: Ամիրաները թէպէտ աքսորել տուին շատերին,
բայց դեկտ. 12-ին 27 հոգուց մի վարչութիւն հաս-
տատուեց, որոնք ամիրաների արարքներին չդիմա-
նայով 1842 թ. սեպտ. 25-ին հրաժարեցան:

1844 թ. պատրիարք ընտրուեց Մա-
տթէոս (յետոյ կաթողիկոս), որ ժողո-
վրդասէր մարդ էր և նա հաշտեցնելով
արհեստաւորներին ու ամիրաներին 16
ամիրայից ու 14 արհեստաւորից մի ժողով կազմեց ու
ազգային լուսաւորութեան զարկ տուեց. նրա շնորհիւ
բազմաթիւ դպրոցներ բացուեցին, ծածուկը յառաջա-
դիմեց, իսկ ազգային հարցերում նա ժողովրդին կող-
մնակից մնաց: Դժգոհ ամիրաները նրա իրաւունք-
ները կրնատելու ետեւից ընկան և 1848 թ. մայիս
9-ին մի հրովարտակ հանել տուին, որով երկու ժո-
ղով պիտի հաստատուէր, մէկը 20 աշխարհական ան-
ձերից Դերագոյն անունով, որ քաղաքական էլ կոչ-
ուեց և միւսը 14 եկեղեցականներից Հոգեւոր կամ
կրօնական՝ պատրիարքի նախագահութեամբ: Պատ-
րիարքը ուրախացաւ, բայց զղուած ամիրաների ան-
վերջ թակարդներից 1848 թ. հոկտ. 1-ին հրաժար-
ուեց: Ժողովուրդը ստիպուեց նորից Յակոբին ընա-
րել, որը նոյնպէս բարեկամ էր իրենց: Ազգային ժո-

ՍԱՅՄԱՆԱ-

ԴՐՈՒԹԻՒՆ

1860 ՄԱՅԻՍ

24- ԻՆ.

ղովի գործերը խաղաղ առաջ էին զնուծ, միայն ճնշումների տակ միշտ միևնույն անձինք էին ընտրուում, որից ժողովուրդը դժգոհ էր: 1857 թ. Գերագույն ժողովի անդամները մի կանոնադրութիւն խմբագրեցին, որ ազգային ընդհանուր ժողովն էլ հստակեց և հետզհետէ մշակուելով 1860 թ. մայիս 24-ին ազգի կողմից ընդունուեց և կոչուեց Ազգային Սահմանադրութիւն: Բ. Դուռը հաստատեց որպէս մի պատգամաւորական ժողով, որ ունի 220 երեսփոխան և 180 էլ անդամակից, սրանցից 160 հոգի Պօլսից, 60 զաւառներից, իսկ անդամակից են զլիսաւորապէս Պօլսոյ հոգևորականները, բարձր պաշտօնեանները, խմբագիրները, գրագէտները, ուսուցիչները, բժիշկները ևն: Կրօնական ժողովը լինում է 14 հոգուց, քաղաքականը՝ 20: Ազգային վարչութիւնն ունի Ուսումնական, Տնտեսական, Երևմտական և Դատաստանական խորհուրդներ և բացի այս հաստատուում են Թաղական խորհուրդներ և զաւառներում էլ ճիւղեր, միայն Պօլսում ազգային վարչութեան նախագահը պատրիարքն է, իսկ զաւառում առաջնորդները: Այսպիսով Սահմանադրութիւնը դառնում է ղեկավար տանկահալոց բոլոր գործերի, «Ազգային վարչութեան պարտականութիւնն է Ազգին բարոյական, մտաւորական և նիւթական պիտոյիցն հոգ տանել. հայաստանեայց ս. եկեղեցւոյ դասանութիւնն ու աւանդութիւններն

անխախտ պահել, մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ դիտելեաց ուսումն Սգգին ամեն աստիճանի թէ մանչ և թէ աղջիկ. տղայոց հաւասարապէս ծաւալել, ազգային հաստատութիւնները պայծառ պահել, Ազգին հասոյթներն օրինաւոր կերպով աւելցնել և ծախքերն իմաստութեամբ տնտեսել, Ազգին ծառայութեան մշտնջենապէս նուիրեալ անձանց կացութիւնը բարւոքել և ապագան ապահովել, կարօտելոց խնամ տանիլ հայրաբար, ազգայնոց մէջ ծագած վեճերն արդարութեամբ խաղաղել, և վերջապէս՝ բարեկարգութեանն և յառաջադիմութեանն աշխատութիւն չխնայել»:

Նոյն տարուայ զոստոսի 25-ին առաջին ժողով դումարուեց և Սարգիս պատրիարքի օրով ըսկսուեց Սահմանադրութեան գործադրութիւնը: Ամիրաններն այս անգամ աւելի ստոր միջոցների դիմեցին՝ լուր տարածեցին թէ հայերն ուղղում են թաղաւոր նստեցնել: Միևնոյն ժամանակ վախճանուեց Երուսաղէմի պատրիարքը և ազգ. վարչութիւնն ուղեց որ նորը Սահմանադրութեան օրէնքով ընտրուի. միաբանութիւնը մերժեց, իսկ ժողովուրդը երկսի բաժանուեց՝ Սահմանադրական և հակասահմանադրական, կամ լուսաւորեալ և խաւարեալ: Այս խրոլութիւնն այնքան մեծացաւ, որ տէրութիւնը միջամտեց և Սահմանադրութեան գործադրութիւնը կանդ առաւ, մինչև որ 1863 թ. մարտին նոր հրամանով սկսուեց գործադրուել:

ՁԵՅԹՈՒՆԻ Բոլորովին այլ էր կատարւում այդ
ԱՆՑՔԵՐԸ. ժամանակ ազատասէր Ձէյթունում,
որ վաղուց ուզում էր ապստամբուել: Ձէյթունը 10
զիւղերի դաշնակցութիւն է, որից 6 հայ և 4
թիւրքմէն, բայց հպատակւում են հայերին: Բնա-
կիւնների թիւը՝ 25000 հայ և 5000 թիւրքմէն և
կառավարւում են 4 ժառանգական իշխաններով:
Կռիւների պատճառը միշտ եղել է հարկեր սալը,
որ նրանք չեն սիրում: 1862 թ. յունիսի երկու
մահմեդականի մէջ տեղի ունեցած դէպքից օգտուե-
լով Մարաշի Ազիզ փաշան 12000 ի չափ զօրք
զրկեց Ձէյթուն, որ բանակեց Այաբաշ հայ զիւղի
մօտ, կործանեց շրջակայ զիւղերը և մօտ 200 հայ
սպանեց: Ազատուող հայերը Ձէյթուն փախան, իսկ
փաշան 4000 քրդերով կողոպտեց Ձէյթունի մեր-
ձակայ վանքը: Ձէյթունցիք մի քահանայ և 13 հայ
ձերունիներին պաազամաւոր զրկեցին փաշայի մօտ,
բայց նա ոչ մի պայման չընդունեց, որովհետև զօր-
քը հետզհետէ մեծանում էր նորեկներով և շուտով
պաշարեց Ձէյթունը և հեռանալու համար 500000
զրուշ պահանջեց: Ձէյթունցիք 25000 զրուշ գրա-
մով խօստացան և 103000-ի էլ ապրանք. թէպէտ
Փաշան համաձայնուեց, բայց օգոստոսի 2-ին յարձա-
կում դորձեց: Ձէյթունցիք իրենց 4 իշխաններով
դուրս եկան կռուելու և թիւրքերը չդիմանալով հա-
րուածներին ետ քաշուեցին, զօրքի մի մասը սարսա-
փելի կոտորածի հանդիպեց Աստուածածնայ վանքի

մօտ 200 հայ քաշերից: Ձէյթունցիք մօտ 150 հոգի
կորցրին, իսկ առանձնապէս զիւղացիք վնասուեցին:
Ազիզ փաշան ուզեց վրէժը Մարաշի հայերից լու-
ծել, բայց անգլիացոց դեսպանը չթոյլ տուեց: Ազի-
զը սկսեց պահանջներ անել Ձէյթունից, բայց շու-
տով պաշտօնանկ արին նրան և յաջորդ Աշիր փա-
շան սկսեց պահանջներ անել ու խաբէութեամբ իշ-
խաններից երկսին բռնաարկեց: Դժգոհ Ձէյթունցիք
դադանի պատգամաւորներ զրկեցին Կ. Պօլիս և Բե-
րիոյ Քրանսիական հիւպատոսի խորհրդով երկու աշ-
խարհական ու մի հոգևորական Փարիզ զրկեցին, ո-
րոնք ներկայացան Նապօլէոն կայսեր, որի միջնորդու-
թեամբ Ձէյթունի դէպքերը դադարեցին:

Պատգամաւորներից Լևոն անունով Ձէյթուն-
ցին յայտարարեց Փարիզում, որ ինքը Կիլիկիոյ հայ
թագաւորների սերնդից է և շրջաբերական բողոք
զրկեց պետութիւններին խնդրելով հաստատել նա-
խախյրների իրաւունքների մէջ, բայց ամեն 'ի դերե
էլաւ: 1865 թ. Ձէյթունում թիւրք գայմազամ նը-
շանակուեց:

1877 թ. Ռուս-թիւրքական պատերազմից յե-
տոյ թիւրք կառավարութիւնը նորից կալանաւոր-
եց Ձէյթունի գլխաւորներին, բայց Պապիկ փաշա
կոչուած հայ կտրիչը գերեց թիւրք գայմազամին և
ազատեց միայն այն ժամանակ, երբ հայ գլխաւորնե-
րն ազատուեցան: Սրանից յետոյ գայմազամին պաշա-
պանելու համար 250 չերքեզ զենացին Ձէյթուն,

բայց Պապիկը նրանց հրացանի բռնեց և 5 հոդի կենդանի մնալով Մարաշ ղրկուեցան եղելութիւնը պատմելու:

Այնուհետև մէկ մէկ էլի ընդհարումներ եղան, որից նշանաւոր էր 1895 թ. ամառուայ մարտը: Զէյթունի զիւլերից մէկում Հնչակեաններ էին գործում և կառավարութիւնն ուղեց բռնել և Զէյթունցիք գալիք կռուի պատրաստութիւն տեսան: Գայմազամը հեռադրով զօրք պահանջեց. հայերն ամբողջապէս՝ դայմազամին 50 սպաներով, 600 զինուորներով գերի բռնեցին իրենց միրալայով, սակաջն դեկտեմբերին հայ կանայքը նրանց կացիներով կոտորեցին մի անկարգութեան համար:

Կառավարութիւնը Բէմդի փաշային 110000 զօրքով նրանց դէմ ղրկեց, բայց տաճիկները պարտութիւն կրեցին և ստիպուած ետ նահանջեցին: Սուլթանը ստիպուեց դեսպաններին ղիմելու, որոնց միջամտութեամբ 45 օր տևող կռիւր դադարեց և 6 պետութեանց հիւպատոսները 1896 թ. յունուար 1-ին Զէյթուն մտան ու եշկու կողմից չնչին զիջումներով հաշտութիւն կայացու: Զէյթունցիք նոյնքան փտանդաւոր են ցարդ Օսմանեան տէրութեան համար, որքան առաջ:

Մինչև 1873 թ. եղած պատրիարքներ ի օրով տանկահայոց ղրուութիւնը կամաց-կամաց ծանրացաւ, օրովհետև գաւառներում ջարդերն ու կոտորումները վերջ չունէին: 1874 թ. պատրիարք ընտրուեց Ներսէս Վարժապետեան, որ իր

համայնքի ջերմ պաշտպան հանդիսացաւ:

1875 թ. ծագեց Բալկանեան ազգերի հարցը, և նրանք ապստամբուեցան: Հայերը չմասնակցեցին այս շարժմանը և պատրիարքը մի կոնդակով հաւատարմութեան յորդոր կարգաց հայերին: Այս կոնդակը կծու քննադատութեան ենթարկուեց Եւրոպացիներին, բայց երբ գաւառացոց ղրուութիւնը վատթարացաւ՝ Ազգային ժողովը հայերի կացութեան մասին մի տեղեկագիր կաղմեց և Բ. Դրան ներկայացրեց հաստատելու: Դուռը ոչ միայն չհաստատեց այլ և հայոց վրայ սկսեց կասկածանքով նայել: Բալկանեան հարցի համար Պօլսում դեսպանախորհուրդը դոմարուեց, որը ծրագրով պահանջեց կառավարութիւնից բարեփոխել Բալկանեան ազգերի վիճակը: Վարժապետեանը շատ ջանաց այդ ծրագրի մէջ հայերի մասին էլ բան մտցնել, բայց պատասխանեցին «Հայոց հարցը չկայ»: Սուլթանը չընդունեց դեսպանների ծրագիրը և 1877 թ. ապրիլին Ռուսիան պատերազմ հրատարակեց և Ռուսաց զօրքերը շուտով մի կողմից մինչև Այս Ստեփանօ հասան, իսկ միւս կողմից տիրեցին Արդահանի, Բայազէթի, Կարսի, Էրզրումի: Սոյն պատերազմի ժամանակ հայերը մեծ վնասներ կրեցին, որովհետև Ալաշկերտի, Բայազէթի, Վանայ, Բղիթի, Մշոյ և Տիգրանակերտի մէջ քրդերը թափուեցան անդէն ժողովրդի վրայ և սոսկալի անդթութիւններ գործեցին: Դուռը նեղուած բոլոր հպատակ ազգերից զինուոր աւելեց, բայց հայերը մին-

չև հարցը կեննէին պատերազմը վերջացաւ և Այս-Ստեփանօյում 1878 թ. մարտ 3-ին դաշինք կնքեցին և Նիկոլայ Մեծ Դուքսը զիջանելով Ներսէս պատրիարքի ազաւանքին, որ անձամբ դնացել էր նրա մօտ՝ հետևեալը մտցրեց 16-րդ յօդուածի մէջ «Նկատելով որ ռուս զօրքերը հայաստանի մէջ գրաւած բայց թիւրքիային վերադարձնելիք տեղերից մեկնելով կարող են բարդութիւններով ու կռիւններով խախտուել երկու տէրութեանց յարաբերութիւնները, Բ. Դուռը պարտաւորուած է հայերը բնական գաւառներում առանց ալլ ևս յապաղելու գործադրել տեղական պահանջներին կարևոր եղած բարեօրոգումներ ու բարեկարգութիւններ և երաշխաւորել քիւրդերից ու չերքեզներից նրանց ապահովութիւնը»:

Երբ Ռուսաց զօրքը սկսեց հեռանալ՝ Այաշկերտի ու Բայազէթի հայերից շատերը նրանց հետ դաղթեցին, բայց պատրիարքն անմիջապէս Պարտիզակցի Վահան և Սրուանծաեան Դարեգին վարդապետներին ուղարկեց քննակալ դաղթերի առաջն առնելու:

Վարժապետեանը 16-րդ յօդուածով էլ չգոհացաւ և Տանկահայքում ինքնավարութիւն ձեռք բերելու յուսով Խորէն Նարպէյ եպիսկոպոսին Պետերբուրգի և Նախկին պատրիարք Խրիմեան Մկրտիչ եպիսկոպոսին (այժմ կաթողիկոս) և Մինաս Չերազին Վեննայի, Հռոմի, Փարիզի, Լոնդոնի և Բերլինի արքեպիսկոպոսների մօտ զրկեց բարեխօսելու: Հայ պատուիրակները հաւաքուեցան Բերլին, ուր նրանց հետ

միացաւ և Ստեփան Փափաղեանը:

Բերլինում 1878 յուլիս 13-ին Բիսմարկի նախագահութեամբ Վեհաժողով բացուեց, որ վերջացաւ յուլիս 18-ին, և ազգային պատուիրակները մի ծրարգիր ներկայացրին հայոց մասին: Վեհաժողովը յարգեց հայոց խնդիրը և 61-րդ յօդուածով, որ ծրագրել էին թիւրքաց ու անգլիացոց լիազօրները՝ մուծեց դաշինքի մէջ հետևեալը. «Բ. Դուռը յանձն է առնում անյապաղ իրականացնել հայոց բնական նահազներում այն բարեօրոգումներն ու բարենորոգումները, ինչոր տեղական պէտքերը կպահանջեն և երաշխաւորել նոցա ապահովութիւնը քիւրդերի ու չերքեզների դէմ: Բ. Դուռն այս նպատակի համար ձեռք առնուած միջոցների մասին պարբերաբար պիտի հաղորդէ տէրութեանց, որոնք պիտի հսկեն նոցա վրայ»:

Այս բոլորից յետոյ պատրիարքը սպասեց որ յօդուածները գործադրուին և երբ տեսաւ որ երկիրն տւելի է աւերւում և մանաւանդ որ իր անգլիային արած դիմումն էլ ապարդիւն անցաւ, պատճառաբանուած հրաժարական տուեց: Մեծ եպարքոսը շինդունեց հրաժարականը և իր մօտ կանչեց, բայց պատրիարքը յայտնեց. «մինչև որ բարենորոգումները չգործ դրուին հայաստանում ես պաշտօնս շարունակել չեմ կարող»:

Ազգային ժողովն էլ մերժեց շինդունել նրա հրաժարականը, բայց Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոսին պատրիարքական փոխանորդ կարգեց: Պատրիարքը հիանգստացաւ և սկսեց դիմումներ անել, որպէս զի զլուխ բերէ գործը, բայց ոչինչ չեղաւ և 1879 թ.

սարսափելի սով ընկաւ Հայաստանում, որի առաջն առան թէ տանկահայերը և թէ ռուսահայերը:

Օտար պետութիւնները առաջին օրերում խրատիւ հետեւել են հայոց հարցին և 1880 թ. սեպտեմբերին վեց պետութեանց ներկայացուցիչները հստաքական նստա նշկայացրին, իսկ առաջին բոլորեց Անգլիացոց դեսպան Կոչէնը, բայց Գերմանիան չունի մարդատեաց Բիսմարկի թեւ տուեց Սուլթանին և զործր կանգ առաւ, իսկ Տաեկաստանը թեւեր առած կոտորածներով պատասխանեց:

Թիւրքիան համեստ կերպով սկսեց հայերի ջարդը և գաղտնի հրամաններ տուեց Հայերին ՀԱՅԱՍՏԱՆ յաստանից արտաքսելու. արտաքսողների դերում քիւրդերն էին և 1891 թ. Տրապիզոնի հայոց ջարդը մի նշան էր, որ շուտով կրկնուեց Կարինում և անցաւ ուրիշ քաղաքները: 1894 թ. յուլիսին քրտերը Սասունի վրայ յարձակուեցան և պարտութիւն կրելով բողոքեցին կառավարութեան: Բիթլիսի վալին յայտարարեց, որ հայերն ապստամբուել են և մեծ զօրաբանակով յարձակուեց Սասունի վրայ և սոսկալի անգթութիւններ զործեց, մանաւանդ «Մեծ մարգասպանի»՝ Սուլթանի գահակալութեան տարեգարծի օրը՝ օգոստոսի 30-ին և քրդերը համիդէ զօրքի հետ հիմնովին աւերեցին Շէնիկ, Սիմալ, Տալուրիկ և այլ գիւղերն ու գաւառները: Անգլիայի պահանջմամբ մի յանձնախումբ էլ զրկուեց քննելու տեղի ունեցած

դէպքերը, բայց յանձնախմբի թիւքը անդամներն առաջուց զնացին տաւն ինչ ըստ իրենց քմահաճոյքի կարգադրեցին և երբ 1895 թ. յունուարին հասան Մուշ Ռուսիոյ, Անգլիոյ և Ֆրանսիոյ ներկայացուցիչները, պարզուեց որ օգոստոսի 12-ից մինչև սեպտեմբեր 4-ը սոսկալի ջարդեր են եղել:

Մինչ այս մինչ այն ջարդերը կրկնուեցան և 1895 թ. Կ. Պօլսում սարսափելի կոտորած եղաւ, բայց հայերն այնտեղ պատասխանեցին և նոյնիսկ համահաւասար կռոււմ էին փողոցներում: 1896 թ. Վանում կոտորած եղաւ, որից յետոյ բաղձաթիւ հայեր թողին տունն ու տեղը և գաղթեցին Ռուսաստան, Ամերիկա Բուլղարիա, Եգիպտոս ևն: Կոտորածները նոյն թափով կրկնուեցան նաև 1900—1904 թ. Մշոյ, Բիթլիսի, Սասնոյ և այլ գաւառներում և 1907 թ. Մշում, որին յաջորդեց վերջին սովը, որ ցարդ շարունակում է և հետզհետէ ահուելի ծաւալ է ստանում: Այս սովն առաջացաւ այն բանից, որ տէրութիւնը հրամայեց 20-22 տարուայ հարկերը հաւաքել և այդպիսով մի արհեստական սով ստեղծեց, որպէս զի հայերը փախչեն հայրենիքից: 1907 թ. մայիսի 8-ին ռուսաց և անգլիացոց ղեսպանները ղիմեցին Բ. Դրան, որ սովի առաջն առնի, բայց պատասխանը նոյն էր ինչ որ էր առաջ—այո՛:

1895 թ. Նախորդ հարցը գուցե մի վախճան ստանար, եթե 1884 թ. չվախճանուէր Ներսէս պատրիարքը, որ մինչև իր մահը առանց երկիւղ կրելու կռուեց Բ. Դրան հետ: Նրան յաջորդող Յարութիւն և Խորէն պատրիարքները թոյլ էին և զլուր ծռող, բայց 1894 թ. պատրիարք ընտրուեց Մատթէոս արքեպ. Իզմիրլեանը, որ թիւրքաց խաղերին ականջ չդրեց և անհաւատար կռիւ սկսեց շնորհիւ պետութեանց ղեսպանների, որոնց նա հանգիստ չէր տալիս՝ և մինչև որ Մշում քննութիւն էր կատարուում, Անգլիան, Ռուսիան և Փրանսիան հայկական վեց նահանգների՝ Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սիվազի, Խարբերտի և Դիարբէքրի համար 1895 թ. մայիսի 11-ին բարեկարգութեանց ծրագիր ներկայացրին Բ. Դրան: Թէպէտ այս ծրագիրը իրականութեան մէջ կար, բայց Ռուսիան յանձին արտաքին գործոց պաշտօնեայ Լօպանովի բողոքովին հակառակ էր, որովհետև վախճանում էին որ մի գուցե հայերը մի նոր թագաւորութիւն ստեղծեն և այս բանը նպաստեց, որ փոխանակ մալիսեան ծրագրի գեապսմները համաձայնուեցին ընդունել Սուլթանի հոկտ. 15-ին առաջադրած ծրագիրը, որով մեծ մարդասպանն իր խօսքը կատարեց:

Բացի այս թէ ծրագրի քննութեան և թէ ընդունելուց յետոյ իրար ետևից ջարդեր եղան՝ սեպտ. 30-ին Կ. Պօլիս. հոկտեմբերի 3-ին Ազ. Հիսար, 4—8 Տրապիզոն, 6 Էրզրում, 14—23 Քդի, 16 Հաճին, 20 Մարաշ

21 Երզնկա, 24 Բայազէթ, 25—26 Կիւմիւլխանէ և Բիթլիս, 27—29 Ուրֆա, Ալպստան, Բաքերդ, Շապին Գարահիսար, Բայաս, 30 Էրզրում, 31 Մերսին և Ատանա. նոյեմբերի 1-ին Մալաթիա և Արաբկեր, 2—9 Սէվէրէկ, 3—18 Մարաշ, 1—20 Վանի վիլայէթում, 7 Ալէքսանդրէթ, Մերզին և Ատեաման, 8 Էկին, 10 Խարբերտ, Սասուն, Տալվորիկ, Բայաս, 12 Սիվազ, Կիւրին և Ղալզա, 13 Չօգ Մէրզիմէն, 14—17 Այնթապ, 15 Թօգաթ, Մուշ և Մարզուան, 16 Ամասիա, 17 Եէնի-ճիէ Կալէ, 18 Մարաշ, 19 Սղերդ, 20 Վան, Անտիոք Չօրում, Հաճիգիւղ, 27 Բասէն դաշտ, 28 Զիլէ, 30 Կեսարիա. Դեկտեմբերին Վէդիւր Քէօփրիւ և Հալէպ, 3 Սիվազ, 7 Սամսուն. 14 Տաքսոն, 14—15 Աղճա Գիւնէ, 24 Ազպէս, 28—29 Ուրֆա, 1906 թ. յունուար 1-ին Պիրեկիկ և այլն:

Հայոց հարցի մասամբ պաշտպան քննող միայն Անգլիան, որի բարի միտումներին միշտ խանդարող հանդիսացան Գերմանիան և Ռուսիան: Վերջինի պատճառաբանութիւնը հայկական շարժումն էր, որի դօրեղ մեծամասնութիւնը դանդում էր Ռուսաստանում:

Հայերի ճնշումը պետութեանց թեթեւ չափով միջամտութիւնները հայի մէջ էլ չեղափոխական հոգի ծնցրին: Հայոց առաջին չեղափոխութիւնն սկսուեց 1825 թ. Թիֆլիսում ընդդէմ Պարսկաստանի, բայց դա ժամանակաւոր ողբերութիւն էր և վերջացաւ խաբէբայութեամբ... իսկ բուն չեղափոխութիւնը սկսուեց վերջին ռուստանկական պատերազմից յետոյ. տաճկահայ հրապա-

րակախօս և դպրոցական դործիչ Մկրտիչ Փորտու-
ղալեանը անցնելով Մարտէլ մի յեղափոխական կու-
սակցութիւն կազմեց և 1885 թ. սկսեց «Արմենիա»
անունով թերթ հրատարակել, որով կուսակցութիւնն
էլ կոչուեց «Արմենական»։ Թէպէտ թերթն այսօր
էլ գոյութիւն ունի, բայց կուսակցութիւնը ոչ, միայն
ժամանակին Արմենականները դէնք մատակարարեցին՝
գաղտնի ահազին ռազմամթերք մտցրին թիւրքիս։

Բայց Արմենականների խաղաղած դերը շատ թոյլ
էր, մինչդեռ ևրոպական պետութեանց խաբէութիւն-
ները՝ ուժեղ և բնութիւնը ստեղծեց մի այլ կուսա-
կցութիւն, 1887 թ. պաշտօնապէս երևան եկաւ
«Հնչակեան» կուսակցութիւնը, որպէս առաջին
սօցիալական կուսակցութիւն, որ և նպատակ դը-
րեց հային քաղաքական ճնշման հետ և տնտեսական
ճնշումը ցոյց տալ։ Հնչակեանները շուտով սկիզբ դը-
րին «Հնչակ» անունով պարբերաթերթի, զրա-
մական օժանդակութիւն գտան, հասարակութիւնը
գրկաբաց ընդունեց և յեղափոխութեան գաղափարն
այդ կուսակցութեան շնորհիւ մտաւ թիւրքիոյ հա-
յերի մէջ։ Նրանք ժողովրդին ղինեցին և մինչև ան-
գամ Կ. Պոլսում 1890 թ. յուլիս 15-ին մայր ե-
կեղեցու մօտ մի ցոյց էլ արին, և կուսակցութիւնը
ժաւալուեց ամբողջ հայութեան մէջ։ Հայկական կո-
տորածներում նրանց խաղաղած դերը շատ մեծ էր
և որպէս քաջ մարտնչող ուրիշ շտաբերից առաջին
եղաւ Մուրատը, որ անասելի պատիժներից յետոյ

գաղտնի Փարիզ փախաւ։

1890 թ. ամառը մի նոր կուսակցութիւն էլ
կազմուեց Դաշնակցութիւն անունով, որ իրեն
կետրոն ընտրեց Ժենեւ քաղաքը։ Այս կուսակ-
ցութիւնը մի քանի տարի, ճիշտ է, շատ կա-
ղալով առաջ գնաց, սակայն 1895 թ. նա նոյն-
պէս երևան եկաւ Տաճկահայքում որպէս յեղափո-
խական կուսակցութիւն։ Դաշնակցութիւնն էլ սկսեց
ժողովրդին դէնք մատակարարել և կազմեց խմբեր,
որոնք յեղափոխական Անդրանիկի առաջնորդութեամբ
մեծ ընդգիծութիւն ցոյց տուին քրդերին ու համի-
դէի կանոնաւոր զօրքին հայոց կոտորածների ժա-
մանակ։ Այս կուսակցութիւնն էլ ճիւղաւորուեց և
փոքր ժամանակում կարողացաւ մեծանալ, մանա-
ւանդ որ սա իր ծրագրով համապատասխան էր հա-
յերի ազգասիրական ոգուն։ Սրանք էլ սկսեցին հրա-
տարակել «Դրօշակ» անունով թերթ, որով կու-
սակցութիւնն էլ կոչուեց նաև Դրօշակեան։

Պէտք է գիտենալ, որ վերոյիշեալ երեք կու-
սակցութիւններն էլ կազմուեցան միմիայն Տաճ-
կահայոց համար և վերջերս միայն սկսեցին դարձել
նաև Ռուսաստանում և մինչև անգամ դորանցից
Դաշնակցութիւնը յարմարուեց երկրի պահանջներին
և ընդունեց սօցիալական դաւանանք, ինչպէս որ
էին հնչակեանները։

ՌՈՒՍՅԱՅԵՐ ԵՒ ԿՈՎԿԱՍՅԱՅԵՐ.

ՀԱՅԵՐԸ
ԳԱՂՔՈՒՄ ԵՆ
ՈՌՈՍԻԱ.

Պետրոս Մեծը շուտով հանաչեց հայերին, տեսաւ որ հայն զործնական կեանքի ընդունակ ժողովուրդ է և իր վերածնիչ գաղափարներին էլ համապատասխան, ուստի ամէն տեսակ զիւրութիւններ, արածոնութիւններ տուեց, որպէս զի աւելի ամուր կապերով կապէ նրանց Ռուսիոյ հետ: Ժիշտ որ 1723 թ. սկսած մինչև 1799 թ. Պարսկաստանի հայերը հարուստ թէ չքաւոր շտապում էին դէպի Ռուսիա, որտեղ նրանք փոքր ժամանակում մեծ ծառայութիւններ մատուցին պետութեան թէ՛ որպէս վաճառականներ, թէ՛ որպէս զինուորականներ և թէ՛ այլ ասպարէզներում: 1605 թ. հին Զուղայից Ռուսաստան աւերափոխուեց Մանուկ Լազարեանը, որի որդին Շահ Աբբասի Իրամահատարանի կառավարիչ էր, իսկ թոռ՝ Լազար Լազարեանը նոր Զուղայի փոխարքայ: Սորանց որդիքը տեղափոխուելով Ռուսաստան մեծապաշտօնների հասան և 1816 թ. հիմնեցին Մոսկովայի Լազարեան ճեմարանը, որ բացուեց հայերի համար հայկական ծրագրով, բայց յետոյ Լազարեանների անփութութեամբ ընկաւ:

ՅՈՎԱԷՓ
ԱՐՔԵՊԻՍԿՈՍ
ՊՈՍ.

Այս գաղթի հետ զուգընթաց առաջ էր գնում և գաղտնի յարաբերութիւնը, իսկ էջմիածնի Սիմէօն կաթողիկոսը ոչ միայն գաղտնի, այլ բացարձակ յարաբե-

րութիւն սկսեց Ռուսաց արքունիքի հետ և 1773 թ. Յովսէփ արքեպ. Արղութեանին Աստրախանի առաջնորդ նշանակեց: Յովսէփ արքեպ. բնական խելքով օժտուած հոգևորական էր և փոքր ժամանակում պատկառելի դիրք ձեռք բերեց: Գնալով Աստրախան նա անմիջապէս ծանօթացաւ տեղոյն գաղութի նիսառ կացի հետ, անցաւ Ղրիմի և միւս նահանգներում բնակուող հայերին այցելելու ու բոլոր այն էլ կարգադրեց ամեն ինչ և 1779—80 թ. հիմնեց Նոր Նախիջևան քաղաքը, որ հայկական կեդրոն դարձաւ. բարձրագոյն հրովարտակով բնակիչները 10 տարի ժամանակով ազատ ֆաշին հարկերից: Շուտով հայկական Մազիստրատ բացուեց, առևտրական արտոնութիւններ արուեց և 1781 թ. հայկական դատարան բացուեց, որի համար Յովսէփ արքեպ. 126 յօդուածից մի կանոնադրութիւն կազմեց, որ մինչև 1836 թ. գործադրուեց: 1792 թ. Յովսէփ արքեպ. Բեսարաբիայում Գրիգորիուպօլ քաղաքի հիմք դրեց, որտեղ բնակութիւն հաստատեցին Թիւրքիայից գաղթած հայերը: Յովսէփն իր ժողովրդի անտեսական ապահովութեան համար զնաց Պետերբուրգ, որտեղ նրան շատ լաւ ընդունեցին և զիջանելով նրա խնդրին 1799 թ. Աստրախանի, Ղզլարի, Մոզդուկի, Գրիգորիուպօլի, Ղրիմի, Իերբենդի և Մոսկուրի հայ հասարակութիւններին հրովարտակներով արտոնութիւններ տուին, որով հայերն ազատուելով զանազան

հարկերից ու պարտաւորութիւններից իրաւունք ըստացան հայկական դատարաններ բանալ և տոհմական կարգերով ղեկավարուիլ:

Բայց Յովսէփ արհիի ծրագիրն այն քաղաքական չէր, որ հայութիւնը Ռուսաստան գաղ-
ՏՐԱԳԻՐԸ: Թի. նա, ճիշտ է, քաղաքներ հիմնեց, բայց և չմոռացաւ որ հայութիւնն իր երկրում պէտք է ապրի և ունենայ սեփական կեանք. և արհին օգտուելով Եկատերինէ Բ. կայսրուհու դէպի հայերն ունեցած բարի տրամադրութիւնից ուղղակի յայտնեց, որ ուղւում է Հայաստանում ինքնավարութիւն ստեղծել Ռուսաց հովանու տակ և այդ նպատակով էլ նա ամեն անգամ օգնում էր Ռուսաց զօրքին, իսկ 1795 թ. մի կոչ-շրջաբերականով հայերին զինեց պարսից դէմ, որպէս զի ռուսները յաջողութեամբ աիրեն Կովկասին: Ռուսաց արքունիքը սկսեց յարաբերութիւն արհիի հետ և հետեւեալ հարցեր մէջ ընկան. ա) հայկական նահանգները Ռուսաց անմիջական հովանու տակ առանձին թագաւորութիւն են կազմում, բ) հայերը Ռուսաստանին հարկ պիտի տան, իսկ պատերազմի ժամանակ՝ զօրք, գ) հայաստանը պիտի կառավարուի տոհմական օրէնքներով, զ) Ռուսաց մի զօրաբաժին պիտի մնայ հայկական նահանգներում որոշ ժամանակով, թէ՛ երկիրը պաշտպանելու և թէ՛ նրա վրայ հսկելու համար, ե) հայոց թագաւորի ընտրութիւնը պիտի կատարուի կայսրուհու ձեռքով և թագաւորը

պիտի ունենայ զեսպան Պետերբուրգում, զ.) Մայրաքաղաք՝ Երևան կամ Վաղարշապատ և ազգային զրօշակ՝ երեք զոյնով և է) երկու երկիրներ առևտրական դաշինք են կապում և մաքսային օրէնքներ հաստատում:

Այս պայմանների համար զեռ ևս վերջնական համաձայնութեան չեկած 1796 թ վախճանուեց հայութեան բարերար Եկատերինէ Բ. կայսրուհին և քաղաքական յարաբերութիւններն առ ժամանակ կանգ առան, որովհետև Ռուսաց արքունիքը օգտուելով Պաւել կայսեր թուլութիւնից իր ձեռքն առաւ նաև կայսեր իրաւունքները:

Յովսէփ արհիի սորանով էլ չփա-
տուեց և ուղեց բուն Հայաստանում
ՄԱՅԸ կենդրոնանալ, որպէս զի բռնութեան դէմ կռուի և չնայած նրան չէին սիրում էջմիածնի միաբանութիւնն ու Կ. Պօլսի հայերը, այնուամենայնիւ այնքան արեց, մինչև որ նրան կաթողիկոս ընտրեցին 1800 թ. և ռուսաց ու օսմանեան արքունիքներից հաստատման հրովարտականքը ստանալով 1801 թ. Փետրուարին Թիֆլիս հասաւ էջմիածին գնալու համար, բայց որովհետև Վրաստանի Ռուսիոյ հետ միացման աօնն էր կատարուելու՝ նա հանդիսադիր եղաւ հակառակ վրացի հայրենասէրների ցանկութեան, որոնցից Լէօնիձէն մինչև անգամ Վաղարշի սպառնաց արհիին: Երևի այդ բանի հետեւանք էր, որ արհիին վրաց Դարէնան թագուհին իր

սեփական բաղնիք հրաւիրեց և լողանալուց յետոյ
 թաղուհու մօտ գնաց, որտեղ նրան շարքաթ տուին
 խմելու: Այդ օրից արհին հիւանդացաւ և մարտի 9-
 ին վախճանուեց: Նրա մարմինը երեք ամիս թիֆլիս-
 ում ֆնայուց յետոյ տարան ու թաղեցին Էջմիած-
 նում: Ասում էին որ թաղուհին թուևսւորել էր:

Յովսէփի մահից յետոյ մեծ խռովու-
 թիւն ծագեց Էջմիածնում, որովհետեւ
 ազգը և միաբանութեան մեծ մասը կա-
 թողիկոս ընտրեց Դանիէլ եպիսկոպո-
 սին, բայց Դաւիթ եպիսկոպոսը, որ դեռ առաջ
 յայտնի էր որպէս խռովարար՝ իր կուսակիցներին շնոր-
 հիւ երեւանի սարգարին կաշառելով՝ բռնութեամբ
 կաթողիկոս օծուեց 1801 թ., իսկ Դանիէլի կուսա-
 կիցները Ռուսաստանի հայոց առաջնորդ Եփրեմի
 խորհրդով և Կ. Պօլսի Ռուսաց զեսպանի օգնութեամբ
 1802 թ. մայիսին Բաղրեանդի Իւջքիլիսէ վանքում
 կաթողիկոս օծեցին Դանիէլին: Դաւիթը լսելով այս
 շատ աշխատեց խանդարել, բայց չյաջողուեց և վերջը
 իրր թէ հաշտուեց Դանիէլի հետ և երկուսն էլ սալ-
 բում էին Էջմիածնում: Բայց Դաւիթը Դանիէլին
 ռուսաւէր հռչակելով՝ միջուքը խուղեց ու բանտար-
 կեց:

Միևնոյն ժամանակ Ռուսաց ու Պարսից մէջ պատե-
 րազմ ծագեց և 1804 թ. Ռուսաց զօրքը Յիցիու-
 նով զօրապետի առաջնորդութեամբ պաշարեց Երե-
 ւանը, բայց Յիցիանովը ըստ ռմանց պաշարի պակա-

սութիւնից ու համահարակից ստիպուած, ըստ ռմանց
 երեւանի սարգարից կաշառուած էտ նահանջեց: Դա-
 վիթը չամաչեց պարսից Փաթ-Ալի շահի առաջ պա-
 տերազմի պատճառ Դանիէլին դուրս բերել, որի հա-
 մար նրան աքսորել տուեց Մարաղա, որտեղի ստորգարր
 բարեկամացաւ նրա հետ և տեսնելով որ մի անմեղ
 մարդ է, 1807 թ. յաջողեցրեց Դանիէլին նորից կա-
 թողիկոսացնել: Բիշ ժամանակից յետոյ հիւանդացաւ
 Դանիէլը և բժշկելու համար Դաւիթից պահանջեցին
 Ամիրգովլաթի բժշկարանը, բայց Դաւիթը չառուեց,
 որի համար Դանիէլի կուսակիցները զայրացած խու-
 դեցին Դաւիթին: 1809 թ. վախճանուեց Դանիէլը
 և որպէս զի Դաւիթը չբռնանար՝ ընտրեցին Եփրեմ
 եպիսկոպոսին և հրաւիրեցին Էջմիածին:

Այս բոլոր անցքերի դուխն էր կանգնած Ներսէս
 եպ. Աշտարակցին և կաթողիկոսական բոլոր կարդա-
 ցութիւններ նա էր անում:

Եփրեմը 1810 թ. Նոյեմբ. 8-ին օ-
 ծուեց կաթողիկոս և փոխանակ իր բարե-
 աշխարհներին վարձատրելու մինչև անգամ զըժ-
 դոսութիւն յայտնեց, որ Ներսէս եպիսկոպոսը խառ-
 նում է կաթողիկոսական գործերի մէջ և Ներսէսը
 դժգոհ վէհի ալգ վարձուներից՝ թիֆլիսի առաջնորդ
 նշանակուեց ու հեռացաւ Էջմիածնից: Այս բանը
 շատ վնասեց Եփրեմին, որովհետեւ Մայր Աթոռը
 պարտքի տակ խեղդուած էր և կաթողիկոսը վնասել
 չկարողանալով փախաւ Էջմիածնից, մինչդեռ Ներսէսն

իր հեղինակութեամբ ամեն ինչ կարող էր կարգադրել, և այս անգամ կաթողիկոսը ստիպուած էր Ներսէսին ապաւինուելու:

Ներսէսի Թիֆլիս գալու օրից նոր դարադուլս է: բացուած՝ նա շարունակ աչն էր աշխատում, որ էջմիածինը մի կերպ դուրս պոկէ պարսիկ կեղեքիչների ձեռից և ծանօթանալով Կովկասի կուսակալներին հետ աշխատում էր նրանց միջոցով համոզել Ռուսաց արքունիքին տիրել Երևանեան նահանգին: Շատ չանցած այդ էլ գլուխ եկաւ...

ՌՈՒՍ-ՊԱՐՍԿ.


ՊԱՏԵՐԱՋՄ.

1826—27 թ.

Երևանի սարգսր հասան խանը, որ իր չիւսէին եղբօր հետ Այրարատի տէր ու իշխան էր, 1826 թ. յուլիսին յանկարծ անցաւ սահմանով և Ռուսաց ձեռքն եղած զաւառները ասպատակի մատնեց ու շատ տեղերին տիրեց: Ռուսները յանկարծակիի գալով չկարողացան անմիջապէս զիմադրել բնից լեռոյ հաչազդի դէներալ Մադաթովը ռուսական զօրքով սարսափելի կերպով շարիւց պարսիկներին Շամքորի մօտ ու Գանձակն առաւ:

Ներսէս Աշտարակցին վերջապէս իր ըղձերը կատարած էր տեսնում և 1826 թ. մի կոչ ուղղեց հայերին, որով հրաւիրում էր ամեն կերպ օժանդակել ռուսներին յաջողութեամբ առաջ տանել աշխարհակարական գործը և ինքն էլ յայտնեց Կովկասի կուսակալին, որ ուզում է հաշկական զօրագունդ կազմել հայ կամա-

ւորներից: Այդ առաջարկը սիրով ընդունեցին և Ներսէսը կազմեց զօրագունդ ու մարտի 30-ին Թիֆլիսի նախկին Ղարախ հրապարակում զօրահանդէս կատարեց. Ներսէսը ձիու վրայ մի ձեռին խաչ բռնած, միւս ձեռին սուր, անցաւ նրանց առաջ, օրհնեց և մի հառով ողբորեց: Հայոց զօրքը դեռ բոլորովին պատրաստ չէր և Ներսէսը ապրիլին զնաց ռուսաց բանակը, իսկ զօրքին կազմակերպելը յանձնեց



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Զ Ի Ն Ա Ն Շ Ա Ն

կազմուած յանձնաժողովին: Ներսէսը Բենիկենդորֆ զօրավարի հետ ապրիլ 13-ին էջմիածին մատու, իսկ հայոց զօրքը կազմակերպուեց, մայիսի 15-ին մեծ հանդիսով օժուեց հայոց զրօշակը և զինուորներին երգուեցրին, Թիֆլիսի զինուորական նահանգապետ Սիպեազինը մի կոչով դիմեց հայերին և հայ զօրքի կազմակերպութեան համար հրահանգներ տուեց:

1827 թ. մայիսի 12-ին պատերազմի դաշար ճանապարհուեց զօրավար Պասկևիչը, իսկ մայիսի 17-ին մօտ 2000 հոգուց կազմուած հայոց զօւնդը ճանապարհ ընկաւ Թիֆլիսից, որ հետդհետէ շատա-նով էր նորանոր կամաւորներով: Զօրքը թէպէտ փոքրաթիւ էր, բայց մեծ ծառայութիւններ մատու-ցին ռսներին: Պասկևիչը հասնելով Էջմիածին՝ ու-ժեղացրեց Երեւան պաշարող զօրքը և գլխաւոր բա-նակի հետ յունիսին տիրեց Նախիչևանին և յուլիսի 7-ին էլ առաւ Աբբաս-Աբաղը: Շուտով երեսոյ և պարսից գլխաւոր բանակը Աբբաս-Միրզայի հրամա-նաւարութեամբ: Երեւան պաշարող զօրքը հիւան-դութիւններ տարածելու պատճառով հեռացել էր Բաշ Աբարան և Աբբաս Միրզան օգոստոս 15-ին պաշարեց Էջմիածնի վանքը և սկսեց ռմբակոծել: Վանքին օգնութիւն հասնելու համար Բաշ-Աբարան եղած զօրքը Կրասնովսկու առաջնորդութեամբ առաջ շարժուեցին և Էջմիածնի այգիների մօտ պարսիկ-ների հետ ընդհարուեցան, որտեղ ռուսները մեծ կո-րուստ ունեցան, բայց Կրասնովսկին չնայած վիրաւո-րուել էր՝ հասաւ մտաւ Էջմիածին փառաւոր յաղ-թութիւնից յետոյ: Պասկևիչը լսելով այս շտապեց դէպի Էջմիածին և շատ սառը վերաբերուեց դէպի Ներսէսն ու Կրասնովսկին, նրանց ռուս զօրքի կոտոր-ման պատճառ համարելով: Վշտացաւ Ներսէսը և հիասթափուեց Պասկևիչի այդ բիրտ վարմունքից, բայց շուտով պարզուեց Պասկևիչի գիծակը՝ նա դէմ

էր հայկական ինքնավարութեան հայկական նահանգ-ներում, ահա բոլորը:

Պասկևիչը Կրասնովսկուն ուղարկեց Սարգսր-Ա-բաղը նուանելու, որ և շուտով յաջողուեց, իսկ ինքը սեպտ. 23-ին Ներսէսի հետ դնաց ու պաշարեց Ե-րևանը: Ներսէսը քաղաքի հետ զաղտնի յարաբերու-թեան մէջ մտաւ և շարունակ 'ի նպաստ ռուսաց կոչեր էր ուղարկում: Վերջապէս հոկտեմբերի 1-ին Երևանը առնուեց, ուր Ներսէսը գոհաբանական մաղթանք կատարեց:

Ռուսաց զօրքերը, Մուրաւեով զօրավարի հետ առաջ խաղացին և մինչև Թաւրիզ հասան: Վատա-սիրտ Պասկևիչը լսելով այս թշնամացաւ Մուրաւ-եովի հետ, որովհետեւ ուզում էր ամեն տեղ իրեն տեսնել յաղթող և առաջին:

Ռուսական այս յաջողութիւննէ. չԱՅԵՐԻ ՏԵՍԱԾ ԵՐԵՅ ԵՒՈՅ 1828 թ. փետր. 9-ին ՕԳՈՒՏՆ ՈՒ Թուրքմէնչայում հաշտութիւն եղաւ ՎՆԱՍԸ. որով ա) Երասխ և Կուր գետերի մէջ եղած երկիրները մնում են ռսներին և բ) պար-սից երկրից Ռուսաստան անցնողներին՝ զաղթողնե-րին ոչ մի արդէր չդնել: Ահա սորա հետեւոնքն այն եղաւ որ բազմաթիւ հայեր Ղազարոս Ղազարեանի առաջնորդութեամբ ռուսական հող անցան և տեղա-ւորուեցին Երևանեան նահանգում, որտեղից ցրուե-ցան այս ու այն կողմը:

Միւսնոյն ժամանակ վերջացել էր և Ռուս-Տաճ-

կական պատերազմը և բազմաթիւ դադթականներ
կարնոյ կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդու-
թեամբ Ախալցխա էին անցել, որով ռուսահայաստակ
ժողովրդի թիւը մեծացաւ, իսկ հայ դաւաժները
դատարկուեցան:

Նոր տիրած նահանգները շուտով վարչական
կազմակերպութիւն ստացան և 1828 թ. մարտի
21-ի հրովարտակով «Ճայոց աշխարհ» կոչուեց, իսկ
կայսեր տիրոգոսներին աւելացան և «թաղաւոր հա-
յոց» խօսքերը: Ճայոց աշխարհի համար շուտով ժա-
մանակաւոր կառավարութիւն կազմուեց, որին մաս-
նակցում էր և Ներսէս Աշտարակցին, բայց Ներսէսը
զժողո՞ւ մնաց, որովհետեւ նա վաղուց յայտնել էր
ռուսաց արքունիքին, որ այդ նահանգները պիտի
հայկական ինքնավարութիւն կազմեն: Պատկեւիչը եր-
կար չսպասեց և ըմբոստ Ներսէսին Բեսսարաբիոյ
առաջնորդ նշանակել տուեց: Ներսէսը հեռացաւ
հայրենիքից...

ՅՈՎՀԱՆՆԵՍ
ԿԱՌՈՂԻԿՈՍ
Էջմիածինը ռուսաց ձեռք բնկնելուց
յետոյ Եփրեմ կաթողիկոսը, որ Տփլի-
սումն էր, եօթնամեայ տարադրութիւնից
յետոյ 1828 թ. յունուարին Էջմիածին վերադարձաւ
և որովհետեւ շատ էր ձերացել և թուլացել 1830
թ. հ. օտ. 8-ին հրաժարուեց կաթողիկոսութիւնից
և կոմսի ճնշման տակ կաթողիկոս ընտրուեց 1831
թ. մարտին Յովհաննէս Կարբեցի եպիսկոպոսը, մի
փառասէր ու թուլամորթ հոգևորական, որ մէկ մէկ

քանդեց Ներսէսի շինած՝ ծրարած դործերը: Տան-
կահայերը չուղեցին ընդունել նրան և մինչև անգամ
եկեղեցիներում չէին յիշատակում:

Կովկասեան տեղական վարչութիւնը ծանօթա-
նալով հայութեան հետ, հակառակ Պետերբուրգի
տրամադրութեան համարեա սահմանափակեց հայ
ժողովրդի իրաւունքները և մի յանձնաժողով երկար
գաղտնի ու յայտնի գրադրութիւններից յետոյ պատ-
րաստեց մի կանոնադրութիւն հայոց եկեղեցու հա-
մար, որ յայտնի է «Պօլօժենիէ» անունն տակ և որ
հաստատուեց 1836 թ. մարտի 11-ին: Պօլօժենիէն
մասամբ յարմարեցրած է հայ եկեղեցու հնուանդ
օրէնքներին, բայց մէջը կան և շատ խտրութիւն-
ներ: Սորա հետ միասին 1837 թ. փետր. 22-ին
լացուեց և Սինօզք, որը նոյնպէս հաճելի չէր տան-
կահայերին և նրանք բոլորովին խզեցին իրենց Էջմի-
ածնի հետ ունեցած յարաբերութիւնը:

Յովհաննէս կաթողիկոսի ամենապատ արարքն
այն էր, որ երբ 1837 թ. վերջերը Նիկողայոս Ա.
կայսրը Էջմիածնի ալցելութեան դնաց՝ կաթողիկոսին
առաջարկեց խնդրել իրենից ինչ որ կամենում է յօ-
ղուտ իր եկեղեցու և հօտի բարօրութեան, կաթողի-
կոսը իր երկու եղբօր որդոց համար խնդրեց որ նը-
րանց ազնուականութիւն տայ: Կայսրը զարմացաւ
կաթողիկոսի այս աստիճան անմիտ խնդրի վրայ և...
խնդրածը տուեց: 1842 թ. մարտի 26-ին վախճա-
նուեց Յովհաննէս կաթողիկոսը

ՆԵՐՍԵՍ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ

Յովհաննէսի ընթացքը բաւական խրատական էր և այս անգամ ազգը իր իրաւունքի ետևից ընկաւ և օգտուելով այն հանգամանքից, որ Ներսէս արքեպիսկոպոսի թըշնամիներն անյօր էին, 1843 թ. նրան ընտրեցին կաթողիկոս: Ներսէսը քիչ ուշ հասաւ Էջմիածին և հէնց դալու օրից վանքի զրութիւնը բոլորովին յեղաշրջեց. այլևս չկային այն անկարգութիւնները, որ եղել էին նախորդների օրով, որովհետև կարգապահութիւնը օրինակելի էր: Ներսէսը Թիֆլիս առաջնորդ եղած ժամանակ 1823 թ. բացեց Ներսիսեան զբոսայգի, որով նա ամբողջ Կովկասի հայութեան առաջին միջնակարգ զարոցի հիմքը դրեց և Թիֆլիսի հայերը նրան շատ էին սիրում: Նա իր կաթողիկոսութեան ընթացքում էլ կեանքի մեծ մասը Թիֆլիսում անցրեց, շարունակ շփումն ունենալով Կովկասի փոխարքաների հետ, որոնցից իշխ. Վօրոնցովի հետ շատ մտերիմ յարաբերութեան մէջ էր, և իր զիրքը կարողացաւ այն աստիճան բարձրացնել, որ թէ՛ հոգևորականութիւնը և թէ՛ աղաներն ու իշխանները գոգում էին նրա առաջ, իսկ մի նոր կարգադրութիւն կառավարութեան կողմից արգելքի էր հանգիստում նրա կողմից: 1857 թ. Փետրուարին Թիֆլիսում յանկարծամահ եղաւ Ներսէս Ե. կաթողիկոսը և թաղուեց Էջմիածնում: Ըստ ոմանց նրան թունաւորեց Սարգիս արքեպ. Հասան Զալալեանը:

ՄԱՏԹԵՈՍ ԵՒ
ԳԷՈՐԳ ԿԱԹՈՂԻ-
ԿՈՍՆԵՐ:

Ներսէսից յետոյ կաթողիկոս ընտրուեց Կ. Պօլսի նախկին պատրիարք Մատթէոսը (1859—1865 թ.), որ կրթական գործին մեծ դարկ տուեց և երբէք չկարողացաւ յարմարուել Սինօզին, միանգամայն մերժելով Պօլսիէնէի մի շարք յօդուածները, իսկ Մատթէոսից յետոյ եղած Գէորգ Դ. կաթողիկոսը (1866—1882 թ.) թէպէտ գործունեայ մարդ էր, բայց 1874 թ. հիմնած նեմարանի համար եղած գումարներից ու առհասարակ Էջմիածնի կարողութիւնից մեծ գումարներ կորան, որի մէջ մեղադրեցին կաթողիկոսի մօտ ապրող Վահրամ եպ. Մանկունուն, որ ազգային-եկեղեցական կառավարութեան դէմ իր մեռն էր վերցրել: 1876 թ. ղեկուսմբերին Կովկասի փոխարքայ Միխայիլ Նիկոլաևիչին (1866—1881 թ.) Թիֆլիսի հայերի կողմից ինք հոգի որպէս պատգամաւորներ տանկահայոց համար ուղերձ մատուցին կայսեր անունով, բայց Գէորգ Դ. ոչ մի բայլ չարեց, որով և թշնամիներ վաստակեց, իսկ երբ ռուս-տանկական պատերազմից յետոյ Ալաշկերտի ու Բայազէթի զաղթականները հասան Էջմիածին, անտարբերութիւնը կատարեալ էր և բացարձակ կերպով սկսեցին մեղադրել Մանկունուն մամուլի մէջ: 1882 թ. ղեկուսմբերի 6-ին վախճանուեց Գէորգ Դ.:

Պատմում են որ Վահրամ եպ. Մանկունին կաթողիկոսի մահից յետոյ սեփականեց կաթողիկոսի ամբողջ կարողութիւնը և գանձարանում թողեց 16 ռ. 61 կոպ

որով ուզում էր ասած լինել, թէ կաթողիկոսը յիշեցնում էր 16-րդ և 61-րդ յոդուածները, որով խաբեց եւրոպան հայերին:

ՆՈՐԱԳՈՅՆ ՇՐՋԱՆ.

1881 թ. Մարտի 1-ին եղեռական մահով սպանուեց Ալեքսանդր Բ. ազատաւոր թաղաւորը: Այդ մահը հայերին մեծ հարուածներ հասցրեց, ուստի արքունիքը փոխուեց, մէջտեղ երեւցին մարդիկ, որոնք միմիայն ուստի ազգի գոյութեան պատնէշներ էին կազմում, իսկ օտար հպատակներին ճնշում: Հէնց 1881 թ. Կովկասից հեռացրին Միխայիլ Նիկոլաւիչին, որին տեղացիները սիրում էին որպէս խաղաղասէր և մարդասէր. իշխանաւորի: Նրա օրով հայոց կեանքն սկսեց եռալ մեղ համար նոր ոսկեդար բացուեց, յառաջագիմեց մամուլն ու գրականութիւնը, բացուեցան դպրոցներ, ընկերութիւններ, որոնց տուած օգուտները ոչ մի վնաս չէին հասցնում պետութեան:

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ. Գէորգ Դ-ի մահից յետոյ կաթողիկոսի ընտրութիւնը չհաստատուեց, որովհետեւ ընտրուած էր Մելքիսեդէկ Մուրադեան եպիսկոպոսը, որ Ռուսաստանից հեռացել էր զեռփութսունական թուականներին: Երկրի կառավարչապետ էր նշանակուած Դոնդուկով—Կորսակով, որ կառավարութեան յետադէմ քաղաքագէտներից մէկն էր: Նա իր դալուստն անմահացրեց դպրոցական հարցով և 1884 թ. փետր. 16-ին հրատարակուեց

հրովարտակ հայոց դպրոցների համար. Կովկասեան բոլոր հայ ծխական դպրոցները, որոնք ղեկավարուում էին 1874 թ. յուլիս 19-ին հաստատուած ծրագրով փակուեցին: Հայերը մնալով առանց կաթողիկոսի, ոչ մի ընդգիծութիւն չցոյց տուին, միայն խուլ բողոք բարձրացրեց էջմիածինը «Արարատ» ամսագրի միջոցով: Միւսնոյն ժամանակ կաթողիկոսական երկրորդ ընտրութիւնն եղաւ և այս անգամ հաստատուեց Մակար Ա., որի համար ասում էին որ կառավարութեան կողմնակից է: 1885 թ. Մակարը հաստատուեց և կառավարութիւնը 'ի պատիւ նորա 1886 թ. վերաբացեց դպրոցները, բայց սահմանափակ ծրագրով: Մակար կաթողիկոսին շատ բանի մէջ մեղադրեցին, բայց իրօք նա հայութեան գոյութիւնը ոչ մի կերպ չփտանդեց:

1887 թ. յայտարարուեց Կովկասեան ազգերին զինուորագրութեան ենթարկելու հրովարտակը: Տարածուեցան լուրեր, ազգը չկարողացաւ իմանալ թէ ինչ է իր պարտաւորութիւնը, ասում էին որ հայ աղջիկներին պէտք է ուստի զինուորների հետ ամուսնացնեն և այս վախի տակ մարդիկ գտնուեցան, որոնք ընդգիծութիւն ցոյց տուին: Կովկասեան իշխանութիւնը հայերին ապստամբ դուրս բերեց: Երեւ

ՀԱՅՈՑ

ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

տարիանց. 1890 թ. Տրսպիգոնում և Կարիւնում հայկական կոտորածներ տեղի ունեցան 'ի հարկէ Կովկասի հայերը բողոքեցին

մինչև անդամ դադարի չեղափոխական զնդեր կողմեցին Օսմանեան կառավարութեան դէմ և Կարսի մօտ երբ պատրաստուած էր սահմանը անցնելու Ս. Կոնկունեանի խումբը, նրանց բռնեցին և տաժանակիր աշխատանքի մատնեցին: Այստեղից հայերի վարկը բոլորովին ընկաւ և Կովկասի կառավարութիւնը յայտնեց Պետերբուրգ, որ հայերն ուղղում են թաղաւորութիւն վերականգնել, որի համար վաշտներ են կազմել:

Այս բանից յետոյ արդէն բոլորովին փոխուեց այն կարծիքը թէ հայերը հաւատարիմ տարր են:

ԿԱՌԱՎԱՐՁԱՊԵՏ

ԳՕԼԻՑԻՆ:

Սկսուեցան ննջումներ, որոնք առժամանակ չգործադրուեցան, մինչև որ 1893 թ. կաթողիկոս ընտրուեց Մկրտիչ Ա. Խրիմեանը: 1894 թ. նորից սկիզբ առաւ դպրոցների հարցը, Կովկասի բիւրօ-կրատիան համոզել էր Պետերբուրգի կառավարութեան, որ հայ դպրոցները չեղափոխութեան բռններ են, որ ապագայ Մեծ Հայաստանի վերականգնանացման ճրագիր է պատրաստուած: Բանն այնտեղ հասաւ, որ 1896. Մասալով և իշխ. Ուխտոմսկին որպէս քննիչներ եկան Կովկաս, Էջմիածնից աքսորեցին Նահապետ և Վահան վարդապետներին որպէս չեղափոխիչ քաղաքագէտների, բայց քննութիւնից երևաց, որ հայերը ոչ մի գաղանի միտում չունեն և բոլորը չար լեզուից է ծագել: Բայց երկրի կառավարչապետ իշխ Գօլիցինը, որ իրեն բոլոր ազգերի բարեկամ

յայտարարեց իր Թիֆլիս մտածօրը՝ պնդեց իր պահանջի վրայ և 1897 թ. նորից փակուեցին հայոց դպրոցները, 1898 թ. Մարտի 26-ին դպրոցական կալուածների գրաւման հրահանգներ տրուեցին, իսկ 1899 թ. փակեցին հայոց ընկերութիւններն ու գրադարանները, 1900 թ. հայոց Հրատարակչական ընկերութիւնը և այսպիսով միանգամից ոչնչացաւ տարիների ընթացքում գլուխ բերած գործը: Բայց սորանով էլ չվերջացան ցաւերը, հերթը Էջմիածնին հասաւ և կաթողիկոսի իրաւունքների հարցը ծագեց, իսկ ազգի գոյութեան հարցը բոլորովին վաւանգուեց, որովհետև իշխ. Գօլիցինը գաղանի հաղորդագրութեամբ յայտնեց, որ հայերին պէտք է գաղթեցնել Սիբիր, թէ չէ երկիրը չի կարող խաղաղուել, բայց Պետերբուրգում այդ մէկը չանցաւ և միեւնորէն թիւնը հիւսնաքար դրուեց:

Մնաց մի բան միայն՝ հաւատուրացութիւն. օգտուելով գիւղացոց թուլութիւնից Սուրմալուի Խարխալու և Գողը գիւղերի գիւղացիներին խաբեցին, որ եթէ հաւատն ուրանան նրանց հողեր կտան: Գիւղացիք հաւատացին, ռուսադաւանութիւն ընդունեցին, բայց հողեր չտուցան: Նոյնպէս վարուեցան և Արգինայի ու Ալեքսանդրովկա գիւղերի գիւղացոց հետ, ռուսացորին և 1902 սեպտ. 30-ին նրանց համար Ալեքսանդրովկայում Ս. Գրիգոր Լուսաորչի անունով ռուսաց եկեղեցու հիմքը դրին:

ՏԱՃԱՎԱՅՈՑ

ՎԻՃԱԿԸ

Այս բոլորի հետ միասին Տաեկահայոց գրութիւնն էլ բոլորովին վտանգուեց, որովհետեւ 1901 թ. Կովկասեան կառավարութիւնը առաջարկեց նրանց կամ հեռանալ Ռուսաստանից և կամ ռուսահայատակ գրութիւնը: Դրութիւնը անտանելի դարձաւ որովհետեւ ռուսահայատակ գրութիւնը նրանք կորցնում էին այն բոլորը, որ թողել էին հայրենիքում, իսկ մտնել Թիւրքիա անկարելի էր որովհետեւ նրանց առաջ պատկերացած էր մահուան սարսափը և երկրորդ՝ Թիւրքիան չկամեցաւ ընդունել գաղթած հայերին: 1902 թ. օգոստ. 5-ին Թիֆլիսի ոստիկանապետը 10 օրուայ ժամանակամիջոց որոշեց հեռանալու համար: Օգոստոս 11-ից Թիֆլիսից դուրս եկան խումբ խումբ գաղթականներ և դիմեցին զէպի հայրենիք: Գաղթականները հաւաքուեցան սահմանադրին գտնուած Բաշիգիւղ, Արմաղու, Չուրուկ, Սթահան, Չիլախլի, Գիւլանթափ և Ղարափունդար հայ գիւղերը, որտեղ նրանց հետ միացան աեղոյն գաղթականները և մօտ 2600 հոգի դիմեցին զէպի սահման, բայց թէ՛ Օսմանեան և թէ՛ Ռուսաց սահմանապահ զօրքը խօնգոտ եղան: Գաղթականները դիմեցին Պարսից սահման, որտեղ յառաջընթաց խումբը հրացանի բռնուեց, իսկ մնացեալներին վարչական եղանակով ետ բերին: Բարձրացաւ կական, գաղթողները սեպտ. 10-ին դիմեցին Թիֆլիսի հիւպատոսի միջոցով Փրանսիական Հանրապետութեան արտաքին գործոց մինիստրին, որ Սուլթանի առաջ միջ-

նորդէ ընդունել հայ գաղթականներին: Այս էլ զուր անցաւ և ճարահատների մէկ մասը դադանի Պարսկաստան տնցան, ոմանք ռուսահայատակ գրութեցին, իսկ ոմանց ուղարկեցին բնակուելու Ռուսիոյ խորքերում:

Այս բանին մի նոր հարց հետեւեց. եԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՒԱԾՆԵՐ Դա եկեղեցական կալուածների դրսւման հարցն էր, որ ներկայացրել էր իշխ. Գօլիցինը, և թէպէտ մինիստրութեան մեծամասնութիւնը հակառակ էր եղել, բայց 1903 թ. յունիս 12-ին հրատարակուեց բարձրագոյն հրովարտակ, որով կառավարութիւնը նպատակ էր դրել ա) մեծացնել չայոց եկեղեցու եկամուտները և նպաստել նրա բարգաւաճման, բ) ապահովել չքաւոր հոգեւորականներին և գ) ազատել եկեղեցու կալուածները ապօրինի յափշտակութիւնից. և այս բոլորը զլուխ բերելու համար եկեղեցական կալուածները չարքունիս զրաւուեցան: Այս զէպի հետեւանքները շատ վատ էին և յուլիս 29-ին երբ կաթողիկոսը Ալեքսանդրոպոլից էջմիածին էր մեկնում՝ եկեղեցու զանդերի զօղանջիւնով յաջորդարանի մօտ խմբուեցան 5000-ի չափ հայեր, որոնք պահանջեցին կաթողիկոսից բողոքել և Ժողովուրդը աղմուկով ուղեկցեց կաթողիկոսին մինչև կայարան: Օգոստոս 16-ին Երևանից ահադին բաղմութիւն Սուրբիաս արքեպ. Պարգեանի հետ ուռով էջմիածին զնաց, զէնքի ճայթիւնների տակ մտան վանքը և բողոքեցին կաթողիկոսին: Յոյցերը կրկնուեցան Գանձակ, Բազու, երկուսն էլ արիւնալից:

Տիրխտում օգոստոս 3-ին մեծ ցոյց եղաւ, իսկ շատ տեղերում զրուսման րոպէին ժողովուրդը բնդդիմութեան ցոյցեր արին, որի հետեանքն եղան աքսորներ և բանտարկութիւն։ Աքսորուածների թւումն էին Սուքիաս արքեպ., «Նոր—գարի» խմբ. Ս. Սպանդարեան, բժշկապետ Բ. Նաւասարդեան, շատ երիտասարդներ և օրիորդներ։ Կալուածների զրուսման դէմ բողոքեց նաև Օրմանեան պատրիարքը թիւրքահայերի կողմից։

ՏԱՃԿԱՅԱՅՔԸ

1904 ਟਿ.

ՏԱՃԿԱՅԱՅՔԸ
1904 թ.

Տառնահայրոց կոտորածը նորից կրկ-
նուեց և շատ մեծ ծաւալ ստացաւ Բի-
թլիսի և Մշոյ դաւառներում. տառնիկ-
քիւրդ հրոսակախմբերն ու զօրքերը կոտորելով բնա-
կիւններն՝ 17 գիւղ հրդեհեցին Բիթլիսի շրջանում. շատ
տուժեց և Սասունը: Այս հարուածների ժամանակ
նորից երևաց լեզափոխական Անդրանիկի խումբը
մօտ 2000 հոգուց բաղկացած: Առաջին մարտը տեղի
ունեցաւ 1904 թ. մարտի 31-ին: Սուլթանը
տեսնելով որ Ռուսաց, Ֆրանսիացոց և Ան-
գլիացոց զեապանները այդ դէպքերի մասին բա-
ցատրուծիւն են պահանջում, Օրմանեան Մա-
ղաթիս պատրիարքի միջոցով ուղեց բանակցել
Անդրանիկի հետ և երբ ապրիլ 13-ին երկու
կողմից հաւաքուեցան ժամադրաւայր Գեղաշէն գիւղը
յանկարծ քրդերը թափուեցան գլխաւորներին բռ-
նելու, սակայն հայերը նախազգաց լինելով՝ սկսեցին
կռուել, որի ժամանակ Շէնիկ, Սիմալ, Դաշտակ,

Ձայ հրոյ նարակ դարձան: Գէլիկուզանի կռիւր
Թիւրքերի համար շատ կորստաբեր եղաւ և Թիւր-
քերը փախան: Այս կռուից յետոյ 15000 զօրք շր-
ջապատեց Սասունը, այրեցին Քէլի, Բերդթաղ և այլ
գիւղերը և պաշարեցին Անդրանիկին, որ Անդոկ լե-
ռան վրայ էր գտնուծ, բայց չկարողացան բռնել և
հայերը շարունակեցին կռիւները՝ մինչև անգամ
օգոստոս 4-ին Բիթլիսի փողոցներուծ լաւ շարդ տուին
տանիկ զօրքին: Սրանից յետոյ ընդհարուծ եղաւ Վա-
նուծ և ապա Էրզրուծի մօտերքը և Թիւրքիտն
ստիպուեց մեծ պատրաստուծիւններ տեսնել: Այս
պատրաստուծիւններին վրայ հասաւ ծմեռը և հայ
յեղափոխականները պահապան զնդեր կարգելոյ՝ դա-
դարեցրին գործողուծիւնները, իսկ Անդրանիկն ան-
ցաւ Նւրուպա:

ՀԱՅ-ԹՈՒՐԻԱ-
ԿԱՆ ԿՈՏՈ-
ՐԱԾՆԵՐ:

Բոսփորի ափերում վստացող հա-
միսյամական կոմիտեները վաղուց աշ-
խատում էին մի կոտորած էլ Ռուսաս-
տանում սարքել: Այդ բանը շատ ձեռքն-
տու էր և այն մարդկանց, որոնք վաղուց փախա-
ցում էին հայերին անտեսապէս ենչել: 1905 թ.
յունուար ամսին Ռուսաստանում մի շարք գործա-
դուլներ եղան, որոնք քաղաքական բնաւորութիւն
ունէին և բոլոր ազգութիւններ հաւասարապէս մաս-
նակցում էին: Դա հետեւանք էր Ռուսաստանի ազա-
տարար շարժման: Այդպիսի մի գործադուլ էր լինե-
լու նաև փետրուար 18—20 սպասուելիք Բազուլի

գործադուլը, որ կաղմակերպելու էին բոլոր քաղաքական կուսակցութիւնները: Սորա առաջն ստանելու համար Բազուի նահանգապետ իշխան Նակաշիծէն շատ էր աշխատում: Շուտով մի նպաստաւոր դէպք պատահեց. փետր. 6-ին մի հայի ու մի թուրքի միջև ընդհարում եղաւ և թուրքը մի քանի անգամ հայոց եկեղեցու մօտ փորձ արեց սպանել հային, բայց ինքը սպանուեց: Թուրքերը վերցրին սպանուածի դիակը և կտրքով շրջեցրին քաղաքի փողոցներում յորդոր կարգալով լուծել վրէժը: Այս մունեստիկներին նպաստեց և ոստիկանութեան անստորբերութիւնը և շուտով լսուեցան ղէնքերի շառաչիւններ՝ թուրքերը դիմում ընկան փողոցներ և պատահող հային զընդակահարեցին: Փետրուար 7-ին Բազուն պատերազմի դաշտի փոխուեց, հայերն սկսեցին արծաղանք տալ, բայց շուտով քաղաք մտան շրջակայ գիւղերի թուրքերը, որոնք վերջին սիստեմի ղէնքեր ստանալով սկսեցին մի չքաւեսնուած կոտորած, աւեր ու սրածութիւն, սկսուեցան հրդեհներ, որոնք մի քանի ժամում կուլ տուին միլիոններ և շինութիւնների մէջ շատերը այրուեցան մոխիր դարձան: Զօրքն ու ոստիկանութիւնը ահանաւոր էր և երբ հասարակութիւնը նահանգապետից պահանջեց վերջ տալ, նա յայտնեց որ ինքը անզօր է առաջն ստանելու: Բազունեցի հայերը բողբոջեցին կառավարչապետի օգնական Մալամային և վերջապէս փետր. 9-ին նաշից յետոյ կոտորածը դադարեց երկու կողմից էլ մի քանի հարիւր զոհեր տալուց յետոյ:

Բազուի հայերը վախեցած որ ապագայում էլ կարող են նման դէպքերը կրկնուել՝ սկսեցին վախճել քաղաքից և շատերը բոլորովին դադարեցին: Բազուն յետոյ էլ եղան փորձեր կրկնելու նման դադանութիւնները, բայց այս անգամ հայերը չթողին: Թուրքերին շատ նպաստեց նաև ուսու հայրենասէրների միութիւնը, որ նոյնպէս եկեղեցական թաքօրով ուղեց կոտորած սարքել, բայց ստիպուեցան դադարեցնել անկարգութիւնները:

Բազուի առաջին կոտորածից յետոյ փետր. 13-14-ին Թիֆլիսի հայերն ու թուրքերը յուգայական համբօյրներով բարիշէցին և Վանքի մայր եկեղեցու բակում ու թուրքերի պերեզմանատանը հոգեհանգիստներ կատարեցին: Երկու կողմն էլ յորդորեցին ժողովրդին վերջ տալ եղբայրասպանութեան և մեղաւոր նանաչեցին «շէլթանին», սակայն փետրուարի 20-ին թուրքերը երևանում փորձեցին կոտորած սկսել, որի առաջն առան առաջնորդ Կ. Վ. Տէր Մկրտչեանը, քաղաքապետին ու նահանգապետը, թէպէտ 21-ին հայ յեղափոխականները շատ վախեցրին թուրքերին և դա աւելի նպաստեց դործին: Սոյն կոտորածներից յետոյ մի քանի չարամիտ պարսիկներ անցնելով Պարսկաստան ուղեցին այտեղ էլ նոյն տեսակ դադանութիւններ ստեղծել, բայց Պարսից կառավարութեան ձեռք առած խիստ միջոցները խանգարեցին միտկ փորձը, որ եղաւ մարտ 8-ին Մեշէք քաղաքում:

Ընդհակառակը նորից ալեկոծուեց Կովկասը և

մայիս 9-ին խիստ կոտորած սկսուեց Նախիջևանում և գիւղերից քաղաքը լցուած թուրքերը սկսեցին կողոպտել հայոց խանութները: 12-ին մայիսի Նախիջևանը բոլորովին արիւնոտուեց: Կոտորածը շուտով տարածուեց նաև շրջակայ գիւղերը՝ Զահուկ, Կարախանքեկու ևն: 13-ին դադարեց Նախիջևանի կոտորածը, բայց գիւղերը երկար ժամանակ արեան ծով էին ներկայացնում: Այս կոտորածը ոգևորեց Երևանի թուրքերին և մայիս 23-ին յանկարծ թուրքերը յարձակուեցան հայերի վրայ, բայց հայերը այնպիսի բնութիւնութիւն ցոյց տուին, որ թուրքերը մի քանի օր վախից աներից չէին գուրս դալիս: Կոտորածը դադարեց 25-ին մայիսի թուրքերի կատարեալ պարտութեամբ:

Սարաաիւելի էր նաև Շուշու կոտորածը օգոստոս ամսին, որտեղ նոյնպէս հայերը յաղթեցին: Շրջակայքում եղած շարդերից նշանաւոր է Ասկերանի կռիւր և եթէ կառավարութիւնը չմիջամտէր թուրքերը մեծ վնասներ կկրէին: Առանձնապէս վնասուեց Վարանդան, Զանդեղուրը, և երկիշը մատնուեց նախ պաշտօնեաների անդթութիւններին և յետոյ էլ սկսուեց չտեսնուած ուրի, որ դեռ այսօր էլ շարունակուած է:

Կոտորածն արձագանք դտաւ նաև Գանձակում և նոյեմբեր 18-ից սկսուեց մի քանի օր տեղւոյ սարաաիւելի կոտորած, որին հետևեցին լայնածաւալ հրդեհներ, իսկ նոյեմբեր 22-ին սկսուեց Թիֆլիսի կո-

տորածը, որ երեք օր տևեց և վերջացաւ հայերի կատարեալ յաղթութեամբ: Կոտորածներ եղան ուրիշ թրքաբնակ տեղեր, բայց մեծ մասամբ յաղթողները հայերն էին:

Կոտորածների ու ապագայ բարդութիւնների առաջն առնելու համար Թիֆլիսում հայ-թուրքական համագումար եղաւ պետական լիազօրների մասնակցութեամբ և կոտորածները դադարեցին:

Ազգի այս ցաւալի ճգնաժամին կա-
ՓՈԽԱՐՔԱՆ
ԿՈՎԱԿԱՍՈՒՄ
Պետերբուրգ կալուածների ղրաւման
1905 թ. առթիւ, բայց ոչ մի հետևանք չերևաց,
որովհետև ներքին դործոց մինիստր Պլեէն ինքն էր
ծրագրել այդ բոլորը Գօլիցինի հետ միասին էջմի-
ածնի սինօզի պրօկուրօր Կանչելիի թելադրութեամբ:
Պլեէնի մահից յետոյ հայոց կալուածների հարցը ըն-
թացք ստացաւ: 1905 թ. փետրուարին Կովկասում
փոխարքայութիւն վերհաստատուեց և փոխարքայ
նշանակուեց կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովը, որ
նախ քան Կովկաս գալը երեք ամիս մնաց Պետեր-
բուրգում Կովկասի վերաբերեալ մի շարք հարցերի
վերջնական վճիռը ստանալու համար: Կաթողիկոսը
շտապեց բոլորել փոխարքային և առանձին պատգա-
մաւորութիւն ղրկեց Պետերբուրգ, որոնք մինիստր-
ների խորհրդի նախագահ Վիտտէին ներկայացրին
կաթողիկոսի բողոքը, իսկ մարտի 22-ին (1905 թ.)
ներկայացան փոխարքային և նա խոստացաւ բաւա-
րարութիւն ապա հայութեան բողոքին:

Բայց այս մինչև փոխարքայի Կովկաս դալը թիֆլիս հաւաքուեցան Կովկասի 24 հայաբնակ կէ-
դրոնների ներկայացուցիչները և առաջնորդարանում
մի շարք ժողովներով կազմեցին մի հանրագիր 20
կէտից բաղկացած, որի մէջ շեշտուած են հետևեալ
հարցերը.

ա) Տեղական ինքնավարութիւն, օրէնքներ քննող
զեմսովային ժողով, բ) դատարանների վերակազմու-
թիւն, գ) իրաւահաւասարութիւն. դ) խօսքի, ժողովնե-
րի, համախմբումների, ստաշկանների և ընկերակցու-
թիւնների ազատութիւն, գրաքննութեան վերացում.
ե) լեզուի ազատութիւն. զ) անձի և բնակարանի ան-
ձեռմխելիութիւն, է) դպրոցներ և պարտադիր ուսում.
ը) մայրենի (հայ) լեզուն, գրականութիւնը, կրօնն ու
պատմութիւնը դպրոցներում. թ) խղճի ազատութիւն.
ժ) հայ եկեղեցու ինքնավարութիւն. ժա) վերադարձ
հայ դպրոցների և կալուածների. ժբ) հայ կաթողիկ
համայնքը Կովկասում. ժգ) հարկերի չափը. ժդ) բան-
ւորական օրաժամ, միութիւններ և ընկերակցութիւն-
ներ. ժե) գիւղացի և հող. ժզ) գիւղացիական հողերի
յետգնման հարցը. ժէ) գիւղացիք և արքունի հողերը.
ժը) ոռոսաց հպատակ թիւրքահայոց իրաւահաւասա-
րութիւնը. ժթ.) հայ զինուորը Կովկասում ծառայի-
ր) ամնիստիա հայերի վերաբերեալ:

ԿՊՐՈՑՆԵՐԻ ԵՒ

ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ

ԿԵՐԱԴԱՐՁԸ

Մայիսի 5-ին թիֆլիս ժամանեց
Կովկասի փոխարքան, որ նոյն օր և
եթ այցելեց Վանքի մայր եկեղեցին:
Փոխարքային դիմաւորեց կաթողիկո-
սի կողմից առանձին պատգամաւորութիւն, իսկ յու-
նիսին թիֆլիս հասաւ Վեհ. կաթողիկոսը և 25-ին

յունիսի տեսնուեցաւ փոխարքայի հետ, ու կրկնեց իր
խնդիրը կալուածների, դպրոցների և այլ հարցերի
վերաբերեալ: Փոխարքան խոստացաւ. կատարել և
1905 թ. օգոստոսի 1-ին հրովարտելով վերադար-
ձին եկեղեցական և դպրոցական կալուածները:
Սոյն հրովարտակի հիման վրայ շուտով վերաբացու-
եցան հայոց եկեղ.-ծխական դպրոցները 1874 թ.
ծրագրով:

ՌՈՒՍԱԿԱՆ

ՅԱՐԺՄԱՆ ԴԵ

ՏԵԽԱՆՔՆԵՐԸ

Ռուս-Նապոնական պատերազմը
ոյժ առեց ուստական ազատարար
շարժման և 1905 հոկտ. 17-ին
բարձրագոյն հրովարտելով սահմանա-
փակ սահմադրութիւն շնորհուեց Ռուսաստանին և
հաստատուեց նաև ներկայացուցչական ժողով — Պե-
տական Դումա:

Այս ազատութիւնն աղբեց նաև հայութեան
վրայ և հայ լեզուափոխական կուսակցութիւնները ըս-
կեցին բացարձակ դործել: Ազգն էլ բաժանուեց
կուսակցութիւնների, որով առաջ եկան Հնչակեան,
Դաշնակցական, հայ-դեմոկրատիկ կամ սահմանադրա-
կան-ռամկավարական և պահպանողական կուսակցու-
թիւններ, իսկ բանուոր դասակարգը զլխաւորապէս
սօցիալ-դեմոկրատ կուսակցութեան մէջ մտաւ: Հա-
յոց մէջ սօցիալիզմի դադափարը փաղուց մուտք դոր-
ծեց և դեռ 1880 թ. հայ սօցիալիստները Գլխոր
Մելիքսեդեկեանի խմբագրութեամբ «Աշխատանք —
Трудъ» անունով հայ-ուս թերթ սկսեցին հրատա-

քակել, որ 3 տարուայ ընթացքում 5—6 համար տուեց և համարեա բոլորը դրաւուեցան: Սորանից չեաոյ աշխարհ եկան սօցիալ-դեմոկրատները, որոնց մի հատուածը կազմեց «Հայ սօցիալ-դեմ.» կուսակցութիւնը:

Ռուսական ազատարար շարժումը հայ կեանքը պղտորեց բռնի փող պոկող և մահուան ահ ազդող անարխիստ կոչուող խմբերով, որոնց դէմ սկսեցին կռուել կուսակցութիւնները, բայց ոչ մի հետեւանք չեղաւ:

Ռուսաստանի ազատարար շարժումը նոր հոսանքներ ծնեց հայ ժողովրդի մէջ, որոնք սկսեցին կաթողիկոսից պահանջներ անել ազգային-եկեղեցական այլ և այլ խնդիրների վերաբերեալ: Կաթողիկոսը կամենալով մի կերպ վերջ տալ պահանջներին նախ մի մասնախումբ կազմել տուեց Էջմիածնի միաբաններից ու նեմարանի ուսուցիչներից, իսկ մայիս 10-ին առւած առաջին աշխարհաբար կոնգակով հրամայեց օգոստոս 15-ին հրաւիրել մի ժողով՝ կենդրոնական ժողով, որի նպատակն էր լինելու ճշտելի հաստատուն կանոնադրութիւն թեմակալ առաջնորդների, յաջորդների, գործակալների և հոգևոր վարչական հաստատութեանց պաշտօնեաների բնութագրութեանց իրաւունքը: Մեր կուսակցութիւններից Գաշնակցութիւնը որ առաջին ինիցիատորն էր այդ գործի, սկսեց աշխատել ընդլայնել ժողովրդի իրաւունքները և յունիս 7-ին լոյս տեսաւ երկրորդ աշ-

խարհաբար կոնգակը որպէս հրահանգ, որի մէջ առւած է որ մօտ 20000 մարդ մի պատգամաւոր է ընտրուած, որով կեդրոնական ժողովն ունենալու է 60 պատգամաւոր և լինելու է «ռուսահայոց եկեղեցական գործերի կարգադրիչ և սնօրէն, կարող է իր քննութեան ենթարկել և որոշումներ տալ ռուսահայոց բոլոր եկեղեցական գործերի վերաբերմամբ»: Իսկ առաջին նստաշրջանի համար իբրեւ անչեւտածելի կարեւորութիւն ունեցող խնդիրներ լինելու են «գլխորդական, տնտեսական գործերը և թեմական ժողովները կարգաւորելու հարցերը»:

Բնական է որ սոյն երկու կոնգակները թիւրիմացութեան տեղիք կտային, որովհետեւ թէ՛ Ռուսաստանում, թէ՛ Պարսկաստանում և թէ՛ Ճաճկաստանում, հնում թէ՛ նորում բոլոր եկեղեցական գործերի կարգադրիչ և քննիչ եղել են հոգևորականութիւնն ու աշխարհականները, մինչդեռ սոյն կոնգակները միանգամայն զրկում էին հոգևորականութեան եկեղեցական գործերը քրնելու ու կարգադրելու իրաւունքից: Այս հիման վրայ 1906 թ. յունիս 15-ին Էջմիածնի միաբանութիւնը մի ժողով գումարելով բողոք ներկայացրեց կաթողիկոսին 14 ստորագրութեամբ (բողոքողներ էին Սիւքիաս, Գէորգ և Արիստակէս արքեպիսկոպոսները, Ղևոնդ, Յովհաննէս և Նահապետ Էպիսկոպոսները, Գրիգորիս, Համագասպ, Եսայի, Եղիա, Անտօն, Գեղամ, Սահակ և Կարապետ վարդապետ-

ները), որով բողոքում էին որ եկեղեցական գործերը պիտի կարգադրի զուտ աշխարհական ժողովը և դժգոհ էին, որ կաթողիկոսը չէր խորհրդակցել միաբանութեան հետ: Շուտով Վաղարշապատը լսեց այս և անմիջապէս դաշնակցութեան անդամները 14 հոգեւորականների ժողովի քարտուղար Կարապետ վ. Տէր Մկրտչեանի ձեռից վերցրին բողոքագիրն ու ժողովի արձանագրութիւնները և կուսակցութեան բերան թերթի միջոցով սկսեցին մեղադրել, որ հոգեւորականները դէմ են կեդրոնական ժողովի բացուելուն, թէպէտ բողոքագրի մէջ այդ չէր յիշուած, և կաթողիկոսը վարանման մէջ անհետեւանք թողեց նրանց խնդիրը, միայն յունիս 30-ին տուած կոնդակով բնորոշեց որ և՛ հոգեւորականներն ու կանաչքը, որպէս ծայն ունեցողներ կարող են մասնակցել ընտրութիւններին: Հոգեւորականութեան կողմից մի շարք բացատրութիւններ տուեց Կարապետ վարդապետը և հարցը փակուեց կուսակցական յաղթանակով, որպէս ծրագրել էր դիւանապետ Տանատ վարդապետը:

Սկսուեցան ընտրութիւններ, որին մասնակցեցին ա. դաշնակցութիւնը, բ. հայ-դեմոկրատները, (նախկին կադէտներ) և դ. պահպանողականները, իսկ սօցիալ դեմոկրատիան չմասնակցեց առարկելով թէ ժամանակ չունի մասնաւոր ազգայնական հարցով դբադուելու: Ընտրուած պատգամաւորների 90 տոկոսը դաշնակցական էին:

Ժողովը առաջին նիստ արեց օգոս. 4-ԵՐ. ԺՈՂՈ- 15-ին, իսկ 16-ին բացուեց պաշտօնա- 4Ի ՆԻՍՏԵՐԸ. պէս էշմիածնի նորակառույց հիւանդանոցում կաթողիկոսի նառով, որ լիշեցրեց «հեռու մը- նալ չափազանցութենէն, ժամանակը վատ է, հարկաւոր է խոհեմութիւն, որչափ կարելի է այնչափ խօսեցէք, յանդուգն գործեր չսկսէք...»: Ժողովի կողմից վեհափառին պատասխանեց Աւետիք Սահակ- եանը և այնուհետեւ նախագահ ընտրեցին Սիմէօն Զաւարեանցին:

Կեդրոնական ժողովը հակառակ իրեն տուած հրահանգների իրեն յայտարարեց սամմանադիր և դուրս գալով իր իրաւասութեան սահմաններից, օգոստոս 20-ի երեկոյեան նիստում ընդունած բանաձեւով առիթ տուեց երկփեղկման և ինչպէս հայ- դեմոկրատ 5 պատգամաւորները, այնպէս էլ 2 յառաջադիմականները հրաժարուեցան մասնակցելու ժողովին, որով մնացին միմիայն դաշնակցական պատգամաւորները և շարունակեցին նիստերը՝ ըննութեան ենթարկելով հերթական հարցերը, սակայն շուտով հասաւ ողորդ պրօկուրորի ականջը, որ փոխարքայի կողմից յայտարարուեց կաթողիկոսին, թէ կենդրոնական ժողովին անցնում է այն զծած սահման- 4ԵՐ. ԺՈՂՈ- 15-ին անցնում է այն զծած սահման- 4Ի ՓԱՍՏԵՐԸ. արի համար կաթողիկոսը թող- տուութիւն է ստացել և որ այդ անհա- ճելի է կառավարութեան: Սորան հետեւեց աւելի ուժեղ քայլը և օգոստոս 30-ին էշմիածնի գաւառա-

պետր փակելով ժողովը համոժայն Կովկասի փոխար-
քայի կարգադրութեան՝ պատգամաւորներէից ստորադրութիւն վերցրեց 24 ժամուայ ընթացքում հե-
ռանալ Էջմիածնից: Պատգամաւորները ստորագրելով
այդ պայմանաթուղթը՝ մի բողոքի մակագրութիւն
արին նրա վրայ: Միաժամանակ հետեւեց բարձրագոյն
նկատողութիւն այդ տեսակ ժողով թոյլատրելու
համար:

Ե

Վ Ե Ր Զ

Ե

1875
 1876
 1877
 1878
 1879
 1880
 1881
 1882
 1883
 1884
 1885
 1886
 1887
 1888
 1889
 1890
 1891
 1892
 1893
 1894
 1895
 1896
 1897
 1898
 1899
 1900

1901
 1902
 1903
 1904
 1905
 1906
 1907
 1908
 1909
 1910
 1911
 1912
 1913
 1914
 1915
 1916
 1917
 1918
 1919
 1920
 1921
 1922
 1923
 1924
 1925
 1926
 1927
 1928
 1929
 1930
 1931
 1932
 1933
 1934
 1935
 1936
 1937
 1938
 1939
 1940
 1941
 1942
 1943
 1944
 1945
 1946
 1947
 1948
 1949
 1950
 1951
 1952
 1953
 1954
 1955
 1956
 1957
 1958
 1959
 1960
 1961
 1962
 1963
 1964
 1965
 1966
 1967
 1968
 1969
 1970
 1971
 1972
 1973
 1974
 1975
 1976
 1977
 1978
 1979
 1980
 1981
 1982
 1983
 1984
 1985
 1986
 1987
 1988
 1989
 1990
 1991
 1992
 1993
 1994
 1995
 1996
 1997
 1998
 1999
 2000

Հայաստանի Ազգային գրա



NL0422505

16085